

ԱՌՈՂԵ

ՏԱՐԱՍՎՈՆԻ

ՏԱՐՏԱՐԵՆԸ



ՊԵՏՅՐԱՏ

1936



ԱՌՈՂԵ

ՏԱՐԱՍՍՈՆԻ

ՏԱՐՏԱՐԵՆԸ



ՊԵՏՅՐԱՏ  
1936

84 | 524.3628

17-68 | 17 жыл, 1/2.

~~17 серия и факты учета~~  
~~участков. 1957г.~~

|      |      |     |
|------|------|-----|
| 19.V | 28.V | 290 |
|------|------|-----|

|      |  |    |
|------|--|----|
| 7.IV |  | 26 |
|------|--|----|

|       |  |     |
|-------|--|-----|
| 21.IV |  | 233 |
|-------|--|-----|

933

52





2





2





84  
17-68

ԱՆՅՈՆԱ ԴՈՂԵ

ԱՅՈՒԿԱՅՍ Է 1961 թ.

# ՏԱՐԱՍԿՈՆՑԻ ՏԱՐՏԱՐԵՆԸ



6877  
3628

A 21438



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1937

Պատ. խմբագիր՝ Ա. Հ ա յ ր յ ա ն  
Տեխ. խմբ.՝ Հ. Կ ա ռ ա պ ե ս յ ա ն  
Սրբագրիչ՝ Ս. Շահրազյան

Հրատ. 3745. Գրավ. լիազոր Կ. 1106  
Պատվեր 691. Նիւմ 4000

Հանձնված է արտատրության 15 մայիսի 1936 թ.  
Ստորագրված է տպագրության 27 դեկտեմբերի 1936 թ.



ԱՌԱՋԻՆ ԴՐՎԱԳ

ՏԱՐԱՍԿՈՆՈՒՄ



## Բ Ա Ո Ւ Մ Բ Ի Պ Ա Ր Տ Ե Չ Ը

Իմ առաջին այցելութունը Տարասկոնցի Տարտարենին, վորպես անմոռանալի մի թվական մնացել և հիշողությանս մեջ-արդեն տասներկու թե տասներեք տարի յե անցել այն որից, բայց այժմ ել ավնպես պայծառ եմ հիշում այդ, վոր կարծես թե լերեկ յեղած լիներ: Անվեհեր Տարտարենն այն ժամանակ ապրում եր քաղաքի մուտքի մոտ Ավինյոնի ճանապարհի վրա — ձախ թեփլի լերրորդ տանը: Այդ մի փոքրիկ սիրուն վիլլա յեր ասրասկոնյան վոճով, առջևում պարտեզ, չետեվում պատըշ-գամբ, ճեփ-ճերմակ պատերով, կանաչ փեղկավոր լուսամուտնե-րով, խի դռան առաջ մի խումբ փոքրիկ սավոյարեն<sup>1)</sup> ամեն որ խաղ եյին անում կամ մրափում արևի տակ, գլուխը դրած իրենց կոշկաներկի արկղների վրա:

Դրսից ալդ տունը նշանավոր վոչինչ չուներ:

Մարդ յերբեք չեր կարող կարծել, թե այդ մեր հերոսի կացարանն և Սահայն, յերբ ներս ելինք մտնում, ս, ուրիշ բան եր, ուրիշ բան...

Նկուղից մինչև կտուրն ամբողջ տունը հերոսական կերպարանք ուներ, մինչև անգամ պարտեզը...

Ո՛, Տարտարենի պարտեզի նմանը լերկու հատ ել չեք գանի ամբողջ Յեփրոպայում: Ղոչ մի տեղական ծառ, վոչ մի ֆրանսիական ծաղիկ, միայն և միայն արևադարձային եկզոտիկ բույսեր, խեփի ծառեր, դդմենիներ, բամբակենիներ, կոկոսի, բանանի ծառեր, հնդիկ կեռասենիներ, արմավենիներ, մի բաղբար, հնդիկ թղենիներ, կակտուսներ, — այնպես վոր մարդ իրեն կարծում եր կենտրոնական Աֆրիկայի խորքե-

1) Սավոյար — սաղոյացի, այստեղ նշանակում և թափառաղջիկ յերեկստ  
Մ. խ.



Առանձնասենյակի մեջտեղում դրված էր մի կլոր սեղան. սեղանի վրա մի շիշ ոռմ, մի տաճկական ծխախոտի քսակ, «Նա-վապետ Կուկի ճանապարհորդությունները», Կուկերի յեզ Գուս-տավ Եմարի վեպերը, դանազան պատմություններ արջերի, փղերի և բազենների վորսորդության մասին և այլն: Վերջապես այդ սեղանի առջ նստած էր մի մարդ — քառասուն - քառասունհինգ տարեկան, կարճահասակ, հաստլիկ, լայն թիկունքով, կարմիր թշերով, հագին միայն շապիկ և բրդյա վարտիկ, խիտ ու կարճ միրուքով և վառվռուն աչքերով: Մի ձեռքում նա բռնել էր մի դիրք, իսկ մյուս ձեռքով ճռճում էր մի ահագին ծխամորճ յերկաթյա կափարիչով, և կարգալով, ով զիտե ինչ ահուկի վորսորդական մի պատմութուն, նա իր ներքեի շրթունքը դեպի առջ յերկարացնելով, մի այնպիսի սոսկալի ծամածուծութուն էր անում, վոր տարասկոնցի քաղքենու նրա բարեմիտ դեմքին տալիս էր պարզամիտ ահավորության այն քնույթը, վոր տիրում էր ամբողջ տան մեջ:

Այդ մարդը Տարտարենն էր, Տարասկոնցի Տարտարենը, անվեհեր, մեծ և աննման Տարասկոնցի Տարտարենը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՅԵՐՋԱՆԻԿ ՏԱՐԱՍԿՈՆ

### ՔԱՂԱՔԻ ՎՐԱ

#### ԳԼԽԱՐԿԻ ՎՈՐՍՈՐԴՆԵՐԸ

Այն ժամանակ, վորի մասին խոսում եմ յես, Տարասկոնցի Տարտարենը դեռևս այն Տարտարենը չէր, ինչ վոր այսօր է— Տարասկոնցի մեծ Տարտարենը, վորն այնքան ժողովրդական է ամբողջ հարավային Ֆրանսիայում: Սակայն նույնիսկ այդ ժամանակն էլ նա արդեն մի թագավոր էր Տարասկոնում:

Տեսնենք թե ինչպես հասավ նա այդ բարձր աստիճանին:

Ամենից առաջ պետք է լավ իմացած լինենք, վոր բոլոր տարասկոնցիները սկսած մեծից մինչև փոքր, ամենքն էլ վորսորդներ են: Վորսորդութունը տարասկոնցիների սիրտն ու հոգին և սկսած այն առասպելական ժամանակներից, յերբ Տարասկ անունով հրեշն ավերներ էր գործում այդ քաղաքի ճահճուաներում, և յերբ տարասկոնցիները ստիպված էյին անդա-

դար արշավանքի դուրս գալ նրա դեմ: Ինչպես տեսնում եք, այս բանը շատ հին է:

Այսպես ուրեմն, ամեն կիրակի առավոտ ամբողջ Տարասկոնը գենք եր վերցնում և դուրս գալիս քաղաքից՝ հրացանն ուսին, պարկը մեջքին, վորսորդական փողերի և վորսորդական շների հաջոցների աղմկալի ընկերակցությամբ: Գեղեցիկ և սքանչելի յեր այդ տեսարանը... Միայն դժբախտաբար Տարասկոնում վորսի վոչ մի կենդանի չկար, դեղի համար մի հատ ել չեյիք կարող գտնել:

Ինչքան ել վոր անբան լինեն կենդանիները, այնուամենայնիվ վերջ ի վերջո նրանք ել են խելոքանում:

Ամբողջ Տարասկոնի շրջակայքում հինգ մղոն տարածությամբ կենդանիների վորջերը դատարկ են, թռչնի բները լքված: Վոչ մի հատ լոր, վոչ մի հատ կեռնեխ, վոչ մի ճագարիկ, վոչ նույնիսկ ամենափոքր մի ծիտ:

Սակայն վորքան գրավիչ են այդ գեղազվարճ բլրակները, վորոնց վրա տարածված է մրտենիների, խնկենիների և անուշահոտ նարդոսների բույրը, խաղողի գեղեցիկ վորթերը աստիճան առ աստիճան ծածկում են Ռոնա գետի ափերը. սատանան տանի, վորքան քաղցրահամ են նրանց վողկույզների լիքը հատիկները... Այն, բայց չնայելով այդ ամենին, Տարասկոնի համբավը շատ վատ է թե չորքոտանիների և թե թևավորների փոքրիկ աշխարհում: Նույնիսկ չվող թռչուններն իրենց չվացուցակում մի ահագին խաչ են դրել Տարասկոնի անվան դիմաց: Յեվ, յերբ վալրի բաղերը յերկայն յեռանկլունիներ կազմած, իջնում են դեպի Կամարգ կղզին, հենց վոր հեռվից նկատում են քաղաքի զանգակատները, յերամի առաջնորդն իսկույն խիստ բարձր ձայնով կանչում է — «Ահա Տարասկոնը, ահա Տարասկոնը»... և ամբողջ յերամը մեկ անգամից թեքում է ճանապարհը:

Մի խոսքով վորսի կենդանիներից ամբողջ յերկրում միայն մի հատիկ ծեր նապաստակ է մնացել, վոր չգիտես ինչ հըրաջքով կարողացել է խուսափել տարասկոնցիների կազմակերպած կոտորածից և համառորեն շարունակում է ապրել այդ յերկրում: Այդ նապաստակը հայտնի չե ամբողջ Տարասկոնին. մինչև անգամ առանձին անուռն են տվել նրան — ձե պը նթաց: Ամենքը գիտեն, վոր այդ նապաստակն ապրում է պրոնպարի կալվածում և, — չմոռանանք հարևանցի կերպով հի-

շել, հենց այս պատճառով ել այդ կարգածի գինը կրկնապատկ-  
վել և լեռապատկվել ե, — սակայն մինչև այսօր դեռ վոչ վոք  
չի կարողացել բռնել նրան:

Այսօրվա օրը հազիվ յերկու կամ յերեք համառներ գտնը-  
վին, վորոնք դեռևս ձեռք չեն քաշել այդ նապաստակից: Մյուս-  
ները վաղուց արդեն հույսը կտրել են. այնպես վոր ճեպըն-  
թացն ալժամ մի տեսակ տեղական սնահավատության առար-  
կա լե դարձել տարասկոնցիների համար, չնայած վոր տարաս-  
կոնցիներն առհասարակ սնահավատ ժողովուրդ չեն և խորո-  
ված ծիծեռնակ ուտում են, յերբ ձեռք են գցում:

— Շատ լավ, կասեք դուք, յեթե վորսի կենդանիներ չկան,  
հապա ել ի՞նչ են անում Տարասկոնի վորսորդները ամեն կերա-  
կի:

Ի՞նչ են անում:

Ահա թե ինչ են անում: Դուրս են գալիս դաշտը քաղաքից  
լերկու-յերեք մղոն հեռու. բաժանվելով փոքրիկ խմբերի, հինգ  
հոգի այստեղ, վեց հոգի այնտեղ, նստում կամ թիկն են տալիս  
մի վորևէ ջրհորի, քանդված պատի կամ ձիթենու շվաքի տակ,  
բաց են անում իրենց վորսորդական պալուսակները, հանում  
են մի-մի կտոր լավ տապակած յեզան միս, մի քանի գլուխ  
սոխ, մի քանի հատ յերշիկ, յերբեմն ել տեսակ-տեսակ փոքրիկ  
ձկներ և սկսում են մի անվերջանալի նախաճաշ: Ռոնայի հրա-  
շալի գինին ել իհարկե անպակաս ե, մեկն այն գինիներից, վո-  
րոնք ուրախացնում են մարդու սիրտը և յերգել տալիս: Վեր-  
ջապես լավ կազդուրվելուց հետո վեր են կենում, շներին կան-  
չում են, հրացանները լցնում և սկսում են վորսար: Այսինքն  
ալդ պարոններից ամեն մեկն իր գլխարկը վերցնում ե, ամբողջ  
ուժով նետում դեպի վեր և ողի մեջ կրակում — հինգ, վեց  
կամ յերկու կալիբրի մանր գնդակներով, նայած պայմանին:

Ով ամենից շատ նշանին խփի, նա ել ընտրվում ե վոր-  
սի թաղավոր և յերեկոյան հաղթական կերպով մտնում ե Տա-  
րասկոն շների հաջոցով և վորերի աղաղակով, ծակծկված գըլ-  
խարկը հրացանի ծայրին ցցած:

Ավելորդ և անշուշտ ձեզ ասել, վոր քաղաքում գլխարկի  
մեծ առևտուր կա, կան նույնիսկ գլխարկավաճառներ, վորոնք  
ծախում են նախապես ծակծկած և պատառոտած գլխարկներ խակ  
վորսորդների համար, սակայն դեղազործ Բեդլուքեն ե միայն,

վոր ինչպես հայտնի յե, գնում ե գրանցից: Դա անպատվու-  
թյունն ե:

Դլխարկի վորսորդության մեջ Տարասկոնցի Տարտարենը  
իր մրցակիցը չուներ: Ամեն կիրակի առավոտ նա տնից դուրս  
ե գալիս մի բոլորովին նոր գլխարկ գլխին և ամեն կիրակի  
յերեկոյան վերադառնում ե գլխարկից մնացած մի փոքրիկ լա-  
թով: Բառքարի համեստ տան ամբողջ վերնահարկը լիքն եր  
այդ փառավոր հաղթանակի նշաններով: Դրա համար ել բոլոր  
տարասկոնցիները նրան համարում եյին իրենց պետը, և վորով-  
հետև Տարտարենը լավ տեղյակ եր վորսորդության բոլոր կա-  
նոններին, կարգացել եր ամեն տեսակի վորսորդության վերա-  
բերյալ բոլոր ձեռնարկները, բոլոր ուսումնասիրությունները,  
սկսած գլխարկի վորսորդությունից մինչև Բիրմանյան վագրի  
վորսորդությունը, ուստի և այդ պարոնները միաձայն ընտրել  
եյին նրան դատավոր և իրավարար իրենց վեճերի ժախանակ:

Ամեն որ ժամի յերեքից մինչև չորսը զինավաճառ կոստե-  
կալդի խանութում կարելի յե տեսնել մի հաստլիկ, ծանրախոհ  
մարդ, ծխամորճը բերանին, կաշեպատ թիկնաթոռի վրա բազ-  
մած և շրջապատված գլխարկի վորսորդներով, վորոնք վոտքի  
վրա կանգնած աղմկալի վիճում եյին: Այդ մարդը Տարասկոնցի  
Տարտարենն ե, վորը դատաստան ե կտրում—իբրև Ներքովթ<sup>1</sup>)  
և Սողոմոն իմաստուն միաժամանակ:

## ՎԱՉ, ՎԱՉ, ՎԱՉ.—ՅԵՐՉԱՆԻԿ ՏԱՐԱՍԿՈՆ ՔԱՂԱՔԻ ՎՐԱ ՆԵՏՎԱՄ ԱԿՆԱՐԿԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բացի վորսորդությունից քաջասիրտ տարասկոնցիները  
մի ուրիշ բանի ել մեծ սեր ունեյին— այն ե, ոտմանաների.  
անհավատալի քանակությամբ ոտմանաներ են սպառվում այս  
փոքրիկ լեռկրում: Աշխարհի յերեսին ինչքան հնացած ու մո-  
ռացված լերգեր կան, այդ բոլորը դուք կգտնեք Տարասկոնում,  
նրանք այստեղ դեռևս թարմ են մնացել: Ամեն մի ընտանիք  
ունի սեփական ոտմանսը և ամենքը գիտեն թե վիճ յերգը վիճ  
ընտանիքինն ե: Որինակի համար ամենքը գիտեն, վոր դեղա-  
վաճառ Բեզյուքեյի ոտմանսը հետևյալն ե.—

1) Ներքովթ կամ Նեմորդ— Պալդեայի առասպելական Թագավորը, վորը  
յեղել ե քաջ և ճարտիկ զորորդ: Մանր. խմբ.





Ո՛ր մ պայծառ աստղ պատեսելի յես ինձ համար...

*Զինավաճառ Կոստեկալդի ոտմանն է՝*

Կուղեցնալի՞ր գնալ ճյուղակների աշխարհը...

*Իսկ քաղաքային հարկահավաքին՝*

Յերես յինելի անսեսացնելի, ինձ մարդ չեր սեսնի...

(Յերգիծական յերգ)

Յե՛վ այդպես եր ամբողջ Տարասկոնը, Շարաթը՝ չերկու թե յերեք անգամ հավաքվում են իրար մոտ և ամեն մեկն սկսում է իր ոտմանսը յերգել:

Զարմանալին այն է, վոր միշտ միևնույն յերգերն են յերգվում և վաղ ժամանակներից սկսած քաջ տարասկոնցիները յերբեք չեն մտածել իրենց ոտմանները փոխելու մասին: Յերգերը ժառանգաբար անցնում են սերնդից-սերունդ և մնում անփոփոխ վորպես սրբութիւն: Մեկի մտքովն անգամ չի անցնում գոնե զանազանութլան համար փոխել իր յերգը մեկ ուրիշի յերգի հետ: Այսպես որինակ, յերբեք Կոստեկալդի ընտանիքի մտքով չեր անցնում յերգել Բեզյուքեյի ընտանիքի յերգը, և վոչ ել Բեզյուքեյի ընտանիքն է մտածում Կոստեկալդի յերգը բերան առնել:

Անշուշտ դուք պիտի յենթադրեք, վոր նրանք շատ լավ պիտի իմանային այդ բոլոր ոտմանները, քառասուն տարի շարունակ յերգելով իրար ներկայութլամբ: Բայց վո՛չ, ամեն մեկը պիտի պահում է իր ոտմանսը և ամենքն ել գոհ են:

Յերգեցողութլյան մեջ ել, ինչպես և գլխարկի վորսորդութլյան մեջ, առաջին տեղը բռնում եր Տարտարենը: Նրա առավելութլյունն այն եր, վոր նա ինքն իր սեփական ոտմանսը չուներ, այլ յերգում եր բոլոր յերգերն ել:

Բողճրն ել...

Միայն թե մտրդ կասեմ, չեթե կարողանաք նրա բերանը բաց անել ու յերգել տալ. վաղուց արդեն սալոնական հաջողութլյուններից ձանձրացած մեր տարասկոնցի հերոսն ավելի լավ է համարում խորասուզվել վորսորդական գրքերի ընթերցանութլյան մեջ և կամ ժամանակ անցկացնել քաղաքային ա-

կումբում, քան թե գավառական դաշնամուրը առաջ կանգնած լերկու տարասկոնյան մոմի արանքում քաղցր ումանսներ լերգել: Այդ յերաժշտական հանդեսները նա իր արժանապատվությունից ցածր եր համարում...

Բայց և այնպես յերբեմն-յերբեմն, յերբ յերաժշտական յերեկուկթներ ելին լինում դեղագործ Բեզյուլքեյի մոտ, նա իբր թե պատահմամբ մտնում եր դեղատուն և յերկար չեմ ու չում անելուց հետո վերջապես համաձայնում եր տիկին Բեզյուլքեյի, հետ միասին «Ռոբերտ Դեվի» նշանավոր դուետը յերգել... Ո՛վ չի լսել այդ, նա առհասարակ վոչինչ չի լսել... Յեթե յես հարյուր տարի ել ապրելու լինեմ, դարձյալ կենդանի պիտի լինի իմ առաջ մեծ Տարտարենի այդ պատկերը. ահա հանդիսավոր քայլերով մոտենում ե նա դաշնամուրին, ահա հենվում ե նա իր բազուկների վրա, անում ե իր սովորական ծամածուռությունը և դեղատան ցուցափեղկերում փայլող խոշոր սրվակների կանաչավուն ցոլքերի տակ փորձում ե իր բարեհամբույր դեմքին տալ Ռոբերտ Դեվի ահռելի ու դժոխային արտահայտությունը:

Հաղիվ նա կանգնում ե դաշնամուրի առաջ, և ահա մի սարսուռ ե անցնում ամբողջ դահլիճով. ամենքը զգում են, վոր ըոպեն հանդիսավոր ե և ահա մի շատ նշանավոր բան պիտի կատարվի... Այն ժամանակ կարճ լուռթյունից հետո տիկին Բեզյուլքեն սկսում ե նվագել ու լերգել.

Ռոբերտ, վոքիմ յես սիրում եմ,  
Սիրսս ու հոգիս ցվիրում եմ.  
Անգուր, ցա՛յիր ցավերս սե՛ս (կրկին)  
Ոն, խղճա ինձ,  
Խղճա յե՛վ քեզ:

Տիկինը ցածր ձայնով ավելացնում եր. «Տարտարեն, սկսեցեք», իսկ Տարասկոնցի Տարտարենը բազուկը դեպի առաջ պարզած, բռունցքները սեղմած, ունեզները դողդոջուն, ահռելի ձայնով լերեք անգամ վորոտում եր. «Վոչ, վոչ, վոչ», վոր նրա հարավային արտասանությամբ դուրս եր գալիս «վաչ, վաչ, վաչ» և նրա ահռելի ձայնից դաշնամուրի լարերը թրթռում եին, վորից հետո տիկին Բեզյուլքեն նորից կրկնում եր.



Ո՛հ, խղնա ինձ,  
Խղնա յեվ քեզ...

— «Վահ, վահ, վահ» — դռում եր Տարտարենն ել ավելի  
աւժով, և դրանով ել վերջանում եր նշանավոր դուետը:

Ինչպես տեսնում եք, յերգածը մեծ բան չեւր, բայց այն-  
պես հաջող եր կատարումը, այնքան բնորոշ եր միմիկան,  
այնպես դիվական, վոր ամենքն ահից սարսուռւմ եյին և չորս-  
հինգ անգամ անընդհատ ստիպում եյին նրան կրկնել իր վո-  
րոտալից «վահ, վահ»-ը:

Այնուհետև Տարտարենը ճակատը սրբում եր, սիրալիւր  
ժպտով տիկիններին, տղամարդկանց աչքով անում և հաղթա-  
կան կերպով ուղեւորվում դեպի ահումբը: «Բեղյուքենների մոտ  
եյի, — ասում եր նա այնտեղ անհողությամբ, — դարձել ստի-  
պեցին «Ռորերտ Դեվի» դուետը լերդերը»:

Բայց ամենից գլխավորն այն է, վոր ինքն ել հավատում  
եր իր սասածին...

### Ն Ր Ա Ն Ք

Ահա այդ բաղմապիտի տաղանդների շնորհիվ եր, վոր  
Տարասկոնցի Տարտարենը այսպիսի բարձր դիրք եր ստացել  
ամբողջ քաղաքում:

Անտարակույս, նա կարողացել էր միանգամայն գրավել ամենքի սիրտը:

Տարասկոնուս բանակն ամբողջապես նրա կողմն էր: Հանգերձանքի պաշտոնաթող կապիտան քաջահաղթ հրամանատար Բրավիդան նրա մասին ասում էր. «Ա՛յ, տղամարդ եմ ասել», և պետք է լենթադրել, վոր կապիտանը լավ պիտի ճանաչեր «տղամարդկանց», իր որում նրանցից շատերին հանգերձանք մատակարարելով:

Դատարանական կազմը Տարտարենի կողմն էր: Մերուսի նախագահ Լադըվեզը դատարանի նիստում յերկու թե յերեք անգամ նրա մասին խոսելիս ասել էր.

— Այդ մարդը խարակտեր ունի:

Վերջապես ժողովուրդն էլ Տարտարենի կողմն էր: Նրա լայն թիկունքը, նրա հպարտ քայլվածքը, նրա ամբողջ կերպարանքը, վորով նա նմանվում էր մարտական նժույգի, նրա հերոսական համբավը, վորը չգիտես թե վորտեղից էր ծագել և վերջապես այն պղնձադրամներն ու ապտակները, վոր նա բաժանում էր իր դռանը թրեմվ լեկող փոքրիկ կոշիկ սրբողներին, այդ ամենը նրան դարձրել էլին մի տեսակ տեղական լորդ Մեյմուր, տեղական փոքրիկ թագավոր: Կիրակի յերեկոները, յերբ նա իր վորսորդական բաճկոնակի մեջ սեղմված և գլխարկի գզգզված կտորը հրացանի ծալրին տնկած, վորսից վերադառնում էր քաղաք, Ռոնայի նավահանգստի բեռնակիրները խորին հարգանքով գլուխ եյին տալիս նրան և աչքի տակով իրար ցույց տալով նրա թեմերի հաստ մկանները հիացմունքով փսփսում եյին.

— «Ա՛յ, ուժ եմ ասել, մարդը կրկնակի մկաններ ունի»:

Կեկնազի մկա՛ններ...

Միայն Տարասկոնուս կարելի յե այդ տեսակ բան լսել:

Յեմ սակայն չնայած այդ ամենին, չնայած իր բաղամակողմանի շնորհքներին, չնայած իր կրկնակի մկաններին և վերջապես ժողովրդի ընդհանուր համակրութլանը, քաջ հրամանատար Բրավիդայի անգնահատելի հարգանքին, այնուամենայնիվ Տարտարենը յերջանիկ չէր. այդ փոքրիկ քաղաքը նրան շատ նեղ էր թվում. նա ճնշվում, խեղդվում էր այնտեղ: Տարասկոնի մեծ դավակը ձանձրանում էր Տարասկոնում: Բանն այն է, վոր Տարտարենի հերոսական հոգին, նրա արկածախնդիր բնավորութլունը, վոր միշտ ճակատամարտեր, պամպասներում

արշավանքներ, վտանգավոր վորսորդութիւններ, ավազոտ ա-  
նապատներ, փոթորիկներ ու տայֆուններ եր յերազում, չե-  
ր կարող գոհանալ այնպիսի չնչին բաներով, ինչպես կիրակնորյա  
գլխարկի վորսորդութիւնը և կամ զինավաճառ Կոստեկալդի  
խանութիւնում դատաստան կտրելը: Խեղճ մեծ մարդ, այդ տեսակ  
կյանքը վերջ ի վերջո կարող եր մաշել, հյուժել նրան:

Չուր եր նա աշխատում հորիզոնը լայնացնելու, կամ  
տաղտկալի ահումբը և շուկայի հրապարակը մոռանալու համար  
շրջապատել իրեն բաղբաբով և Աֆրիկայի ալլ բույսերով. զուր  
եր նա դարսում զենք-զենքի վրա, մալայան դաշույնը մա-  
լայան դաշույնի վրա. զուր եր նա անմահ Դոն Կիխոտի նման  
իր գլուխը լցնում վիպական գրքերի ընթերցանությամբ կտրը-  
վելու համար անողոք իրականութիւնից... Այլնոյ, այդ ամենը  
վոչ միայն չեր հագեցնում նրա արկածախնդրութեան ծարավը,  
ալլ ընդհակառակն ավելի բորբոքում եր: Այդ զենքերի տեսքը  
մշտապես նրան պահում եր գրգռված և դազազած վիճակում:  
Այդ հրացանները, նետերը, լասոնները աղաղակում եյին. «Կռիվ,  
կռիվ»: Նրա բաղբաբի ճյուղերի մեջ փչում եր մեծ ճանապարհ-  
հորդութիւնների քամին և չար խորհուրդներ փսփսում նրա  
ականջին: Մնացածն էլ լրացնում եյին Գուստավ Եմարը և  
Ֆենիմոր Կուպերը<sup>1)</sup>:

Ո, քանի՜-քանի անգամ ամառվա խեղդող կեսօրից հետո,  
չերր նա, լայն թրերով շրջապատված մենակ նստած կարդում  
եր, մոռնալով վեր և թուել անգից, գիրքը մի կողմ շարտել և  
վազել դեպի պատը՝ այնտեղից ցած բերելու զենքերի ժողովա-  
ծուն:

Խեղճ մարդ. նա մոռանում եր, վոր Տարասկոնուսն և, իր  
տանը նստած, գլուխը թաշկինակով փաթաթած, միայն վար-  
տիկով: Իր կարգացածը նա խսկուչն ուղղում եր գործադրել և  
ինքն իր սեփական ձայնով վողկորված, կացին կամ մի սոմա-  
հալի ճոճելով, աղաղակում եր.


— « Հապա, թող մի գան նրանք »:

Նրանք. բայց ովքեր են նրանք:

Տարտարենն ինքն էլ լավ չըխտեր այդ... Նրանք — դա  
այն ամենն և, ինչ հարձակվում և, այն ամենը, ինչ կուլում և,  
կծում, չանկուում, այն ամենը, ինչ քերթում և, ինչ վոռ-  
նում և, մոռնում և... Ահա թե ովքեր եյին նրանք. Սիուկա

1) Արկածալից վեպերի հեղինակներ: Մանոբ. խմբ.

ցեղի հնդիկը, վոր պարում ե ուզմական սյունին կապված  
 թշվառ սպիտակամորթի շուրջը: Ապառաժոտ լեռների գորշ արջը,  
 վոր արյունոտ լեզվով ինքն իրեն լիզում ե ու որորվում. ա-  
 նապատների տուարեգը, Մալայան կղզիների ծովահենը, Աբրուց-  
 լան կիրճերի ավազակը, — դրանք եյին նրանք. այսինքն այն  
 ամենը, ինչ նշանակում ե պատերազմ, ճանապարհորդութուն,  
 արկածներ և փառք:



Բայց ավանդ, անվեհեր Տարասկոնցին զուր եր նրանց կան-  
 չում, զուր եր նրանց մարտակոչ նետում, նրանք չեյին գա-  
 լիս ու չեյին յերևում: Յեվ վճռաեղից կամ ինչձև նրանք պի-  
 տի գային Տարասկոն:

Մակաչն Տարտարենն ամեն ժամանակ նրանց սպասում  
 եր, սպասում եր մանավանդ լերեկոյան դեմ ակումբ զնալիս:

Տաճարական ասպետը, վորը պատրաստվում է գրոհ տալ նրան պաշտոնող անհավատների վրա, չինական վագրը, վորը կովի չե պատրաստվում, կոմանչ ցեղի ռազմիկը, վորը բռնում է պատերազմի ուղին, — այս բոլորը վոչինչ է համեմատած Տարասկոնցի Տարտարենի հետ, յերբ նա վոտքից մինչև գլուխ սպառազինվում էր ակումբ դնալու համար յերեկոյան ժամ իննիս, զինվորական հավաքի շեփոքից մի ժամ հետ:

Ռազմական տազնմայ, — ինչպես ասում են նավաստիները:

Ձախ ձեռքում Տարտարենը բռնում էր սրածայր յերկաթլա լախտ, աջ ձեռքում՝ մի դաշունավոր ձեռնափայտ, ձախ գրպանում մի կասեփտ, աջում — մի ատրճանակ. կրծքի վրա, բաճկոնակի և շապկի արանքում՝ մի մալայական դանակ: Թուխավոր նետերին նա ձեռք չէր տալիս, վորովհետև նրանք կըռվի անազնիվ միջոցներ են...

Տնից դուրս գալուց առաջ նա իր սենյակում մի քանի բոպե վարժություն էր անում, նշան էր բռնում, մարմնամարդական դանազան շարժումներ անում, հետո կեռ բանալիներ գրպանը դնելով, ծանրորեն ու հանդարտ քալլերով անցնում էր պարտեզից: Անգլիացու նման, պարոններ, անգլիացու նըման, սառնասրտությունը քաջության նշան է: Հասնելով պարտեզի ծայրը, նա ձեռքը տանում էր յերկաթյա ծանր դռանը և այնպես հանկարծակի ու ախպիսի ուժով բաց էր անում դուռը, վոր դուռը կաշտում էր պատին: Այ, լեթե նրանք դռան յետեվում լինեյին, կարճը եք յերեակայել նրանց վիճակը: Բայց դժբախտաբար վոչ մի անգամ նրանք ախտեղ չեյին լինում:


Դուռը բացվելուց հետո Տարտարենը դուրս էր գալիս, սուր հայացք էր ձգում աջ ու ձախ, հետո նույն արագությամբ դուռը կողպում էր և ճանապարհ ընկնում:

Ավինյոնի ճանապարհի վրա կատու անգամ չի յերևում: Դոները փակ, լուսամուտները մուխ: Շուրջը խավար է: Յերբնի հեռվում առկայծում են փողոցի լապտերները Ռոնա գետի մշուշի մեջ:

Հոլարտ և հանդարտ քալլում էր Տարասկոնցի Տարտարենը գիշերվա խավարի մեջ. կավում կլին նրա ներդաշնակ քալլերը և ձեռնափայտի հարվածները, վորի յերկաթե ծայրը կայծեր էր հանում փողոցի քարերից: Լիներ բուլվար, լայն

պողոտա, թե նեղ փողոց, նա միշտ ճանապարհի մեջտեղով եր քայլում: Նախագգուշության սքանչելի միջոց, վոր հնարա- վորությունն է տալիս հեռվից տեսնելու վտանգը, և մանավանդ խուսափելու այն բոլորից, ինչ յերեկոները յերբեմն թափվում է լուսամուտաներից Տարասկոնի փողոցներում: Նրա այս խոհեմու- թյունը տեսնելով, չկարծեք, վոր Տարտարենը վախենում եր... վոչ, նա պարզապես զգուշանում եր:

Լավագուշն ապացույցը, վոր Տարտարենն անյերկչուղ եր, այն է, վոր փոխանակ լայն, լուսավոր ծառուղիով ակումբ գը- նալու, միշտ ընտրում եր ամենանեղ և ամենամութ փողոցնե- րը, վորոնց վերջում յերևում են գետի չարագուշակ ալիքները



և այդպիսով ճանապարհը յերկարացնում համարյա ամբողջ քաղաքի միջով: Խեղճ մարդը միշտ սպասում եր, վոր ահա այդ ծուռ փողոցներից մեկի անկյունում, գիշերվա խավարի միջից նրան ք յետևից հարձակում կգործեն իր վրա: Գլուխս կտամ, վոր նրանցից վոչ մեկը վողջ չեր պրծնի նրա ձեռքից, բայց անի ու տես, վոր բախտը յերբեք և վոչ մի անգամ չեր արժանացնում նրան իր ցանկացած հանդիպման: Ամբողջ ճա-

նապարհի վրա մի շուն, մի հարբած մարդ անգամ չեր հանդիպում, վռչինչ...

Սակայն յերբեմն պատահում եր կեղծ տաղնապ: Հանկարծ նրա ականջին դիպչում եյին քայլերի և խոսակցութեան խուլ ձայներ... «Ուշադրութուն», — ասում եր Տարտարենն ինքն իրեն, կանչ աններով, նայելով խավարի մեջ, նա կռանում ու ականջը կայնում եր գետնին, հնդիկների սովորութեան համաձայն: Քայլերն ավելի ու ավելի մոտենում են. խոսակցութեան ձայներն ավելի վորոշակի յեն դառնում... այլևս կասկած չի կարող լինել, վոր նրանք մոտենում են, վոր յեկողները նրանք են... Տարտարենն արդեն աչքերը կրակ կտրած, հեմպարով, հովազի նման ինքն իր վրա կծկվում և, պատրաստվելով խղիանալ, արձակելով իր ոտգմի աղաղակը... յերբ մեկ ել հանկարծ խավարի միջից տարասկոնցու մեղմ ու բարի մի ձայն կանչում եր.

— Եհե, ալզ դն յես, Տարտարեն... Բարիկուն, Տարտարեն:

Անեծք: Բանից դուրս եր գալիս, վոր յեկողը դեղավաճառ Բեդյուքեն և, վորն իր ընտանիքով վերադառնում եր Կոստեկալի մոտից, վորտեղ նրանք յերգել եյին իրենցը:

— Բարի յերեկո, բարի յերեկո, — մրթմրթում եր Տարտարենը կատաղած, վոր սխալվել և, և ձեռնափայտը բարձր բռնած կորչում եր գիշերային մթութեան մեջ:

Հասնելով ակումբի դռան մոտ, անվեհեր Տարասկոնցին, դեռ մի քանի բոլե ներս չեր մտնում, այլ դռան առաջ անց ու դարձ եր անում... Վեհջապետ հողնած նրանց սպասելուց և համոզվելով, վոր նրանք այլևս չեն յերեկա, նա մի վերջին սուր ակնարկ եր ձգում մթութեան մեջ և բարկացած մրմընջում. «վռչինչ... վռչինչ... յերբեք վռչինչ»:

Ալզ սսելով քաջ Տարասկոնցին մտնում եր ներս և սկսում եր իր սովորական թղթախաղը հրամանատարի հետ:

## ՅԵՐԿՈՒ ՏԱՐՏԱՐԵՆՆԵՐԸ

Բայց ինչպես եր յերգել, սատանան տանի, վոր արկածների սիրահար, ճանապարհորդութունների և վտանգների համար հոգի տվող Տարասկոնցի Տարտարենը վռչ մի անգամ վոտքը դուրս չեր դրել Տարասկոնցի:

Փաստն այն եր, վոր մինչև քառասունհինգ տարեկան հասակը մեր անվեհեր Տարասկոնցին իր ծննդավայրից դուրս,

վոր մի տեղ դեռ չեր գիշերել: Նա մինչև անգամ չեր կատարել նշանավոր ճանապարհորդութունը դեպի Մարսել, թեև Մարսել գնալը մի տեսակ պարտք է ամեն մի պրովանսացու համար: Նա հագիվ է ճանաչում Բոկերը, թեև Բոկեր գնալու համար հարկավոր է միայն մի կամուրջ անցնել, բայց այդ անիծած կամուրջն էլ այնքան յերկար է և միևնույն ժամանակ այնքան խախուտ, գետն էլ այդ տեղում այնքան լալն ու խոր է, վոր գիտե՞ք... Տարտարենն ավելի լավ եր համարում ման գալ հաստատ հողի վրա:

Բանն այն է, պետք է խոստովանվել, վոր մեր հերոսի մեջ ապրում էյին յերկու իրարից բոլորովին տարբեր բնավորութուններ: «Յես զգում եմ իմ մեջ յերկու անձնավորութուն» —ասել է յեկեղեցու հայրերից չգիտեմ վոր մեկը: Նույնը կարող եր ասել նաև Տարտարենը, վորը կրում եր իր մեջ յերկու ասպետ Դոն-Կիխոտի վոգին, նույն ասպետական ձրգտումները, նույն հերոսական իդեալը, նրա խելագարութան հասնող վիպական նույն արկածասիրութունը: Դժբախտաբար նա չուներ հուշակավոր հիդալգոյի նիհար և վոսկրոտ կազմվածքը, այդ յերևութական մարմինը, վորի դեմ անգոր էյին նյութական կյանքի հարվածները, վոր կարող եր քսան գիշեր առանց զրահ հանելու պառկել չոր գետնի վրա և քառասուն ութ ժամ անցկացնել միայն մի բուռը բրինձով... Տարտարենն ընդհակառակը բոլորովին այլ կազմվածքի տեր մարդ էր. նրա մարմինը շատ գեր եր, շատ ծանր, շատ զգալուն, շատ փափուկ ու քնքուշ, սովորած քաղքենու պահանջներին և ախորժակներին: մի խոսքով Սանչո-Պանսայի նման հաստ փորով և կարլիկ վոտներով:

Դոն-Կիխոտը և Սանչո-Պանսան միևնույն անձնավորության մեջ. կարող էք յերևակայել, թե վորքան դժվար պետք է լիներ նրանց համար ապրել միևնույն հարկի տակ: Ի՞նչ ճակատամարտեր, ինչպիսի յերկպառկութուն: Ահա մի օրհալոգ, վոր արժանի յե Լուկիանի կամ Սենտ-Եվրեմոնի<sup>1)</sup> գրիչին, մի խոսակցութուն, վոր տեղի յե ունենում Տարտարեն-Կիխոտի և Տարտարեն-Սանչոյի միջև:

Տ ա Ր Տ ա Ր Ե Յ - Կ ի խ ո ս ք վոգեվորված Գոլոստավ Եմարի պատմութուններով, գոռում եր. «Յես գնում եմ»:

1) Լուկիան — հին հռոմեական յերգիծաբան. Սենտ-Եվրեմոն ֆրանսիացի գրող (1610—1703): Մ. Խ.

Տ ա Ր Տ ա Ր Ե Ն - Ս ա ն չ ո ն, մտածելով միայն հողացավի մասին, պատասխանում էր. «Յես մնում եմ»:

Տ ա Ր Տ ա Ր Ե Ն - Կ ի խ ո ս ք (սաստիկ վողկորված).— Տարտարեն, ծածկիր ճակատդ փառքի պսակով:

Տ ա Ր Տ ա Ր Ե Ն - Ս ա ն չ ո ն (բոլորովին հանդարտ).— Տարտարեն, ծածկվիր ֆլանելով, կմրսես:


Տ ա Ր Տ ա Ր Ե Ն - Կ ի խ ո ս ք (ավելի վողկորված).— Ի՞նչ սքանչելի յերկհարվածյան հրացաններ, լսասոներ...

Տ ա Ր Տ ա Ր Ե Ն - Ս ա ն չ ո ն (ավելի և ավելի հանդարտ).— Ի՞նչ հրաշալի բրդե բաճկոններ, ի՞նչ տաք գուլպաներ, ի՞նչ ապահով գլխարկներ:

Տ ա Ր Տ ա Ր Ե Ն - Կ ի խ ո ս ք (բոլորովին կատաղած).— Կացի՛ն, մի կացի՛ն տվե՛ք ինձ:

Տ ա Ր Տ ա Ր Ե Ն - Ս ա ն չ ո ն (աղախնին ձայն տալով). Ժանեթ, շոկոլադա բեր:

Յե՛վ ապա ներս և մտնում Ժանեթը— բերելով սքանչելի



շողլադ, տաք-տաք, անուշահոտ, հեան ել քաղցրահամ ա-  
նիտոնի կարկանդակներ, վորոնց տեսքն անասելի խինդ ե  
պատճառում Տարտարեն-Մանչոյին, խլացնելով Տարտարեն-  
Կիխոտի բողոքները:

Ահա թե ինչպես եր յիդել, վոր Տարտարոնցի Տարտարենը  
յերբեք դուրս չեր լսկել Տարտարոնից:

ՅԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՇԱՆՀԱՑՈՒՄ:—ԲԱՐՁՐ ՎԱՃԱՌԱԿԱ-  
ՆՈՒԹՅՈՒՆ:—ԹԱԹԱՐՆԵՐ:—ՄԻԹԵ ՏԱՐԱՍԿՈՆՑԻ ՏԱՐ-  
ՏԱՐԵՆԸ ԽԱԲԵԲԱ ՅԵ:—ՄԻՐԱԺ:

Սակախ մի անգամ քիչ եր մնացել, վոր Տարտարենը  
մեկներ, այն ել մի շատ հեռավոր ճանապարհորդության:

Յերեք տարասկոնցի լեղալըներ Գարսիո-Կամյուս ա-  
նունով, վորոնք հաստատված էին Շանհայում, նրան առա-  
ջարկում էին կառավարիչ լինել իրենց այնտեղի առևտրական  
դրասենյակներից մեկում: Այդ առաջարկությունը պետք ե  
վոր Տարտարենի սրտովը լիներ—ընդարձակ գործունեյություն,  
գործակատարների մի ամբողջ բանակ, հարաբերություններ  
Ռուսաստանի, Պարսկաստանի և Ասիական Թյուրքիայի հետ և  
վերջապես բարձր վաճառականություն:

Այդ «բարձր վաճառականություն» խոսքը Տարտարենն  
այնպես եր արտասանում, վոր մարդ ակամայից աչքերը բարձ-  
րացնում եր դեպի յերկինք...

Գարսիո-Կամյուսների վաճառատունը բացի այդ ունե-  
ր այն առավելությունը, վոր յերբեմն ընդունում եր թաթարների  
«այցելությունը»: Այդ դեպքում դուներն իսկույն փակում էին,  
բոլոր գործակատարները զենք էին վերցնում, հյուպատոսա-  
կան դրոշակը պարզում և պատուհաններից բամբ—բամբ սկսում  
էին կրակել թաթարների վրա:

Ավելորդ ե ասել, թե ինչպիսի վողեորությամբ Տարտա-  
րեն-Կիխոտը կպավ այդ առաջարկության. բայց դժբախտա-  
բար Տարտարեն-Մանչոն ուրիշ կերպ եր նալում գործին և  
վորովհետև վերջինի ձայնն ավելի գորավոր եր, ուստի և գործը  
գլուխ չեկավ: Տարտարենի գնալու լուրն ամբողջ քաղաքում  
խոսակցության առարկա յեր դարձել: Կգնամ, թե չի գնա. գրադ  
եմ գալիս, վոր այո, գրադ եմ գալիս, վոր վոչ: Տարտարենը

վերջիվերջո չգնաց, բայց չնայելով դրան, այդ դեպքը մեծապես բարձացրեց նրա պատիվը: Շանհայ գնալու մտադրութլունն ունենալ, կամ թե արդեն գնացած լինել—այդ միևնույն բանն եր տարասկոնցիների համար: Տարտարենի գնալու մասին այնքան շատ խոսեցին, վոր վերջապես իրենք ել սկսեցին հավատալ, վոր նա արդեն գնացել ու վերադարձել ե: Այնուհետև շատ անգամ ակումբում տարասկոնցի պարոններն ամենալուրջ կերպով տեղեկութլուններ եյին հարցնում նրանից Շանհայի, այնտեղի սովորութլունների, կլիմայի, ոպիումի և բարձր վաճառակա- նութլյան մասին:

Տարտարենն ել, վոր շատ կարգացած և տեղյակ եր ամեն բանից, հաճույքով պատասխանում եր այդ բոլոր հարցերին և հաղորդում եր ամենամանրամասն տեղեկութլուններ:

Բանը վերջացավ նրանով, վոր մեր բարեմիտ հերոսը ինքն ել գրեթե սկսեց հավատալ, թե Շանհայում յեղել ե, և յերբ արդեն հարյուրերորդ անգամ պատմում եր թաթարների հարձակումների մասին, նա շատ բնական կերպով ավելացնում եր. — «Այն ժամանակ բոլոր գործակատարներևս զենք բաժանեցի, հյուպատոսական դրոշակը պարզեցի և պատուհաններից բժւմ բժւմ սկսեցինք կրակել թաթարների վրա»: Այդ ասելով ամբողջ ակումբը սարսուռում եր:

— Ուրեմն ձեր Տարտարենն անամոթ ստախոսին մեկն եր:

— Վհչ, ամենեին: Տարտարենը ստախոս չեր...

— Յեթե ստախոս չեր, ապա միթե չգիտե՞ր, վոր ինքն ամենեին Շանհայում չի յեղել:

— Իհարկե գիտեր, միայն թե...

Միայն թե խնդրեմ լավ լսեք հետևյալը. արդեն ժամանակ ե, վոր մի անգամ ընդմիջտ պարզենք, թե ինչից ե ծագել ստախոսի այն համբավը, վոր հյուսիսի մարդիկ վերագրում են հարավայիներին: Հարավում ստախոսներ չկան, վոչ Մարսելում, վոչ Նիմում, վոչ Թուրուզում, վոչ ել Տարասկոնում: Հարավի մարդը չի ստում, այլ սխալվում ե, խաբվում: Նրանց ասածը միշտ ել ճշմարիտ չե, բայց նրան այնպես ե թվում, վոր ճշմարիտ ե... Նրա ստախոսութլունը ստախոսութլուն չե, այլ մի տեսակ միրաժ...

Այո, մի տեսակ միրաժ: Գնացեք հարավ և այն ժամանակ դուք կհասկանաք, թե ինչ եմ ուզում ասել: Դուք ինքներդ

կնկատեք, վոր այդ զարմանալի յերկրում արեցն ամեն բան կարծեք կերպարանափոխում ե և բնականից ավելի մեծ ե ցույց տալիս: Դուք կնկատեք, վոր Պրովանսի այդ փոքրիկ բլրակները, վորոնք Մոնմարտրի<sup>1)</sup> բլրակից մեծ չեն, ձեր աչքում մի-մի հսկա լեռներ են լերևում, դուք կտեսնեք Նիմի Գառանկյունի տունը<sup>2)</sup>—ճարտարապետական մի փոքրիկ գոհար, վորը նույնքան մեծ ե լերևում, վորքան Փարիզի Նոտր-Դամը:

Մի խոսքով, չեթե հարավում ստախոս կա, այդ միակ ստախոսն արևն ե: Ինչ բանի վոր նա դիպչում ե, այդ բանը ձեր աչքում աճում ու մեծանում ե... Ասացեք խնդրեմ, ինչ եր Սպարտան իր փառքի որերին—խակապես մի գյուղաքաղաք, կամ թե Աթենքը, ամենաշատն այժմյան մի դավառական քաղաքի չափ, և սակայն նրանք այնքան մեծ քաղաքներ են յերևում մեր աչքին պատմության մեջ: Ահա թե ինչեր ե անում արևը...

Մրանից հետո այլևս ինչ զարմանալու բան կա, վոր մի-կենույն արեվի տակ՝ Տարասկոնում հանդերձանքի պաշտոնաթող կապիտան Բրավիդան հրամանատար Բրավիդա յե դառնում, շաղգամն ել բաորբաբ ե դառնում և Շանհալ գնալ ցանկացող մի մարդ արդեն գնացած ու վերադարձած ե համարվում:

## ՄԻՏԵՆԻ ԳԱԶԱՆԱՆՈՑԸ:—ԱՏԼԱՍՅԱՆ ԼԵՌՆԵՐԻ ԱՌՓՈՒԾԸ ՏԱՐԱՍԿՈՆՈՒՄ: ԱՀՌԵԼԻ ՅԵՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ:

Այժմ, լերբ մենք նկարագրեցինք արդեն Տարասկոնցի Տարտարենի մասնավոր կյանքը այն շրջանում, լերբ փառքը դեռևս չեր համրուրել նրա ճակատը և չեր պսակել այն դարավոր դափնիներով,—այժմ յերբ մենք պատմեցինք այդ հերոսական կյանքը համեստ միջավայրում, նրա ուրախությունները և վշտերը, նրա լերազներն ու հուլսերը, ժամանակ ե, վոր անցներնք նրա պատմության նշանավոր եջերին և այն արտակարգ

1) Մոնմարտր— Փարիզի թաղամասերից մեկը: Մանոթ. խմբ.

2) Քառակյուղի տունը— հռոմեացիների ժամանակ կառուցված շենք Ֆրանսիայի Նիմ քաղաքում, ճարտարապետական գեղեցիկ հուշարձան ե: Մ. խ.

պատահարին, վորը պիտի առաջ մղեր նրա. անորինակ ճակատագիրը:

Մի յերեկո, յերբ զինավաճառ Կոստեկալդի մոտ հավաքվածներին Տարտարենը բացատրում և ցույց եր տալիս այն ժամանակ նոր հնարված ասեղնավոր հրացանի գործածությունը, հանկարծ դուռը բացվեց և գլխարկի հերոսներից մեկը գլուխը կորցրած ներս մտնելով աղաղակեց. «Առյժն... առյժն...»: Մի ընդհանուր սարսափ, իրարանցում և շփոթ տիրեց ամենքին: Տարտարենը պատրաստվեց սվինամարտի, իսկ Կոստեկալդը վազեց դուռը փակելու: Բոլոր կողմերից շրջապատեցին վորսորդին, հարց ու փորձ արին և անհինչ իմացան: Միտենի գազանանոցը, վորը բաղկացած եր մի քանի բռաններից, փոկերից, կոկորդիլոսներից և մի հատ սքանչելի ատլասյան առյժնից, — վերադառնալով Բոկերի տոնավաճառից Վիամաձայնել եր, մի քանի որով կանգ եր առել Տարասկոնում և հաստատվել եր դղյակի հրապարակում:

Ատլասյան առյժնը Տարասկոնում. ալդ մի չտեսնված ու չչլված բան եր Տարասկոնի համար: Մի տեսնելիք, թե ինչպիսի հպարտությամբ իրար եյին նայում գլխարկի քաջասիրտ վորսորդները. նրանց առնական դեմքերը փալլում ելին ուրախությունից և նրանք լուռ ու մունջ սեղմում եյին իրար ձեռքը:

Հուզմունքն այնքան սաստիկ եր, վոր խոսք չեյին գտնում իրենց զգացմունքն արտահայտելու համար...

Նույնիսկ Տարտարենը: Դժգուշ և սրտադող, ասեղնավոր հրացանը դեռևս ձեռքին բռնած, նա հաշվեսեղանի մոտ կանգնած խորասուզվել եր ծանր մտքերի մեջ... Ատլասյան առյժն: Այստեղ իրենից յերկու քայլ հեռու, առյժն. այսինքն ամենահերոսական, ամենակատաղի կենդանին, գազանների թագավորը, նրա յերազների առարկան, գլխավոր գործող անձը այն իդեալական խմբի, վորն այնքան գեղեցիկ դրամաներ եր խաղում իր յերևակայության մեջ:

Կենդանի առյժն, աստված իմ:

Այն ել Ատլասյան լեռներից: Այդ արդեն չափազանց եր Տարտարենի համար:

Արլունը խփեց նրա յերեսին, աչքերը փայլատակեցին, ջղաձիգ շարժումով նա ուսին ձգեց ասեղնավոր հրացանն ու դի-

մելով հանդերձանքի նախկին կապիտան քաջասիրտ հրամանատար Բրավիդային, վորոտաձայն ասաց.

— Հապա պնանք տեսնենք ի՞նչ բան է, հրամանատար:

— Բն, բն իմ հրացանը, իմ ասեղնավոր հրացանն էլ եք տանում, — յերկշտ կերպով ասաց խոհեմ Կոստեկալը, բայց Տարտարենն արդեն շուռ եր յեկել մյուս փողոցը և գլխարկի վարտորդները հետևում էյին նրան:

Յերբ նրանք հասան գազանանոցը, այնտեղ արդեն անագին բազմություն եր հավաքվել: Տարասկոնի քաջասիրտ ժողովուրդը, վոր յերկար ժամանակ առիթ չեր ունեցել ներկա լինելու ցնցող տեսարանների, այժմ խուժել եր դեպի Միտենի գազանանոցը: Հաստիկ տիկին Միտենը չափազանց գոհ եր: Ալժիրական տարազով, թևերը մինչև արմունկները բաց և վոտներին յերկաթլա ապարանջաններ անց կացրած, նա մի ձեռքում բռնել եր մի խարազան, իսկ մյուս ձեռքում մի կենդանի, բայց փեարաթափ վառեկ: Նշանավոր տիկինը սիրալիր կերպով ընդունում եր տարասկոնցիներին, և վորովհետև նա ել փրկեալի մկամեառ ուներ, ուստի վոչ պակաս հաջողություն եր վայելում, քան իր ձեռնասուռն գազանները:

Տարտարենի գալը, հրացանն ուսին դրած, սարսուռ ազդեց բոլորին:

Իարի տարասկոնցիները, վորոնք հանդարտ սրտով զբոսնում էյին վանդակների առաջ անդեն, առանց վախի, առանց նուզնիսկ վտանգի մասին մտածելու. հանկարծ սարսափի բնական մղում զգացին, յերբ տեսան, վոր մեծ Տարտարենը անուշի դենքն ուսին գազանանոց մտավ: Ուրեմն վախենալու պատճառ կար, վոր նրանց հերոսն այդպես... Մի ակնթարթում վանդակների առաջը դատարկվեց: Յերեխաները վախից լաց էյին լինում, տիկինները նայում էյին դռներին: Դեղավաճառ Բեզյուքեն ծլկվեց, պատճառաբանելով, վոր գնում է հրացանը վերցնելու...

Սակայն Տարտարենի բռնած դիրքը փոքր առ փոքր սիրտ տվեց ներկաներին: Հանդարտ ու վեհ, գլուխը բարձր պահած, անվեհեր տարասկոնցին շրջեց վողջ գազանանոցը, առանց կանգ առնելու անցավ ծովառյուծի ավազանի մոտով, մի արհամարհական հայացք ձգեց թեփով լիք յերկար արկղի վրա, վորի մեջ բոա ոճր մարսում եր իր հում վառեկը և վերջապես յեկավ ու կանգ առավ առյուծի վանդակի առաջ... Ահռելի և

հանդիսավոր տեսակցություն. Տարասկոնի առյուծը և Ատլաս-  
յան լեռների առյուծը դեմ աւ դեմ կանգնած...

Մի կողմից Տարտարենը կանգնած, սրունքի մկանները  
լարած, յերկու ձեռքով ամուր հրացանին հենված, իսկ մյուս  
կողմից առյուծը, մի հսկայական առյուծ, փոխած հարդի վրա,  
աչքերը թարթելով, դեմքի բուրբ արտահայտութիւմբ, ահագին  
դունչը դրած թաթերի վրա: Յերկուսն ել հանդարտ են ու նա-  
յում են իրար:

Յեւ վարմանալի բան: Առյուծը, վոր մինչև այդ հանդարտ  
իր տեղը պառկած էր, վեհ արհամարհանքով էր նայում տարաս-  
կոնցիների վրա, հանկարծ կատաղեց: Չգիտես ասեղնավոր հը-  
րացանի տեսքն էր նրան գրգռողը, թե նա զգաց իր ցեղի վո-  
խերիմ թշնամու ներկայությունը: Նախ և առաջ նա ունեցնեց  
փոթկացրեց, խուլ մոնչաց—ձիրանները բացեց և թաթերը ձը-  
գեց. հետո նա վեր կացավ տեղից, բարձրացրեց գլուխը, բաշը  
թափահարեց, ահագին յերախը բաց արավ, ահուելի մի մռն-  
չյուն արձակեց ուղիղ Տարտարենի լերեսին:

Մարտափելի մի աղաղակ պատասխանեց նրան: Խելքը կորց-  
րած տարասկոնցիները խուժեցին դեպի դուռ: Կանայք, լերեխա-  
ներ, բռնակիրներ, գլխարկի վորսորդները, բոլորը, նուչնիսկ  
հրամանատար Բրավիրդան... միայն Տարասկոնցի Տարտարենը տե-  
ղից չչարժվեց... Նա հաստատ ու վճռական կանգնել էր վանդա-  
կի առաջ. նրա աչքերը փայլատակում էին և դեմքին լերևում  
էր աչն ահավոր ծամածռութիւնը, վորին ծանոթ էր ամբողջ  
քաղաքը:

Փոքր ինչ հետո, լերք գլխարկի վորսորդները նրա բռնած  
դիրքից և վանդակի լերկաթիւ ձողերի ամբությունից քաջա-  
լերված կամաց-կամաց սկսեցին մոտենալ իրենց պետին, նրանք  
պարզ լսեցին, վոր Տարտարենն աչքն առյուծի վրա սեվեռելով  
մրթմրթում էր:

— Ահա իսկական վորսը, այո:

Այդ ամբողջ որը Տարասկոնցի Տարտարենն այլևս վոչինչ  
չասաց...

## Մ Ի Ր Ա Ռ Ի Չ Ա Ր Մ Ա Ն Ա Լ Ի Հ Ե Տ Ե Վ Ա Ն Ք Ն Ե Ր Ը

Այդ ամբողջ որը Տարասկոնցի Տարտարենն այլևս վոչինչ չա-  
սաց, բայց ինչ վոր ասել էր խեղճը, այն ել արդեն շատ ու  
շատ էր...

Մլուս ուրն ամբողջ քաղաքում արդեն լուր եր տարածվելի վոր Տարտարենը մի քանի որից ուղևորվում ե Ալֆիլ առյուծներ վորսալու: Դուք ամենքդ ել վկա յեք, սիրելի ընթերցողներ, վոր մեր հերոսն այդ մասին շտուկ անգամ չեր հանել, բայց գիտեք ելի, միրաժը...

Մի խոսքով ամբողջ Տարասկոնը միայն այդ ուղևորութեան մասին եր խոսում:

Ջրոսավալըում, ակումբում, Կոստեկալի խանութում մարդիկ հուզված մտեհնում ելին իրար և հարցնում.

— Գիտե՞ք նորութիւնը... ասում են...

— Ի՞նչ նորութիւն, Տարտարենի գնալը չլինի՞...

Միակ մարդը Տարտարենն եր, վոր ամենքից շատ զարմացավ, լերբ լսեց, թի ինքը շուտով պիտի ուղևորվի Աֆրիկա: Բայց նայեցեք, թե ինչեր ե անում փառասիրութիւնը՝ Փոխանակ պարզապես պատասխանելու, վոր ինքն ամենեվին մտադրութիւն չունի Տարասկոնից հեռանալու, առաջին անգամ, լերբ այդ մասին ղիմեցին իրեն, նա անորոշ կերպով պատասխանեց...


— Հըմ, ճշմարիտ, լես ինքս ել չգիտեմ...


Յերկրորդ անգամ արդեն մի քիչ ավելի ընտելանալով այդ մտքի հետ, նա պատասխանեց. «Հավանական ե», իսկ յերրորդ անգամ թե՛ «Այդ հարցը վճռված ե»:

Վերջապես մի յերեկո ակումբում և Կոստեկալի մոտ, մի քիչ տաքացած փունջից, կեցցեներից և լուսավորութիւնից, հարբած այն հաջողութիւնից, վոր նրա ուղևորութեան լուրն ունեցել եր ամբողջ քաղաքում, տարաբախտ մարդը հանդիսավոր և պաշտոնական կերպով հայտարարեց, վոր արդեն ձանձրացել ե գլխարկի վորսորդութիւնից և կարճ ժամանակից հետո պետք ե ուղևորվի Ատլասյան լեռներն առյուծներ վորսալու...

Այս հայտարարութիւնն ընդունվեց վորոտալի կեցցեներով: Այնուհետե ևլի փունջ խմեցին, սեղմեցին իրար ձեռքեր, գրկախառնվեցին և մինչև կես գիշեր լապտերներով լուսավառութիւն սարքեցին բողբոջի փոքր տան առջև:

Սակայն Տարտարեն՝ Սանչոն բնավ գոհ չեր այս բոլորից: Աֆրիկա ուղևորվելու և առյուծներ վորսալու միտքն առաջուց արդեն սարսուռ եր ազդում նրան, և տուն մտնելով, մինչդեռ պատուհանների տակ թնդում ելին ուրախութեան ազդակները,





նա կատաղորեն հարձակվեց Տարտարեն-Կիխոտի վրա, անվանելով նրան խելագար, ցնդված, անխոհեմ, լեռակի հիմար, մեկ առ մեկ թվելով այդ ուղևորութեան բոլոր ազիտները՝ նավաբեկութուն, հողացավ, տենդ, փորհարինք, սև ժատնախտ, փղախտ, և այլն, և այլն...

Ձուր եր Տարտարեն-Կիխոտը լերգվում, վոր զգուշ կլինի, տաք կհազնվի, իր հետ կվերցնի բոլորը, ինչ անհրաժեշտ ե։ Տարտարեն-Սանչոն վոչինչ չեւ ուզում լսել։ Խեղճ մարդը տեսնում եր իրեն արդեն առյուծների ճանկերի մեջ հոշոտված, անապատի ավազների տակ թաղված, ինչպես հանգուցյալ Կամբլուռը<sup>1)</sup>։ Տարտարեն-Կիխոտը հազիվ կարողացավ նրան փոքր ինչ հանգստացնել, բացատրելով, վոր այդ ուղևորութունը դեռ ապագայի խնդիր ե, վոր դեռևս շտապելու բան չկա և վոր վերջապես նրանք դեռևս տանն են։

Հալտնի բան ե, վոր այդ տեսակ ուղևորութեան չեն ձեռնարկում, առանց նախազգուշական վորոշ միջոցներ ձեռք առնելու։ Մարդը հո թռչուն չե, վոր վեր կենա ու թռչի, գնալուց առաջ դեռ պետք ե իմանա, թե ուր ե գնում...

Նախ և առաջ Տարասկոնցին ցանկացավ կարգալ աֆրիկյան մեծ ճանապարհորդների պատմութունները, Մունգո-Պարկի, Կայեյի, դոկտոր Լիվինգստոնի, Հանրի, Դյուվերիելի ուղեգրութունները։

Դրանցից նա իմացավ, վոր յերևելի ճանապարհորդները հեռավոր արշավանքներ կատարելուց առաջ նախորոք վարժվում եյին տանել յեվ քաղց, և՛ ծարավ, և՛ հոգնածութուն, և՛ ամեն տեսակ զրկանքներ։ Տարտարենն ուղեց հետևել նրանց որինակին և այդ որվանից՝ սկսած նա կերակրվում եր «յեփած ջրով»։ «Յեփած ջուրը» Տարասկոնում նշանակում ե մի քանի կտոր հաց թրջած տաք ջրով՝ մի գլուխ սխտորի, ուրցի և դափնե տերեվի հետ միասին։ Ինչպես տեսնում եք ուժիմը շատ խիստ եր. հեշտ ե յերևակայել, թե խեղճ Սանչոն ինչպես եր յերեսը թթվեցնում։

Յեփած ջրով հրապուրվելու հետ միասին Տարտարենն ըսկսեց նաև մի շարք ուրիշ գործնական վարժութուններ։ Այսպես որինակ հոգնածութեան վարժվելու համար նա յուրաքան-

1) Հնադարյան Պարսկաստանի Թագավորը (529-522 մեր թվ. առաջ), Մ. Խմբ.

չյուր առավոտ յոթ թե ութ անգամ անընդհատ պտտվում եր քաղաքի շուրջը, յերբեմն արագ քայլերով, յերբեմն մարմնամարզական քայլով, արմունկները կողքերին սեղմած և յերկու հատ փոքրիկ սպիտակ քար բերանը դրած, ինչպես անում եյին հները:

Հետո գիշերվա ցրտին, մառախուղին և ցողին վարժվելու համար նա ամեն լերեկո դուրս եր գալիս պարտեզ և հրացանն ուսին բառբարի յետևում դարան մտած կանգնում եր մինչև գիշերվա ժամը տասը—տասնըմեկը...

Յեվ վերջապես քանի Միտենի գազանանոցը Տարասկոնումն էր, գլխարկի վորսորդները Կոստեկալդի մոտից ուշ ժամանակ տուն դառնալիս գիշերվա մթության մեջ տեսնում եյին խորհրդավոր մի սովեր, վոր հանդարտ քայլերով անցուդարձ եր անում գազանանոցի առաջ:

Այդ Տարասկոնցի Տարտարենն էր, վոր վարժվում եր գիշերվա մթության մեջ առանց դողալու ականջ դնել առյուծի մռնչյուններին:

## ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Մինչդեռ Տարտարենը զբաղված եր այդ հերոսական վարժություններով, ամբողջ Տարասկոնն աչքը հառել եր նրան: Այլևս ուրիշ վոչնչով չեյին զբաղվում: Գլխարկի վորսորդությունը խիստ ընկել եր, իսկ ոռմանաները մոռացության եյին սովել: Բեզուքեյի դաշնամուրը մրափում եր կանաչ ծածկոցի տակ՝ վրան սատկած ճանճերով, վորոնք փորերը վեր բարձրացրած չորացել էլին: Տարտարենի ուղևորությունը կանգնեցրել եր ամեն ինչ:

Պետք եր տեսնել Տարասկոնցու հաջողությունը սալոններում: Նրան ձեռքից-ձեռք խլում, դողանում, փոխ եյին վերցնում: Տիկիներն իրենց համար մեծագույն պատիվ եյին համարում, յերբ Տարտարենի հետ թևանցուկ գնում եյին Միտենի գազանանոցը և առյուծի վանդակի առջև կանգնած լսում եյին նրա բացատրություններն այդ ահռելի գազանների վորսորդության մասին, թե ուր պետք է նշան բռնել, քանիք քայլ հեռավորությունից, ի՞նչ վտանգներ կարող են պատահել և այլն, և այլն:

Տարտարենը տալիս եր բոլոր բացատրությունները: Նա կարդացել եր ժյուլ Ժերարի գիրքը և այնպես լավ տեղյակ եր

առյուծի վորսորդության, վոր կարծես իրոք վորսացել եր: Դրա համար ել նրա նկարագրությունը շատ կենդանի և պերճախոս եր դուրս գալիս:

Բայց Տարտարենն ուղղակի աննման եր դառնում այն յերեկոները, յերբ նա ճաշկերույթի յեր նախազահ Լադեվեզի, կամ քաջ հրամանատար, հանդերձանքի նախկին կապիտան Բրավիդայի տանը: Յերբ սուրճը ներս ելին բերում, ներկաներն աթոռները մոտեցնում ելին իրար և նրան պատմել ելին տալիս իր ապագա վորսորդությունների մասին...

Այն ժամանակ, արմունկները սփռոցի վրա դրած, քիթը մոկկոլի բաժակի մեջ, մեր հերոսը հուզված ձայնով սկսում եր նկարագրել այն բոլոր վտանգները, վոր սպասում ելին նրան այնտեղ: Նա պատմում եր անվերջ դարանակալություններն անլուսին գիշերներին, նկարագրում եր ժանտահոտ ճահիճները, դափնե-վարդի տերևներով թունավորված գետերը, ձյունը, կիզիչ արևը, կարիճները և մորեխների տեղատարափը: Նա նկարագրում եր նմանապես Ատլասյան առյուծների կյանքը, նրանց կռվելու յեղանակները, նրանց անորինակ ուժը և կատաղությունը՝ եգբրին վորոնելու շրջանում:

Հետո ինքն իր պատմությունից վորդևորված, վեր եր կենում, ցատկում եր սեղանատան մեջտեղը և սկսում եր կամ առյուծի նման մոնչալ, կամ հրացանի նման վորոտալ և կամ վըզ—վըզ թռչող գնդակների ձայներ հանել, զանազան շարժումներ անելով, գոռալով, աթոռները տապալելով...

Հյուրերը գունատվում ելին. տղամարդիկ իրար յերես նայելով, գլուխները թափ ելին տալիս, տիկիներն աչքերը փակում և ճչում ելին, ծերունիները ռազմականորեն թափահարում ելին իրենց ձեռնափայտերը, իսկ հարևան սենյակում վաղ քնած յերեխաները, հանկարծ զարթնելով այդ մոնչյուններից և կրակոցներից, սկսում ելին վախից լաց լինել և մայրիկ, մայրիկ կանչել:

Սակայն առայժմ Տարտարենը դեռևս չեր մեկնում:

ՍՐՈՎ ԿՈՎԵՑԵՔ, ՊԱՐՈՆՆԵՐ, ՍՐՈՎ... ՅԵՎ ՎՈՋ  
ԳՆԴԱՍԵՎՈՎ

Արդևոք նա իրոք մտադիր եր ուղևորվելու... Ահա փափուկ մի հարց, վորին Տարտարենի պատմագիրը դժվար թե կարողանար պատասխանել...

Ճշմարտութիւնն այն է, վոր Միտենի գաղանանոցը լերեք  
ամիս եր արդեն, ինչ հեռացել եր Տարասկոնից, իսկ առյուծ-  
ների վորսորդը դեռևս պի՛նդ նստած եր իր տեղում... Շատ  
կարելի յէ նմանապես, վոր մեր պարզամիտ հերոսը, մի նոր  
միրաժով խարված, կարծում եր, թէ արդեն գնացել է Ալժիր:  
Շատ կարելի յէ, վոր նա իր ապագա վորսորդութիւնները միշտ  
պատմելով, յերևակայում եր, վոր այդ ամենն արդեն նա կա-  
տարել է, ինչպես վոր բոլորովին անկեղծ կերպով յերևակա-  
յում եր, թէ յեղել է Շանհայում, պարզել է հյուպատոսական  
դրոշակը և պատուհաններից բժւմ—բժւմ կրակել է թաթարների  
վրա:

Բայց դժբախտաբար, յեթէ այս անգամ ել Տարտարենը  
միրաժի գոհ եր յեղել, նույնը չի կարելի ասել տարասկոնցի-  
ների մասին: Յերեք ամիս սպասելուց հետո, յերբ տեսան, վոր  
նա տեղից չի շարժվում, սկսեցին քրթֆնջալ:

— Այս ել Շանհայ գնալու բանը դարձավ,—ասաց մի որ  
Կոստեկալը ժպտը յերեսին և այդ խոսքերը իսկույն տարած-  
վեցին ամբողջ քաղաքում, վորովհետև ալլևս վոչ վոք չեր վըս-  
տահում Տարտարենին: Միամիտները, վախկոտները և Բեդյու-  
քեյի նման մարդիկը, վորոնք մի վից ել փախչում էին և ա-  
ռանց աչքերը փակելու չէին կարող հրացան արձակել, այդ  
տեսակ մարդիկ ավելի ևս անողոք էին: Ակումբում, հրապա-  
րակում, ամեն տեղ նրանք մոտենում էին խեղճ Տարտարե-  
նին և ծաղրական դեմքով հարցնում.

— Հ՞ը, ինչ յեղավ, գնալդ յՔրք ե...

Կոստեկալը խանութում նրան ել մտիկ տվող չկար: Գըլ-  
խարկի վորսորդներն ուրանում ելին իրենց պետին:

Հետո եպիգրամներ մեջտեղ չեկան: Նախագահ Լադեվեզը,  
վոր իր ազատ ժամերը մեկ-մեկ նվիրում եր գավառական մու-  
սաներին, տեղական բարբառով մի յերգ հորինեց, վոր մեծ  
ընդունելութիւն գտավ: Այդ յերգի մեջ հիշվում եր մի նշա-  
նավոր վորսորդ վարպետ ժերվե անունով, վորի առելի հրա-  
ցանը պիտի բնաջինջ աներ Աֆրիկայի բոլոր առյուծներին:  
Դժբախտաբար այդ անիծած հրացանը մի տարրինակ կազմու-  
թիւն ունեւր—միշտ լցվում եր, բայց յերբեք չեր կրակում<sup>1)</sup>.

1) Այտտեղ ֆրանսերենում բառախաղ է «il ne partait jamais նշանա-  
կու՛մ է նաև Շնա յերբեք չեր մեկնում».

դուք իհարկե հասկանում եք ակնարկությունը...

Կարճ ժամանակամիջոցում այդ յերգն այն աստիճանի ժողովրդական դարձավ, վոր յերբ Տարտարենն անցնում եր, բեռնակիրները և իր տան առջևի կոշիկ սրբողները խմբովին յերգում եյին.

Վարպե՛ս ժեղվեյի հրացանը  
Մի՛տ լցվում ե, մի՛տ լցվում,  
Վարպե՛ս ժեղվեյի հրացանը  
Յերե՛ք չի կրակում, չի կրակում:

Միայն այս յերգում եյին հեռվից, նկատի ունենալով մեր հերոսի կրկնակի մկանները:

Ո՛վ տարասկոնյան դյուրափոփոխ բնավորություն...

Մե՛ծ Տարտարենն այնպես եր ձևացնում, վոր վոչինչ չի տեսնում, վոչինչ չի լսում, սակայն այդ խուլ և թունավոր պայքարը խորը կերպով խոցոտում եր նրա սիրտը: Նա զգում եր, վոր Տարասկոնը դուրս ե պրծնում իր ձեռքից, ժողովրդի համակրությունն անցնում ե ուրիշներին, և այդ բանը սոսկալի տանջում եր նրան:

Ո՛ր, ինչ քաղցր ե ժողովրդականությունը, սակայն վորքան դառն ե, լերբ կորցնում ե՞ այն...


Բայց, չնայած իր տանջանքին, Տարտարենը ժպտում եր և շարունակում իր առաջվա խաղաղ կյանքը, կարծես թե վոչինչ չի պատահել:

Բայց լերբեմն-յերբեմն այդ ուրախ անհոգության դիմակը, վորով նա հպարտությունից ծածկել եր իր դեմքը, հանկարծակի վայր եր ընկնում և այն ժամանակ ծիծաղի փոխարեն նրա դեմքի վրա կարդացվում եյին զալրույթ և դառն կսկիծ...

Այսպես, մի առավոտ, լերբ կոշիկ սրբող փոքրիկները նրա լուսամուտի տակ յերգում եյին «Վարպե՛տ ժեղվեյի հրացանը», այդ ստահակների ձայնը հասավ Տարտարենի ականջին այն ժամանակ, յերբ նա հայելու առաջ նստած ածիլվում եր (Տարտարենը միբող եր պահում, բայց վորովհետև նրա մազը շուտ շուտ ե բսնում, նա ստիպված ե խնամք տանել միբողքին):

Մեկ ել հանկարծ պատուհանը շը՛րխկ բացվեց և Տարտա-  
րենը շապկանց, գլուխը լաթով փաթաթած, սապոնի սպիտակ  
փրփուրը յերեսին, ածելին ձեռքում ճոճելով, ահարկու ձայնով  
վորոտաց.

— Սրով կռվեցեք, պարոններ, սրով, և վոչ գնդասեղով:



Գեղեցիկ խոսքեր, արժանի պատմութեան եջերը զարդա-  
րելու, միայն ափսոս, վոր ուղղված եյին աչնպիսի ստահակնե-  
րի, վորոնք հաղիվ իրենց ներկի արկղների չափ լինեյին և վո-  
րոնք միանգամայն անկարող եյին սուր վերցնելու:

## ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ԽՈՍՎԵՑ ԲԱՌԲԱԲԻ ՏՆԱԿՈՒՄ

Այդ ընդհանուր ուրացութեան մեջ միայն բանակն եր,  
վոր դեռևս հավատարիմ եր մնացել Տարտարենին:

Քաջասիրտ հրամանատար Բրավիդան, հանդերձանքի նախ-  
կին կապիտանը, շարունակում եր նույն հարգանքը ցույց տալ

նրան: «Բաջ տղամարդ ես— ասում եր նա համառորեն, և այդ կարծիքը, կարծեմ ավելի արժեք ունեւր, քան դեղավաճառ Բեզլուքեյին... Վոչ մի անգամ քաջասիրտ հրամանատարն ամենաթեթեւակնարկ չեւր արեւլ աֆրիկյան ճանապարհորդութեան մասին, սակայն, յերբ հասարակութեան շտրտունջն սկսեց ավելի սաստկանալ, նա ել վճռեց խոսել:

Յեւլ ահա մի յերեկո, յերբ թշվառ Տարտարենը մենակ իր առանձնասենյակում նստած, խորասուզվել եր տխուր մտքերի մեջ, մեկ ել հանկարծ ներս մտաւ հրամանատարը Վուրջ դեմքով, սև ձեռնոցները հագին, մինչև վիզը կոճկված:

— Տարտարեն, — արտասանեց նախկին կապիտանը հեղինակավոր ձայնով, — Տարտարեն, պետք ե մեկնել: Յեւլ նա մնաց կանգնած դռան մեջ խստադեմ և վեհ՝ ինչպես ինքը՝ պարտականութեւնը:

Տարասկոնցի Տարտարենը հասկացաւ «պետք ե մեկնել» բառերի ամբողջ իմաստը:

Գուցնը թոցբած վեր կացաւ տեղից, քնքշութեամբ լի մի հայացք ձգեց իր սիրուն, լուսավոր առանձնասենյակին, լայն ու փափուկ բազկաթոռին, գրքերին, գորգերին, պատուհանների մեծ և սպիտակ վարագոյրներին, վորոնց յետևն որորվում էին փոքրիկ պարտեզի ծառերի ճյուղերը. հետո մոտենալով քաջասիրտ հրամանատարին, բռնեց նրա ձեռքը, ամուր սեղմեց և արտասովախառն, բայց հպտատուն ձայնով ասաց.

— Յես կմեկնեմ, Բրավիրդ:

Յեւլ նա կատարեց իր խոստումը, միայն թե վոչ իսկույն... վորովհետև հարկավոր եր դեռ ճանապարհի պատրաստութեւն տեսնել:

Ամենից առաջ նա Բոմպարին պատվիրեց լերկու հատ պղնձապատ ահագին սնդուկ—վրան մի յերկար տախտակ հետևեալ մակագրութեամբ.

Տ Ա Ր Ա Ս Կ Ո Ն Ց Ի Տ Ա Ր Տ Ա Ր Ե Ն

Ջ Ե Ն ք Ե Ր Ի արկղ

Սնդուկները պղնձով պատելու և մակագրութեւնը փորագրելու գործը շատ ժամանակ խլեց: Նա պատվիրեց նաև ճա-

Նապարհորդական մի հրաշալի արժոյթ — իր որագէղը և ճանապարհի տպավորութիւնները գրի առնելու համար, վորովհետև վորքան ել մարդ առլուծ վորսալով զբաղված լինի, նա այնուամենայնիվ ճանապարհին մտքեր կունենա:

Այնուհետև նա Մարսելից բերել տվեց մի ամբողջ բուկոնսերվի պաշարեղեն, բուլլոն պատրաստելու տարելտներ, մինոր տեսակի վրան, վոր մի բոլորով բացվում ու ծալվում էր, ծովային կոշիկներ, յերկու հատ հովանոց, մի անձրևանոց վերարկու և կապուլտ ակնոցներ անքերը բորբոքումից պահպանելու համար: Վերջապես դեղամիջոցներ Բեդլուքեն պատրաստեց նրա համար մի փոքրիկ, շարժական դեղարան լի սպեղանիներով, կամֆարալով, քացախով և այլ դեղերով:

Խեղճ Տարտարեն. բոլոր այդ պատրաստութիւնները նա տեսնում էր վոչ թէ իր համար, այլ Տարտարեն-Սանչոյի ցասումը մեղմացնելու համար: Այն որից, յերբ ուղևորութիւնը վերջնականապես վճռվել էր, Սանչոն այլևս գիշեր ու ցերեկ դադար չուներ:

## ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վերջապես հասավ հանդիսավոր որը, մեծ որը:

Վաղ առավոտից ամբողջ Տարասկոնը վորտքի վրա յերխուսված Ալինիոնի ճանապարհի վրա և բարբաբի փոքրիկ տնակի շուրջը:

Մարդիկ բարձրացել էին պատուհանները, կտուրների ու ծառերի վրա. Ռոնայի նավաստիները, բեռնակիրները, կոշիկ սրբողները, քաղքենիները, կտավագործուհիները, մանածագործուհիները, ակումբի բոլոր անդամները, մի խոսքով ամբողջ քաղաքը: Կային նաև Բոկերից լեկածներ, վորոնք անցել էին կամուրջով:

Շրջակայքի պարտիզպանները, հաստ կտավով ծածկված սայլերով, այգեգործները — նստած ժապավեններով, զանգուլակներով դարդարված սիրուն ջորիների վրա, և նույնիսկ մի քանի սիրուն աղջիկներ յեկած Արլից, նստած իրենց սիրեկանների հետ՝ կամարգյան գորշ ձիերի գավակին, գլխներին կապած յերկնագույն ժապավեն:

Այդ անագին բազմութիւնն իրար հրելով խուսվում էր Տարտարենի դռան մոտ, այն աննման պարոն Տարտարենի, վորը գնում էր թուրքերի աշխարհը առլուծներ վորսալու:





Տարասկոնցիների համար Ալժիրը, Աֆրիկան, Հունաստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը, Թուրքիան, Միջագետքը այդ բոլորը միասին կազմում են մի շատ անորոշ՝ գրեթե առասպելական աշխարհ, վորն ընդհանուր անուշով կոչվում է Թուրքիա կամ ուղղակի Թուրքեր:

Այդ թոհ ու բոհի մեջ գլխարկի վորսորդներն անց ու դարձ եյին անուամ իրենց պետի հաղթանակով հպարտ, գլուխները բարձր բռնած, և իրենց հետևը գծում եյին փառավոր սկոսներ:

Բառբարի տան առաջ կանգնած եյին յերկու խոշոր սայլեր: Ժամանակ առ ժամանակ դուռը բացվում էր և ներսում յերևում եյին մի քանի մարդիկ, վորոնք ծանրախոհ զբոսնում եյին փոքրիկ պարտեզում: Մարդիկ դուրս եյին բերում ճամբրուկներ, սնդուկներ, արկղներ, պալուսակներ և դարսում եյին սայլերի վրա:

Յուրաքանչյուր կապոցը դուրս բերելիս ամբոխն իրար եր անցնում և բարձր ձայնով տալիս էր իրերի անունը.

— Այդ շարժական վրանն է... այդ պաշարեղենն է... այդ դեղարանն է... սրանք ել զենքերի արկղերն են...

Յեվ գլխարկի վորսորդները սկսում եյին բացատրութուններ տալ:

Հանկարծ ժամը տասին մոտ մի մեծ շարժում սկսվեց բազմության մեջ: Պարտեզի դուռը ճռնչաց և բացվեց:

— Նա յե..., նա յե... — գոռացին ամեն կողմից:

Այ՛ն. նա ինքն էր, վոր կար...

Յերբ նա լերևաց շեմքի վրա, լսվեց լերկու զարմացական բացականչություն.

— Թ՛ուրք է, թուրք...

— Ակնոցներ ել ունի...

Տարասկոնցի Տարտարենն, իրոք Ալժիր ուղևորվելով, պարտք էր համարել ալժիրական զգեստ հագնելու. նա հագել էր մի լսյն սպիտակ շալվար, կարճ բաճկոնակ մետաղյա կոճակներով, մեջքին կապել էր չափազանց լսյն և կարմիր գոտի, վիզը բաց, ճակատն ածիլած, գլխին դրած մի ահագին ֆես լերկար կապտագուլյն փնջով: Բացի դրանից նա ամեն մի ուսին դրել էր մի-մի ծանր հրացան, մի ահագին վորսի դանակ խրել գոտու մեջ, փորի վրա ել մի հատ փամփուշտի պայուսակ և մի ատրճանակ ել կողքից կախել: Ահա բոլորը...

Բայց ներողություն, լես մոռացա ակնոցները—մի գույգ հսկայական կապույտ ակնոցներ, վորոնք շատ տեղին ելին, փոքր ինչ մեղմացներով մեր հերոսի ահռելի կերպարանքը:

— Կեցցե Տարտարենը... Կեցցե Տարտարենը, — մռնչաց ամբոխը:

Մեծ մարդը փայտաց, բայց ձեռքով չբարևեց, վորովհետև հրացանները խանգարում ելին: Բացի այդ նա այժմ շատ լավ եր հասկանում փողովրդականության գինը: Շատ կարելի յե, վոր այդ բոպելին նա իր սրտի խորքում անիծում եր իր սոսկալի հայրենակիցներին, վորոնք ստիպում ելին նրան մեկնել, թողնել այդ սիրուն տնակը իր սպիտակ պատերով, կանաչ փեղկերով... Բայց յերեսանց իհարկե այդ ցուլց չեր տալիս:

Հանդարտ և հպարտ, թեև փոքր ինչ գունատված, նա դուրս յեկավ փողոց, նալեց սայլերին և տեսնելով, վոր ամեն բան կարգին ե, իր քայլերն ուղղեց դեպի յերկաթուղու կայարանը, առանց գոնե մի անգամ գլուխը դեպի բաղբալի տնակը դարձնելու: Նրա լետևից քայլում ելին հանդերձանքի նախկին կապիտան քաջասիրտ հրամանատար Բրավիդան, նախագահ Լադեվեզը, այնուհետև զինավաճառ Կոստեկալը և բոլոր գըլխարկի վորսորդները. դրանց լետեվից սայլեր, հետո փողովուղը:

Կոռամատուլցի առաջ նրան սպասում եր կայարանապետը — 1830 թվի աֆրիկյան արշավանքի հին մասնակիցը, վորը մի քանի անգամ ջերմագին սեղմեց նրա ձեռքը:

Փարիզ—Մարսել ճեպընթացը դեռ չեր յեկել: Տարտարենը և իր շքախումբը մտավ կայարանի դահլիճը: Բազմության առաջն առնելու համար կայարանապետը փակել տվեց կայարանի մուտքը:

Քառորդ փամի չափ Տարտարենը ճեմում եր դահլիճում շրջապատված գլխարկի վորսորդներով: Նա խոսում եր նրանց հետ իր ճանապարհորդության, իր վորսորդության մասին և խոստանում եր մորթիներ ուղարկել նրանց համար: Սմեն մեկն շտապում եր իր անունը գրել տալ նրա հուշատետրում, ինչպես հերթի յեն գրվում պարահանդեսի փամանակ:

Հանգիստ և զվարթ, ինչպես Սոկրատը թույնը խմելու բոպելին, անվեհեր տարակոնցին յուրաքանչյուրին մի-մի անուշ խոսք, մի-մի փայտ եր նվիրում: Նա խոսում եր պարզ, սիրալիր. կարծես թե մեկնելուց առաջ նա կամենում եր իր լետևից թողնել հմայք, վշտակցություն, բարի հիշատակներ:

Ասելով իրենց պետի այդ հրաժեշտի խոսքերը, բոլոր գլխարկի վորսորդներն աչքերը լցվում էին արցունքով, մի քանիսն էլ, ինչպես որինակ նախագահ Լադեվեզը և դեղավաճառ Բեդյուլքեն, սաստիկ խղճահարվում էին...

Ժողովուրդը դրսում կանգնած, վանդակների արանքից նայում էր և անդադար ազդողակում:

— Կեցցե՛ Տարտարենը...

Վերջապես զանգը հնչեց... շոգեկառքի խուլ դղրոցը և սուր շշակը թնդացրին կամարները... դեպի վագոն, դեպի վագոն:

— Գնաս բարձր, Տարտարեն... Գնաս բարձր, Տարտարեն:

— Մնաք բարով ամենքդ էլ, — ասաց մեծ մարդը և հանձին քաջասիրտ հրամանատար Բրավիդայի գրկեց և համբուրեց իր սիրելի Տարասկոնը:

Հետո արագ առաջ սլացավ և մտավ վագոններից մեկը, վորը լիքն էր փարիզեցիներով, վորոնք քիչ էր մնում վախից թուլանային, տեսելով այդ տարսրինակ մարդուն այնքան հրացաններով ու ատրճանակներով ծանրաբեռնված:

## ՄԱՐՍԵՅԼԻ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏԸ:— ԴԵՊԻ ՆԱՎ, ԴԵՊԻ ՆԱՎ

186... Թվի դեկտեմբերի 1-ին, կեսօրվա մոտ, ձմեռային մի գեղեցիկ ու պայծառ որ, մարտեպցիներն իրենց Կանբեյրի<sup>1)</sup> վրա զարմանքով նկատեցին մի «թուրք» պյո, մի այնպիսի թուրք, վորի նմանը նրանք յերբեք չէին տեսել, թեև վկա յե աստված, վոր Մարսեյում թուրքեր քիչ չեն պատահում:

Հարկ կամ արդյոք ասելու, վոր հիշյալ թուրքը Տարտարենն էր, Տարասկոնցի Տարտարենը, վորը քայլում էր ծովափի յերկայնքով, յետևից—զենքի արկղները, իր դեղարանը, իր կոնսերվի պաշարեղենները: Նա գնում էր դեպի Տուլաշ ընկերության նավամատուցը՝ նստելու «Ջուավ» կոչված նավը, վոր նրան պիտի տաներ այնտեղ:

Ականջները դեռևս լեցուն տարասկոնցիների աղմկալի ծափահարություններով, հարբած պայծառ արևից, ծովի բուլբուլից, Տարտարենը քայլում էր չերեսին լուսավառ մի ժպիտ, հրացան-

1) Մարսեյի գլխավոր փողոցը: Մ. Խմբ.

ներն ուսին, գլուխը բարձր բռնած և լայն բացած աչքերով դիտում եր Մարտելի հրաշալի նավահանգիստը, վորը նա տեսնում եր առաջին անգամ, և վորը նրան շլացնում եր... Խեղճ մարդը կարծես լերազի մեջ եր: Նրան թվում եր, թե՛ ինքը Սինբադ-Նավաստին<sup>1)</sup> ե և շրջում ե ֆանտաստիկական այն քաղաքներից մեկում, վորոնց նմանը շատ կա «Հազար ու մեկ գիշերների» մեջ:

Կայմերի մի անծայրածիր անտառ: Ծածանում եյին բոլոր պետութունների դրոշակները—ուսական, հունական, շվեդական, թուսիսյան, ամերիկյան... Նավամատուցի քարափին կպած նավերը, նոր ժամանած առագաստանավերը— խիտ-խիտ կանգնած եյին սլիփների շարքի պես: Առագաստանավերի վրա յերեվում եյին քանդակված հավերժահարսներ, աստվածուհիներ, սուրբ կույսեր և այլ քանդակներ, վորոնց անունով կոչվում ե նավը. այս ամենը մաշված ծովի ջրից, բորբոսնած, փտած, թաց:

Յերբեմն նավերի արանքում յերևում եր ծովի մի կտոր, կեղտոտ, կարծես ծածկված ձեթով: Կայմերի և առագաստակարների միջև ծովային արորիկների լերամներ գեղեցիկ սպիտակ բծեր եյին կազմում կապույտ յերկնակամարի վրա, փոքրիկ նավաստիներն իրար ձայն եյին տալիս բոլոր լեզուներով:

Նավամատուցի վրա, ոճառի գործարանից հոսող կանաչագուլյն թանձր, պղտոր, ձեթով և սողալով ծածկված առվակների միջև վխտում եր մաքսատան պաշտոնյաների, կոմիսիոներների, բեռնակիրների մի բազմութուն:

Շուրջն— անճոռնի պատրաստի հագուստեղենի խանութներ, բարակներ, վորտեղ նավաստիներն իրենց համար կերակուր եյին պատրաստում, ծխամորճ վաճառողներ, մարդիկ, վորոնք ծախում եյին կապիկներ, թուփակներ, պարան, առագաստի կտավ ու հազար ու մի արտառոց մանր-մունր իրեղեններ, խառնիխուռն՝ հին հրազեններ, վոսկեզոծ խոշոր լապտերներ, հինավուրց խարիսխներ կտորած ատամներով, հին նավասարք, ժանգոտած ճախարակներ, ժան Բարտի և Դյուգե—Տրուենի ժամանակից մնացած ծովային հեռադիտակներ: Խեցեմորթ վաճառող կանայք պպզած իրենց ապրանքի առաջ անասելի աղ-

1) «Հազար ու մեկ գիշերների» հեքյաթային հերոսներից մեկը: Խառնուհան եր Մ. խմբ.

մուկ եյին բարձրացնում: Նավաստիներն անցնում եյին ձեռքերին կալրի ամաններ, ծխացող կճուճներ, խոշոր զամբուլներ լի ծովալիւն կակղամորթ կենդանիներով, վորոնց տանում եյին լվանալու աղբուրներէ պղտոր ջրով:

Չորս կողմը կրտված եյին ահագին քանակութեամբ ամեն տեսակի ապրանքներ — մետաքսեղեն, հանքանյութեր, փայտեղեն, արճիճ, մահուդ, շաքար, Արևելքի և Արևմուտքի խառնուրդ, հոլանդական պանրի խոշոր կույտեր, վոր ձենովացի կանայք իրենց ձեռքով ներկում եյին կարմիր գունով:

Ավելի հեռուն հացահատիկի նավահանգիստն եր: Այստեղ բռնակիրները դատարկում եյին ցորենի պարկեր: Վոսկեզույն հեղեղի նման ցորենը հոսում եր կապտավուն փոշու ամպի մեջ: Կարմիր ֆեսավոր մարդիկ մաղում եյին ցորենը կաշվե խոշոր մաղերով և բարձում սալերի վրա, վորոնց լետեից քայլում եր կանանց և յերեխաների մի բազմութիւն՝ ձեռքին ավելներ և զամբուլներ... Ել ավելի հեռու — նավաշինարանն ե, վորտեղ կողքի վրա պառկած մեծ նավերը մաքրվում են նրանց կպած ծովային խոտերից. առագաստակալներն ընկած են ջրի մեջ, ռետինի հոտ, հյուաների խլացուցիչ աղմուկ, վորոնք նավի կողերը պատում եյին պղնձի շերտերով:


Յերբեմն կայմերի արանքում բացվում եր մի լուսավոր շերտ, այն ժամանակ Տարտարենը տեսնում եր նավահանգստի մուտքը, նավերի աշխույժ լերթեկը. Մալտա մեկնող մի անգլիական ֆրեգատ, զարդարված և մաքուր լվացված, վրան դեղին ձեռնոցներ. հազած սպաներով, կամ թե մարսելիական մի խոշոր առագաստանավ, վորը պարանն արձակում ե գոռոցների, հայհոյանքների մեջ, իսկ նավի հետևում կանգնած նավապետը ռենդինգոտով և մետաքսե գլխարկով, հրամաններ ե տալիս պրովանսական բարբառով: Ահա նավեր, վորոնք սլանում են բոլոր առագաստները պարզած: Ուրիշները, դեռ հեռվում, գալիս են դանդաղորեն — արևի լույսի մեջ, կարծես լողում են ողում:


Ամբողջ ժամանակ տիրում եր մի ահուելի ժխոր, սալերի դղրդոց, շոգենավերի սուլոցներ, թմբուկի և փողի ձայներ Սեն — ժան և Սեն — Նիկոլա չամրոցներից, զանգի ղողանջ բոլոր յեկեղեցիներից: Այս բոլորի վրա միտարալը<sup>1)</sup>, վորը վերցնում

1) Միտարալ — ուժեղ և ցուրտ քամի, վոր փչում ե հյուսիսից կամ հյուսիս-արևելքից հարավային Ֆրանսիայում: Մ. խմբ.

առնում է այս բոլոր աղմուկները, ժխտը, ցնցում է, խառնում էր սեփական ձայնին, կազմելով մի դժոխալին լերաժշտութիւն, վայրենի, հերոսական ինչպէս ճանապարհորդութեան հաղթական ֆանֆար, վոր մարդու մեջ տենչանք է արթնացնում մեկնել, գնալ հեռու, հեռու, թևեր առնել և թռչել:

Ահա այս գեղեցիկ Վֆանֆարի հնչյունները տակ էր, վոր անվեհեր Տարտարները նազ նստեց առյուծները յերկիրը մեկնելու համար:





ՅԵՐԿՐՈՐԴ ԴՐՎԱԳ

ՅՈՒՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ



ԾՈՎԻ ՎՐԱ:—ՖԵՍԻ ՀԻՆԳ ԴԻՐՔԵՐԸ:—ՅԵՐՐՈՐԴ ՈՐՎԱ  
ՅԵՐԵԿՈՅԱՆ:—ՈԳՆԵՑԵ՛Ք:

Յես կուզեյի, սիրելի ընթերցող, լինել նկարիչ, այն ել մեծ նկարիչ, վորպեսզի կարողանալի այս յերկրորդ դրվագի սկզբում ձեր աչքի առաջ պատկերացնել այն հինգ տարբեր դիրքերը, վոր ընդունեց Տարասկոնցի Տարտարենի ֆեսը՝ «Զուավ» նավով Ֆրանսիայից Ալժիր կատարված լերեք որվա ծովային ճանապարհորդության ժամանակ:

Նախ յես ցույց կտայի ձեզ այդ ֆեսը— ճանապարհ ընկնելու պահին՝ հերոսական և հպարտ կերպով նստած տարասկոնյան այդ գեղեցիկ գլխի վրա: Հետո յես ցույց կտայի ձեզ այն— նավահանգստից դուրս գալու ժամանակ, յերբ «Զուավը» սկսեց պարել ալիքների վրա; այս անգամ արդեն ֆեսն արտահայտում եր սառսուռ, զարմանք և ծովային հիվանդության նախազգացում:

Այնուհետև Լիոնի ծովածոցում, յերբ հետզհետե նավը դուրս եր գալիս բաց ծով, իսկ ալիքներն ավելի անհանգիստ եյին դառնում, յես ցույց կտայի ձեզ, թե ինչպես այդ ֆեսը պայքարի յեր մտնում փոթորկի հետ, ցցվում հերոսի գանգի վրա և նրա կապույտ բրդե փուռնը ծառանում եր դեպի վեր ծովային մառախուղի և մրրիկի մեջ... Չորրորդ դիրք. յերեկոյան ժամը 6-ին, յերբ յերևացին Կորսիկայի ափերը, տարաբախտ ֆեսը թեքվում եր նավի կողքից ցած և խղճալիորեն նայում և հետազոտում եր ծովը... Վերջապես հինգերորդ և վերջին դիրքը—նավի փոքր խցում, մի նեղ անկողնի վրա, վորը պահարանի արկղի տեսք ունեեր, ինչ վոր անձև և անմխիթար բան թավալվում ե տնքալով բարձի վրա: Դա

Ֆեսն է, ուղևորութեան սկզբի հերոսական ֆեսը, վորն այժմ հասել է ծոպավոր թասակի խղճալի վիճակին և մինչև ականջները խրվել է սփրթնած և շղաճիգ մի հիվանդի գլխի վրա:

Ո՛ր, լեթե տարասկոնցիները տեսնելին իրենց մեծ Տարտարենին պառկած պահարանի արկղի նմանող անկողնու մեջ, կիսամութ, մռայլ խցիկում, նավի խոհանոցի և թաց փալտի հոտով ապականված ծանր և սիրտ խառնող ողի մեջ, յեթե նրանք լսելին, թե ինչպես եր նա խոխուացնում նավի պառտակի յուրաքանչյուր հարվածին, հինգ բոպեն մի անգամ թեյ եր պահանջում և մանկական թույլ ձայնով հայհոյում սպասավորին, — անշուշտ նրանք պիտի զղջային, վոր ստիպել են նըրան ճանապարհ ընկնելու... Հավատացնում եմ պատմագրի ազնիվ խոսքով, վոր խղճալի յեր մեր անբախտ «թուրքի» վիճակը: Ծովի հիվանդությունից հանկարծակիի յեկած՝ թշվառ, ժամանակ չեր ունեցել արձակելու մեջքի ալժիրական գոտին, վոչ ել ազատվելու իր սպառազինությունից: Հաստ կոթով վորսի դանակը սեղմում եր նրա կուրծքը: Ատրճանակի կաշվե պատյանը տրորում եր նրա կողքը և այս բոլորին վորպես լըրացում — Տարտարեն-Մանչոն ել մյուս կողմից եր անդադար տրտնջում և հայհոյում:

— Հիմար, տեղն ե... յես քեզ չեցի ասում... Հը՛, ուզում ելիր անպատճառ Աֆրիկա գնալ... Համեցեք, այդ ել քեզ Աֆրիկան, ինչպես ե...

Բայց ամենից ատելին այն եր, վոր մինչդեռ Տարտարենը տնքում եր իր փոքրիկ խցի մեջ, այնտեղ—ընդհանուր դահլիճում մյուս ուղևորներն անդադար ծիծաղում, ուտում, խմում, յերգում և թուղթ ելին խաղում: «Զուավի» վրա այս անգամ կար ուրախ և բազմամարդ հասարակություն, սպաներ, վորոնք գնում էլին միանալու իրենց զորամասերին, թեթև կանայք, թափառական դերասաններ, մի հարուստ մահմեդական, վոր վերադառնում եր Մեքքայից, Չերնոգորիայի մի իշխան, խիստ կատակաբան, վորը նմանեցնում եր Ռավելին և Ժյուլ—Պերելին...

Դրանցից և վոչ մեկին ծովը չեր բռնում և նրանք ամբողջ ժամանակ շամպայն էլին խմում «Զուավի» նավապետի հետ, վոր մի շատ ուրախ և քեֆ սիրող մարսելցի լեր Բարբառու անունով և յերկու կին եր պահում— մեկը Մարսելում, մյուսն Ալժիրում:

Տարտարենն իր մտքում անիծում եր այդ սրիկաներին, վորոնց ուրախությունը կրկնապատկում եր նրա տանջանքը:

Վերջապես լերբորդ որը կեսորից հետո մի արտասովոր շարժում սկսվեց նավի վրա, վոր ստիպեց մեր հերոսին սթափվել թմրությունից: Զանգը հնչում եր, լավում եր նավաստիների ծանր կոշիկների աղմուկը:

— Մեքենան դեպի առաջ, մեքենան դեպի լետ,— գոռում եր նավապետ Բարբասուն խուպոս ձայնով:

Հետո լավեց— «մեքենա, ստոպ», հանկարծակի մի ցնցում և հետո ուրիշ վոչինչ... և նավը կանգ առավ, ճոճվելով ջրի վրա աջ և ձախ, ինչպես ողապարիկն ողում:

Հանկարծական լուռութունը սարսափ պատճառեց Տարտարենին:


— Ոգնեցե՞ք, ոգնեցե՞ք, խեղդվում ենք,—գոռաց նա ահուկի ձայնով և կարծես թե հրաշքով վերստանալով իր ուժերը, վեր թռավ տեղից և սլացավ դեպի նավի տախտակամածը իր ամբողջ սպառազինութամբ:

## Ի գե՛Ն, ի գե՛Ն

Խեղդվելու բան չկար, նավը տեղ եր հասել:

«Զուավը» արդեն մտել եր նավակայանը, սև ու խոր ջրերով մի գեղեցիկ նավակայան, բայց բոլորովին լուռ և տխուր, համարյա թե ամայի: Դեմ ու դեմը՝ մի բլրակի վրա սպիտակին եր տալիս Ալժիրը իր կաթնագույն տնակներով, վորոնք իրար սեղմված իջնում եյին դեպի ծովը, կարծես սպիտակեղեն լիներ փոված Մեղոն բլրի վրա: Վերևում ալժիրական կապույտ յերկինքը, ո՛ր, վորքան կապույտ:

Հռչակավոր Տարտարենը, իր սարսափը մոռացած, դիտում եր այդ գեղեցիկ տեսարանը և ակնածությամբ ականջ եր դնում Զերնոգորիայի իշխանին, վոր նրա կողքին կանգնած տալիս եր քաղաքի զանազան թաղերի անուները — Կասբանը, Վերին քաղաքը, Բաբ—Ազում փողոցը: Շատ կրթված մարդ եր այդ իշխանը. սահուն խոսում եր արաբերեն: Տարտարենը իր մտքում արդեն վճռել եր մտերմանալ նրա հետ... Մեկ ել հանկարծ, յերբ նրանք զրուցում եյին հենված նավի ճաղերին, Տարասկոնցին նկատեց բազմաթիվ կոշտ ու սևագույն ձեռքեր, վորոնք դրսից կառչում եյին նավի կողքին: Նույն բո-



պելին նրա առջև լերևաց մի նեզրի գանգրահեր գլուխը և մի  
ակնթարթում, նախքան Տարտարենը բերանը բաց կաներ, նա-  
վի տախտակամածն ամեն կողմից արդեն բռնված էր հարլուրա-  
վոր սևամորթ, դեղնամորթ, կիսամերկ և ահուկի ծովահեններով:

Տարտարենը լավ էր ճանաչում դրանց... այդ նրանք էին,  
այն նշանավոր նրանք, վորոնց նա քանի-քանի անգամ գիշերով  
փնտրել է Տարասկոնի փողոցներում: Ահա վերջապես նրանք  
գալիս էին:

... Նախ և առաջ նա անակնկալից տեղն ու տեղը սառած  
մնաց, բայց յերբ տեսավ, վոր ծովահենները հարձակվում են  
արկղների և պալուսակների վրա, պոկում են նրանց վրայի կտավե  
ծածկոցները և վերջապես սկսում են կողոպտել նավը, այն ժա-  
մանակ հերոսն իսկույն ուշքի յեկավ և վորսորդական դանակը  
պատայանից հանելով «ի զեն, ի զեն» գոռաց և ինքն ամենից  
առաջ հարձակվեց ծովային ավազակների վրա:

— Ի՞նչ կա, ի՞նչ լեղավ ձեզ,— շտապեց հարցնել նավապետ Բարբասուն, վորը բարձրանում էր նավախորշից:

— Այդ դժււք էք, կապիտան, շուտ հասեք, շուտ, դինեցեք ձեր մարդկանց:

— Ինչո՞ւ համար, մարդ աստուծո՞ւ:

— Ինչպէս թե ինչու, մի՞թե չեք տեսնում...

— Ի՞նչը չեմ տեսնում...

— Այ... սրանք... ծովահենները...

Նավապետն ապուշ-ապուշ նայեց Տարտարենին: Այդ բոպեյին մի ահագին խափշիկ—մեր հերոսի դեղարանը կռնակին՝ վազելով անցնում էր նրա կողքից:

— Սպասի՛ր, — գոռաց Տարասկոնցին և դաշույնը ձեռքին վազեց դեպի առաջ:

Բարբասուն հասավ նրա յետևից և բռնեց նրա գոտուց:

— Հանգիստ կացեք, գրողը տանի, սրանք ծովահեններ չեն... ծովահենները վաղուց ե ինչ վերացել են աշխարհի յերեսից... սրանք բեռնակիրներ են:

— Բեռնակիրներ...

— Այո, հասարակ բեռնակիրներ, վորոնք բազաժը տեղափոխում են նավից ցամաքի վրա: Յետ դրեք ձեր դանակը պատյանի մեջ, տվեք ձեր տոմսակը և հանգիստ գնացեք այդ սևամորթի հետևից: Նա լավ տղա լե և կառաջնորդի ձեզ հյուրանոց, լեթե կամենաք...

Տարտարենը, փոքր ինչ ընկձված, տվեց իր տոմսակը և խափշիկի հետևից իջավ մի խոշոր մակուկի մեջ, վորը նավի կողքին թռչկոտում էր արեւմտի վրա: Այնտեղ արդեն դարսված եյին նրա բոլոր արկղները, զենքերը և ճանապարհի պաշարեղենը: Խափշիկը բարձրացավ այդ արկղների դեզի վրա և ծնկները ձեռքերի մեջ առած կապիկի նման պղզեց. մի ուրիշ խափշիկ էլ սկսեց թիավարել:

Յերկուսն էլ ծիծաղելով նայում եյին Տարտարենի յերեսին, ցուցց տալով իրենց սպիտակ ատամները:

Կանգնած նավակի յետևի մասում, դեմքին այն ահռելի ծամածոտութունը, վոր սարսափ էր ազդում իր հայրենակիցներին, մեծ Տարտարենը շղաձգորեն սեղմում էր իր դանակի կոթը: Չնայած Բարբասույի բացատրություններին, նա դեռևս բոլորովին վստահ չէր, թե ինչ մտադրություն ունեյին այդ սևամորթ բեռնակիրները, վորոնք բնավ նման չելին Տարասկոնի մարդավարի բեռնակիրներին:

Հինգ ըոպեյից հետո նավակը կանգ առավ ցամաքի մոտ և Տարտարենը վոտք դրեց այն բարբարոսական ափի վրա, վորտեղ լերեքհարյուր տարի առաջ մի սպանացի թխապարս Միգուեւի Սերվանտես անուանով, ալժիրական գերութւան մեջ հղանում եր այն չնաշխարհիկ վեպը, վոր պիտի կրեր «Դոն-Կիխոտ» անունը:

ԳԻՄՈՒՄ ՍԵՐՎԱՆՏԵՍԻՆ: — ԺԱՄԱՆՈՒՄ: — Ո՛ՒՐ ԵՆ  
«ԹՈՒՐԻՔԵՐ», «ԹՈՒՐԻՔԵՐ» ԶԿԱՆ: — ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ

Ո՛վ Միգուեւի Սերվանտես Սաավեդրա, լեթե ճշմարիտ ե, վոր այն վայրերում, ուր ապրել են մեծ մարդիկ, նրանցից միշտ մնում ե մի ինչ վոր բան, վոր թափառում և սավառնում ե ողբի մեջ մինչև դարերի վերջը, ապա ուրեմն այն, ինչ մնացել եր քեզանից այդ բարբարոսկան կան ափերում, պիտի ցնծար և խայտար Տարասկոնցի Տարտարենին, հարավային Ֆրանսիացու այդ սքանչելի տիպարին, վորի մեջ մարմնացած էին քո գրքի լերկու հերոսները — Դոն-Կիխոտը և Սանչո-Պանսան:

Որը տաք եր և արևոտ: Ծովափին՝ մաքսատան հինգ կամ վեց ծառայողներ, «ալժիրցիներ», վորոնք Փրանսիայից լուր ելին սպասում, մի քանի մավրիտանցի արաբներ, վորոնք ծալապատիկ նստած ծխում էին իրենց լերկար չիբուխները, և մի քանի մալթացի նավաստիներ մեծ ուռկաններով սարդին էին վորսում. հազարավոր ճերմակ ձկնիկներ արծաթի դրամների նման պսպղում էին ցանցերի արանքից:

Բայց հենց վոր Տարտարենը վոտքը դրեց ցամաքի վրա, ամբողջ ծովափը կենդանացավ, կերպարանափոխվեց: Մի խումբ վայրենիներ ավելի ահռելի քան նավի ծովահենները, կարծես գետնի տակից բսնելով, չորհ տվին մեր ճանապարհորդի վրա: Բարձրահասակ արաբներ, գրեթե մերկ, ծածկված միայն բրդե սավաններով, կարճահասակ մավրեր — ցնցոտիների մեջ փաթաթված, նեգրեր, թունուզցիներ, մահոհիներ, մզաբեթներ, հյուրանոցի սպասավորներ, ճերմակ գոգնոցներով — ամենքը բղավում էին, կախ ընկնում Տարտարենի գլխատներից, իրար հետ կռվում իրեղենների համար: Մեկը պաշարեղենն եր քաշտալիս, մյուսը դեղարանը և բոլոր միասին լեզուների տարորինակ մի

խառնուրդով զանազան հյուրանոցների աներևակայելի անուաններ եյին տալիս...

Այդ գոռում-գոչումից գլուխը կորցրած խեղճ Տարտարենը վազվզում եր դես ու դեն, հրում եր սրան, նրան, բարկանում եր և չիմանալով, թե ինչ կերպ լեզու հասկացնի այդ բարբարոսներին— ճառում եր ֆրանսերեն պրովանսական բարբառով և մինչև անգամ լատիներենով, Պուրսոնյակի<sup>1)</sup> լատիներենով—rosa, bonus, bona, bonum...

Ձուր աշխատանք: Նրան վոչ վոք չեր լսում... Բարեբախտաբար այդ բոպեյին մի կարճահասակ մարդ, համազգեստով, դեղին ոճիքով, մի յերկայն գավազանով զինված հոմերոսյան աստծու պես այդ հարահրոցի մեջ մտավ և գավազանի հարվածներով ցրեց խառնիճաղանճ ամբոխը: Այդ մարդը քաղաքի վոստիկաններից մեկն եր: Շատ քաղաքավարի կերպով նա առաջարկեց Տարտարենին իջնել «Յեվրոպա» հյուրանոցը և նրան հանձնեց այդ հյուրանոցի սպասավորներին, վորոնք Տարտարենին և նրա իրեղենները տարան՝ բարձած մի քանի սայլակների վրա:

Հենց առաջին քայլերից Տարտարենը մնաց ապշած, բերանը բաց: Նա Ալփիբը յերևակայում եր մի արևելյան, առասպելական, կախարդական քաղաք, մի ինչ վոր խառնուրդ Կոստանդնուպոլսի և Ջանզիբարի... Իսկ այժմ նրա առաջ կարծես նույն Տարասկոնն եր... Սրճարաններ, ճաշարաններ, լայն փողոցներ, չորս հարկանի տներ, մի փոքրիկ սալահատակած հրապարակ, վորտեղ զինվորական լերաժողատախումբը նվագում եր Ոֆֆենբախի պոլկաները, աթոռների վրա նստած պարոններ գարեջուր եյին խմում, տիկիներ, մի քանի թեթևաբարո կանալք և հետո զինվորականներ, ելի զինվորականներ, շարունակ զինվորականներ և վոչ մի հատ թուրք... Այո, վոչ մի հատ, բացի իրենից: Նա սկսեց մինչև անգամ քաշվել. յերբ անց եր կենում հրապարակից ամենքը նրան եյին նայում: Զինվորական լերաժողոտները կանգ առան և Ոֆֆենբախի պոլկան մի պահ ողում կախ մնաց:

Ձուլգ հրացաններ ուսերին՝ ատրճանակը կողքին—խստադեմ և վեհ ինչպես Ռոբինզոն Կրուզոն, Տարտարենը ծանր քայ-

1) Պուրսոնյակ—Մոլիերի կոմեդիաներից մեկի գլխավոր անձնավորութունը: Մ. խմբ.

վերով անցավ այդ բոլոր խմբերի միջով, բայց յերբ հյուրանոց հասավ, նա այլևս անկարող եր դիմանալ: Ուժեերը լքեցին նրան: Տարասկոնի հրաժեշտը, Մարսելի նավահանգիստը, ծովը, Վերնոգորիայի իշխանը, ծովահենները, — այդ բոլորը խառնըվել, շփոթ ելին առաջացրել նրա գլխի մեջ... Նրան գրկեցին և ներս տարան իր սենյակը, զինաթափ արին, շորերը հանեցին և ուզում էին մարդ ուղարկել բժշկի հետևից, բայց մեր հերոսը հենց վոր գլուխը դրեց բարձին, սկսեց այնպիսի ուժով և քաղցր խումփացնել, վոր հյուրանոցի տերն այլևս ավելորդ համարեց պատուժյան ոգնությանը դիմել, և ամենքը կամացուկ դուրս յեկան սենյակից:

## ԱՌԱՋԻՆ ԳԱՐՍՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Նավահանգստի պալատի ժամացույցը ժամը յերեքն եր խփում, յերբ Տարտարենը դարթնեց: Նա քնել եր մի ամբողջ յերեկո, մի ամբողջ գիշեր, մի ամբողջ առավոտ և կեսորից հետո ել բավական ժամանակ: Ի՞նչ ասել կուզի, վոր խեղճ Ֆեսը յերեք ծանր որեր եր անցկացրել...

Աչքերը բաց անելուն պես հերոսի առաջին միտքը լեղավ հետևյալը. «Այժմ յես առյուծների աշխարհումն եմ», և ի՞նչու ինքզնի, մտածելով, վոր առյուծներն ալնտեղ են, յերկու քայլի վրա, համարյա քթի տակ, վոր պետք է դեմ առ դեմ հանդիպել նրանց հետ, բռռռ... մի սառը դող անցավ նրա մարմնով և նա քաջաբար մտավ վերմակի տակ...

Սակայն մի պահ հետո դրսի պայծառ յեղանակը, կապուտակ յերկինքը, սենյակը լույսով զեղող արևը, համեղ նախաճաշիկը, վոր նա վայելեց անկողնում, բաց լուսամուտից դիտելով ծովը, և այս բոլորի վրա ավելացրած մի շիտ սքանչելի գինի, սրան կրկին առաջվա հերոսը դարձրին:

«Ինպի՞ առյուծները» — աղաղակեց նա դեն նետելով վերմակը և արագորեն հագնվեց:

Ահա նրա գործողության ծրագիրը. առանց վոչ վոքի մի բան ասելու դուրս գալ քաղաքից, մտնել անապատի խորքերը, սպասել մինչև գիշերը վրա հասնի, դարանամուտ լինել և առաջին առյուծը հանդիպելուն պես դհւմ — բհւմ... Հետո մյուս առավոտ վերադառնալ «Յեվրոպա» հյուրանոց, մի լավ նախաճաշիկ անել, ընդունել արժիրաբանակ հայրենակիցների շնորհա-

վորութիւնները և մի սայլ ուղարկել գազանը քաղաք բերելու համար:

Նա շտապ սպառազինվեց, ծալովի վրանը ձգեց կռնակին, անպես վոր վրանի փայտը մի վոտնաչափ բարձրանում եր նրա գլխից վեր, և ցցի պես վիզն ուղիղ բռնած դուրս յեկավ փողոց: Վորպեսզի վոչ վոք նրա մտադրութունը չհասկանա, նա վոչ վոքից հարց ու փորձ չարավ ճանապարհի մասին, այլ դիմեց դեպի առաջ, հասավ մինչև Բաբ—Ազունի կամարակապ շուկան, վորտեղ բազմաթիւ ալժիրական հրեաներ սարդերի նման դարան մտած իրենց մութ կրպակներում նայում եյին նրա վրա, անցավ թատրոնական հրապարակից, մտավ քաղաքի արվարձաններից մեկը և վերջապես դուրս յեկավ Մուստաֆայի փողոց պողոտան:



Այդ պողոտայի վրա տիրում եր աներևակայելի իրարանցում, հանրահառքեր, հասարակ կառքեր, ֆուրգոններ, յեզանսայլեր խոտի բեռներով, Աֆրիկյան հեծելազարի եսկադրոններ, փոքրիկ եշերի կարավաններ, գալետ ծախող նեզրուհիներ, ալզասցի գաղթականների սայլեր, կարմիր արա հագած սպահիներ: Այդ ամենը՝ փոշու ամպերով ծածկված, հարահրոցի, յերգի, ղինվորական փողերի խլացուցիչ ձայների մեջ:

Ճանապարհի լերկու կողմերը փռված եյին ղինվորներով լեցուն գինետներ, մսավաճառի կրպակներ և փալտե կեղտոտ կասկածելի շինութիւններ...

— Ա՛յս ե սրանց դոված Արևելքը, — մտածում եր մեծ Տարտարենը, — Մարսելի չափ ել թուրք չկա այստեղ:

Մեկ ել հանկարծ նրա աչքին ընկավ մի փառավոր ուղտ, վոր հնդկահավի նման փքված ահազին քայլերով անցնում եր նրա մոտով: Տարտարենի սիրտը սկսեց բաբախել:

Ահա արդեն ուղտերը, ուրեմն առյուծներն ել շատ հեռու չեն:

Յեվ իրոք մի քիչ հետո նա նկատեց մի խումբ առյուծի վորսորդներ, վորոնք հրացաններն ուսերին գալիս եյին իր դիմաց:

Վախկոտներ, մտածեց մեր հերոսն անցնելով նրանց մոտից, — վախկոտներ, չեն ամաչում խմբով են դուրս գալիս առյուծ վորսալու և այն ել շները յետևներից ձգած»: Նրա մըտքովն անգամ չեր անցնում, վոր Ալփիրում բացի առյուծից ուրիշ կենդանու վորս ել կարող ե լինել: Սակայն ալդ վորսորդներն ունեյին գործը թողած առևտրականի այնպիսի կերպարանք, և հետո շներով ու պայուսակներով առյուծ վորսալու այդ յեղանակն ալն աստիճանի նահապետական եր, վոր Տարասկոնցի հերոսի հետաքրքրութունը շարժվեց, նա մոտեցավ նրանցից մեկին.

— Ինչպե՞ս ե, ընկեր, վորսը լսվ ե:

— Վատ չե, — պատասխանեց վորսորդ, գարմանքով լի մի հայացք ձգելով Տարասկոնցի ուղմիկի ահավոր սպառազինութեան վրա:

— Իսկի սպանեցի՞ք, թե չե:

— Ինչպես չե... բավականին, մյ նախեցեք... և ալփիրցի վորսորդը ցույց տվեց իր ահազին պայուսակը, վորը լիքն եր ճագարներով և բեկասներով:

— Պահ, պայուսակում... միթե նրանց պալուսակի մեջ եք ղնում...

— Հապա թւր պիտի դնենք:

— Ուրեմն նրանք պետք ե վոր շատ մանր լեղած լինեն...

— Ալո, մանր ել կան, խոշոր ել, — ասաց վորսորդը և ընտապեց միանալ իր ընկերներին:

Անվեհեր Տարտարենն ապուշ կտրած կանգնած մնաց ճանապարհի մեջտեղում... Հետո մի քանի ըոպե խորհելուց հետո, մտքում ասաց. «Եհ, սրանք դատարկապորտներ են, մի հատ ել սպանած չեն լինի», և շարունակեց իր ճանապարհը:


Կամաց-կամաց անցուղարձ անողները պակասում եյին, տները նույնպես: Գիշերը վրա լեր հասնում, առարկաները լավ

չեյին ջոկվում: Տարասկոնցի Տարտարենը կես ժամ ել քայլեց: Կանգ առավ... արդեն կատարյալ գիշեր էր, անլուսնկա, աստղազարդ գիշեր: Ճանապարհի վրա այլևս վոչ վոք չեր յերևում: Չնայած դրան — մեր հերոսն իրավացիորեն մտածեց, վոր առյուծները գիլիժանաներ չեն, վոր դուրս գան մեծ ճանապարհի վրա, ուստի և նա ճանապարհը շեղեց դեպի դաշտը... Ամեն քալափոխին նա հանդիպում էր փոսերի, փշերի, թփերի, բայց այդ ամենը վոչինչ. նա շարունակում էր առաջ գնալ... մեկ ել հանկարծ նա կանգ առավ:

— Այստեղից առյուծի հոտ է գալիս, — ասաց մեր հերոսը ինքն իրեն և սկսեց աջ ու ձախ հոտոտել:

## ԲՈՒՄ — ԲՈՒՄ

Նրա առաջ փոված էր մի անծայրածիր վայրի անապատ, ծածկված Արևելքի այն տարրիկնակ բույսերով, վորոնք նման են չար գազանների: Աստղերի աղոտ լույսի տակ նրանց խոշոր բացած ստվերները տարածվում էին գետնի վրա ամեն ուղղութեամբ: Այլ կողմն աղոտ կերպով նշմարվում էր մի լեռան




լայնանիստ և ծանր զանգվածը — գուցե Ատլասն էր... Ձախ կողմը խուլ մոնչում էր անտեսանելի ծովը... գազաններին հրապուրելու իսկական վայր...

Հրացաններից մեկն առջևը դրած, մյուսը ձեռքում բռնած Տարասկոնցի Տարտարենը մի ծունկը չոքեց և սպասեց...

սայասեց մի ժամ... յերկու ժամ... վոչ մի բան: Այն ժամանակ նա մտաբերեց, վոր իր դիրքերում նշանավոր վորսորդները առյուծներին հրապուրելու համար միշտ իրենց հետ վերցնում են մի ուլ. այդ ուլի վտոր թոկով կապում են և թոկը քաշելով ստիպում են նրան մկկալ: Տարտարենն իր հետ ուլ չունենալով, մտածեց ինքը նրա տեղը բռնել և սկսեց ուլի նման «մեմե» մկկալ:

Սկզբում նա շատ կամաց եր մկկում, վորովհետև այնուամենայնիվ սրտի խորքում նա վախենում եր, վոր չլինի թե առյուծը հանկարծ լսի և գա... բայց հետո տեսնելով, վոր վոչ վոք չի գալիս, նա սկսեց ավելի բարձր ձայնով մկկալ. «մե-



մե»: Դարձյալ վոչինչ չերևաց... Վերջապես համբերութունից դուրս գալով նա մի անգամ իրար յետևից «մե... մե... մե...» մկկաց և այն ել այնպիսի ուժով, վոր կարծես ուլը կամաց—կամաց յեղ եր դարձել:

Հանկարծ նրանից մի քայլ հեռու մի ահագին սև բան դուրս պրծավ... Տարտարենը ձայնը գցեց փորը: Ահագին սև բանը կռանում եր, գետինը հոտոտում, թռչկոտում, թավալվում, մեկ՝ արագ վազքով հեռանում, մեկ՝ վերադառնում և մեկեն կանգ առնում... Կասկած չկա, այդ մի առյուծ եր... Սրդեն շատ պարզ յերևում ելին նրա չորս կարճիկ թաթերը, հուժկու պարանոցը և մթուժյան մեջ փայլատկող զույգ աչքերը: Նշան, կրակ, բռն-բռն... Գործը կատարված ե— Հետո նա հանկարծ մի քայլ հետ ցատկեց և քաշեց վորսորդական դանակը:

Հրացանի ձայնին պատասխանեց մի սարսափելի մռնչուուն:

— Դիպած,— բացականչեց քաջ Տարասկոնցին և իր ուժեղ վրտների վրա հենված պատրաստվեց դիմագրավել գազանին, սակայն վերջինս յերևի ստացել էր իր հաշիվը, և վրոնալով փախավ կրնկակոխ: Տարտարենն սակայն տեղից չշարժվեց: Նա սպասում էր եզ առյուծին... ճիշտ այնպես, ինչպես կարդացել էր իր գրքերում:

Բայց դժբախտաբար եզը չերևաց: Յերկու—յերեք ժամ սպասելուց հետո Տարասկոնցին սաստիկ հոգնեց: Գիշերվա ցողից գետինը խոնավացել էր, ողբ ցրտում էր, ծովալին քամին էլ կծում էր:

«Արի մի փոքր քննե՛ք մինչև լուսաբաց» — ասաց ինքն իրեն մեր հերոսը և ցրտից պաշտպանվելու համար դիմեց ծալովի վրանի ոգնութվան: Բայց սատանի նման այդ վրանը մի այնպիսի բարդ կառուցվածք ունեւր, վոր ինչ արավ—չարավ՝ չկարողացավ բաց անել:

Չուր էր նա մի ամբողջ ժամ պայքարում ու քրտնում, անիծյալ վրանը չեր ուզում բացվել: Պատահում է, վոր հեղեղանման անձրևի ժամանակ մի կարգ հովանոցներ ճիշտ այդպիսի խաղ են խաղում մարդու գլխին:

Վերջը ճարահատված Տարասկոնցին գետին շարտեց վրանը և պառկեց վրան, հայրությանքներ թափելով իսկական պրովանսալց: և նման:

— Տն տն րա տա, տարատն...

— Այս ի՞նչ էր,— բացականչեց Տարտարենը քնից հանկարծ վեր թռչելով:

Այդ գինվորական փողի ձայնն էր, վոր լսվում էր մոտակա գորանոցներից: Արդեն լուսաբացի փողն ելին փչում... Առյուծների վորսորդն ապշած, աչքերն էր տրորում... Նա, վոր իրեն կարծում էր ամալի անապատի մեջ... այժմ գիտե՞ք ուր էր գտնվում... մի բանջարանոցում, մի կողմից ծաղկակաղամբի, մյուս կողմից ճակնդեղի տունկերի մեջ:

Տարտարենի Մահարայում բանջարեղեն էր բսնում: Շատ մոտիկ, Մուստաֆայի կանաչագարդ կողբրի վրա արշալույսի պայծառ ցողի մեջ շողշողում էին այժիրական ձյունասպիտակ վիլաները, ճիշտ նման Մարսելի շրջակա ամառանոցներին:

Այդ խաղաղ տեսարանի բանջարանոցային և քաղքենա-

կան կերպարանքը խիստ զարմացրեց մեր խեղճ հերոսին և լցրեց նրա սիրտը դառնությամբ:

— Այստեղ մարդիկ բոլորովին հիմար են,—ասում էր նա ինքն իրեն,—առյուծների կողքին կաղամբ ու ճակնդեղ են ցանում: Յերազ հճ չեր տեսածս... առյուծները մինչև այստեղ են հասնում: Ահա ապացույցը...

Ապացույցն այն արյան բծերն էին, վոր դազանը փախչելու ժամանակ թողել էր իր հետևից: Այդ արյունոտ հետքերի վրա կռացած, աչքերը չորս բաց արած, ատրճանակը ձեռքին, քաջասիրտ Տարասկոնցին կաղամբից-կաղամբ թռչելով վերջապես հասավ մի փոքրիկ արտ, վորտեղ վարսակ էր ցանած... Այստեղ ձխլտված խոտի վրա, արյան լճակի մեջ, մի ահազին վերք գլխին կողքի վրա պռակած էր մի... հապա իմացեք թե ինչ...

— Իհարկե առյուծ, ուրիշ ինչ կարող էր լինել:

— Վնչ, եղ, մեկն այն մանրիկ եղբրից, վորոնք այնքան տարածված են Ալժիրում, և այնտեղ ծանոթ են «բառուիկո»<sup>1)</sup> առնում:

**ԵԳ ԱՌՅՈՒԾԻ ՅԵՐԵՎԱԼԸ:—ՍԱՐՍԱՓԵԼԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ:**  
—ՃԱԳԱՐՆԵՐԻ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ:

Տեսնելով իր դժբախտ զոհին, Տարտարենը նախ և առաջ զգաց սրտնեղություն և զայրույթ: Յեվ իսկապես, ինչ ահազին տարբերություն առյուծի և ավանակի մեջ... բայց հետո դրան հաջորդեց կարեկցության զգացումը: Խեղճ իշուկն այնպես լավիկն էր, այնպես բարի կերպարանք ուներ: Նրա կողբի կաշին, վոր դեռևս չեր սառել, ալիքի նման բարձրանում և իջնում էր: Տարտարենը չոքեց իշուկի առաջ և իր ավժիրական լայն գոտիով աշխատում էր կանգնեցնել արյան հոսանքը: Մեծ մարդը խնամում էր փոքրիկ իշուկին... ինչ սրտաճմլիկ տեսարան:

Իշուկը, վոր դեռ չեր փչել իր վերջին շունչը, մետաքսի գոտու քնքուշ հպումից բաց արավ իր գորշագույն խոշոր աչքերը, յերկու թե յերեք անգամ լերկար ակնջները շարժեց, կարծես ուզում էր ասել. «Շնորհակալ եմ, շնորհակալ եմ»:

1) Իռուկ:

Հետո վերջին մի ցնցում անցավ նրա մարմնով և նա այլևս չշարժվեց:

— Սևուկս, սևուկս, — ճչաց հանկարծ վշտից խեղդված մի ձայն, և նույն րոպեյին մերձակա թփերը շարժվեցին... Տարտարենը հագիվ կարողացավ ցատկել վտառի վրա և պաշտպանողական դիրք բռնել... Այդ եզ առյուծն էր:

Յեկավ կատաղած ու մռնչալով: Նա ուներ արգասցի մի պառավ կնոջ կերպարանք, զինված էր մի ահագին կարմիր հովանոցով և ողբ թնդացնում էր իր իշուկին կանչելով: Անտարակույս Տարտարենն ավելի կգերադասեր գործ ունենալ մի կատաղած եզ առյուծի հետ, քան թե ջաղու պառավի հետ: Իգուր էր խեղճը փորձում բացատրել պառավին լեղելության պատճառը, թե ինչպես նա սխալմամբ սևուկին առյուծի տեղ է ընդունել... Պառավը, կարծելով, վոր ծաղրում է իրեն, սոսկալի անեծքներ թափելով, հարձակվեց մեր հերոսի վրա և սկսեց ձեռքի հովանոցով հարվածներ տեղալ նրա գլխին: Տարտարենը ամոթից մի քիչ շփոթված, աշխատում էր պաշտպանվել ինչքան կարող էր: Իր ձեռքի կարճ հրացանով նա հետ էր մղում հովանոցի հարվածները, քրտնքի մեջ կորած դեռ ու դեն էր թռչկո-



տում և անդադար գոռում եր. «Բայց, տիկին, խնդրեմ... տիկին...»:

Ո՞ւրիս ես ասում, տիկինը կարծես խուլ եր և կրկնապատկած ուժով վրա յեր տալիս:

Բարեբախտաբար ալզ ըոպեյին մի յերրորդ անձնավորութիւնն յերևաց ուղմադաշտի վրա: Այդ ալզասցի պառավի ամուսինն եր, ինքն ել ալզասցի և պանդոկապան, վոր շատ լավ գիտեր իր հաշիվը: Յերբ նա տեսավ, թե ում հետ գործ ունի և իմացավ, վոր սպանողը համաձայն եր վճարել իր զոհի գինը, իսկույն զինաթափ արավ պառավին և գործը կարգի դրեց:

Տարտաբենը վճարեց յերկու հարյուր Ֆրանկ, իսկ ավանակն արժեք շատ-շատ տասը Ֆրանկ: Այդքան եր իշուկների սովորական գինն արաբական շուկաներում: Այնուհետև նրանք թաղեցին սևուկին մի թղենու տակ և պանդոկապետը, զվարթացած տարասկոնյան վոսկիների փայլով, հրավերեց մեր հերոսին իր պանդոկը, վորը գտնվում եր մի քայլ հեռու, մեծ ճանապարհի կողքին...

Ալժիրցի վորսորդներն ամեն կիրակի հավաքվում ելին ալզ պանդոկում նախաճաշելու, վորովհետև դաշտը վորսառատ եր և ամբողջ շրջակայքում ճագարների կողմից դրանից լավ տեղ չկար:

— Իսկ առյուծներ,— հարցրեց Տարտաբենը.

Ալզասցին զարմանքով նայեց նրան.

— Առյուծներ:

— Այո, առյուծներ, միթե առյուծներ յերբեք չեն պատահում, — շարունակեց խեղճ մարդն ալս անգամ արդեն փոքր ինչ անվստահ ձայնով:

Պանդոկապետը քահ-քահ ծիծաղեց:

— Ի՞նչ առյուծ, ի՞նչ բան... առյուծներն ալստեղ ինչ գործ ունեն:

— Բայց միթե Ալժիրում առյուծներ չկան:

— Յես իմ հոգին, կյանքումս յերբեք չեմ տեսել, թեև ահա քսան տարուց ավելի յե ապրում եմ այս կողմերում: Սակայն լսել եմ և կարծեմ մինչև անգամ լրագրերում կարդացել եմ, վոր կան... միայն թե վոչ այստեղ, այլ շատ հեռու, հարավում...

Այդ ըոպեյին նրանք հասան պանդոկ, մեկն այն պանդոկներից, վորոնց նմանը կարելի յե հանդիպել վանվում և Պան-

տենում: Դուան գլխին մի չորացած ծառի ճյուղ և պատերի վրա նկարված բիլիարդի ձողեր: Պանդոկի վրա կար հետևյալ համեստ ցուցանակը:

«Ճագարների ժամադրավայր»

Ականջդ կանչի, սի Բրավիդա<sup>1)</sup>...

## ՀԱՆՐԱԿԱՌՔԻ, ՄԱՎՐԻՏԱՆՈՒՀՈՒ ՅԵՎ ՀԱՄԻԿԻ ՓՆՋԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս առաջին արկածի անհաջողութունը բավական կլինեի շատ-շատերին հուսալքելու համար, սակայն Տարտարենի նման կոփված մարդիկ այդքան շուտ չեն ընկճվում:

— Առյուծները հարավումն են, — մտածեց հերոսը. — Եհ, ինչ կա վոր, յես ել կգնամ հարավ:

Յեվ Վերջին պատառը կուլ տալուն պես տեղիցը վեր կացավ, շնորհակալութուն հայտնեց տան տիրոջը, անվոխակալ սրտով համբուրվեց պառավի հետ, մի վերջին կաթիլ արցունք թափեց դժբախտ Սևուկի վրա և անմիջապես վերադարձավ քաղաք, հաստատ վորոշած լինելով իրեղենները կապել և նույն ուղևորվել դեպի հարավ:

Դժբախտաբար քաղաք տանող ճանապարհն այսօր կարժես ավելի յերկարացել էր յերեկվանից, արեգակը սաստիկ այրում էր, փոշին անտանելի. ձալովի վրանը ճնշում էր նրա ուսերը... Տարտարենը զգաց, վոր վոտքով չպիտի կարողանա հասնել, ուստի նա կանգնեցրեց առաջին հանդիպող հանրակառքը և մտավ մեջը:

Ահ, խեղճ Տարասկոնցի Տարտարեն: Հաղարապատիկ ավելի լավ կլինեի նրա անվան, նրա փառքի համար, յեթե նա մըտած չլինեի այդ չարաբաստիկ հանրակառքը և վոտքով շարունակած լինեի իր ճանապարհը, թեկուզ և շնչահեղձ լինեի ողի, վրանի և զենքերի տակ...

Յերբ Տարտարենը նստեց, կառքում այլևս տեղ չմնաց: Խորքում նստած էր մի սևամորուք կրոնավոր քիթն աղոթափրբի մեջ կոխած: Նրա դեմ ու դեմ մավրխտանացի մի լերի-

1) Ակնարկում է այն, վոր ճագար (caris) բառը Բրավիդան դործ էր ածուկ շքաջ մարդ իմաստով: Մ. Խմբ.

տասարդ վաճառական, վոր ծխում եր հաստ գլանակներ: Հետո մի մալթացի նավաստի և չորս թե հինգ մալթիտանացի կանայք, վորոնք վոտից մինչև գլուխ փաթաթված եյին սպիտակ քողով, յերևում եյին միմիայն՝ նրանց աչքերը: Այդ տիկիներն, լխտ եյին գնացել Աբդել-Կադերի գերեզմանին և այժմ յետ եյին դառնում. բայց այդ տխուր այցելութունը, յերևում եր առանձին արտմութուն չեր պատճառել նրանց. նրանք անդադար ծիծաղում և շաղակրատում եյին, իրար հետ, իրենց քողի տակ կրծոտելով քաղցրավենիներ:



Տարտարենին այնպես թվաց, վոր նրանք շատ են իրեն նայում: Մանավանդ մեկը, վոր նստած եր Տարտարենի դեմ ու դեմը, աչքը հռոել եր նրա աչքերին և ամբողջ ճանապարհի ընթացքում հայացքը չհեռացրեց նրանից: Թեև տիկնոջ յերեսը ծածկված եր քողով, այնուամենայնիվ՝ նրա խոշոր և սևորակ աչքերի փայլը, նրա նուրբ և գողտրիկ, վոսկի ապարանջաններով զարդարված դաստակը, վորը մերթ ընդ մերթ յերևում եր քողի տակից, նրա ձայնի քաղցր հնչյունը, նրա գլխի նազելի շարժվածքը, — այդ ամենը պարզ ցույց եր տալիս, վոր ծածկոցի տակ պահված ե մի դեռատի, չքնաղ, պաշտելի արարած... Թշվառ Տարտարենը նստած տեղը չգիտեր ինչ աներ: Արևելյան

այդ հրացայտ աչքերի լուռ փաղաքշանքը նրան հուզում, սպա-  
նում եր, նա մեկ քրտնում եր, մեկ սառչում...

Այդ դեռ բավական չեք, տիկնոջ սիրուն վոտնամանն եք  
մեջ ընկավ... Նա դգում եր—Թե ինչպես իր վորսորդական կո-  
պիտ կոշիկները վրայից փոքրիկ կարմիր մկան նման վազվզում,  
խլրտում եր գեղեցկուհու վոտնամանը: Ի՞նչ անել, պատասխա-  
նել արդյոք այդ հրացայտ հալացքներին, այդ փաղաքշանքին...  
Միրային արկած Արևելքում. — չե՞ վոր այդ մի սարսափելի  
բան ե... Յեվ իր վիպական ու տարասկոնյան յերեակալությամբ  
քաջասիրտ Տարտարենը տեսնում եր իրեն արդեն ընկած ներ-  
քինիների ձեռքը, գլխատված կամ թերևս կաշվե տոպրակի մեջ  
կարված՝ լողում ե ծովի վրա՝ կտրած գլուխը կողքին: Այդ  
բանը փոքր ինչ սառեցնում եր նրան... սակայն փոքրիկ հողա-  
թափը շարունակում եր իր խաղը, իսկ իր դիմացի աչքերն ա-  
վելի լայն բացելով նայում եյին նրան, ինչպես յերկու սև  
թավշյա ծաղիկներ, վորոնք կարծես ասում եյին.

— Գաղիք մեզ, քաղիք...

Հանրակառքը կանգ առավ: Հասել եյին թատրոնի հրապա-  
րակը, Բար-Ազուն փողոցի հանդեպ: Մավրիտանացի կանալք մեկ  
առ մեկ իջան կառքից, խճճվելով իրենց լայն շալվարների մեջ,  
վայրենի նազանքով իրենց մարմինն սեղմելով քողը: Ամենից  
վերջը տեղից բարձրացավ Տարտարենի հարևանուհին և բարձ-  
րանալիս դեմքն այնպես մոտեցրեց հերոսի դեմքին, վոր վեր-  
ջինս զգաց նրա շունչը, լի թարմության, մուշկի և քաղցրա-  
վենիքի անուշ բուրմունքով:

Տարասկոնցին ալլևս չկարողացավ դիմանալ: Հարբած սի-  
րուց և ամեն ինչ աչքն առած, նա սլացավ մավրիտանացի տիկ-  
նոջ յետևից... Նրա զենքերի աղմուկից տիկինը գլուխը յետ  
դարձրեց, մեկ մատը տարավ դեպի քողով ծածկված շրթունքը,  
կարծես ուզում եր ասել. «Մո՛ւս», իսկ մյուս ձեռքով ձգեց նը-  
րան վզնոցի նման հյուսված անուշաբույր հասմիկների ծաղ-  
կեփուռը: Տարտարենը կռացավ, վոր փունջը վերցնի և վո-  
րովհետև մեր հերոսը մի քիչ ծանր եր և զենքերով շատ ծան-  
րաբեռնված, այդ գործողությունը բավական յերկար տե-  
վեց...

Յերբ նա վոտքի լելավ, հասմիկները սրտի վրա սեղմած,  
մավրիտանուհին անհայտացել եր:

## ԱՏԼԱՍ ԼԵՌՆԵՐԻ ԱՌՅՈՒԾՆԵՐ, ՔՆԵՑԵՔ

Ատլաս լեռների առյուծներ, քնեցեք: Քնեցեք հանգիստ ձեր խոր վորջերում վալրենի կակտուսների ու հաշվենների<sup>1)</sup> մեջ... Դեռևս մի քանի որ Տարասկոնցի Տարտարենը ձեզ չի կոտորելու: Այժմ նրա բոլոր ռազմական գործիքները, զենքերը, արկղները, դեղարանը, վրանը, պաշարեղենը,— այդ բոլորը կապկպված հանգստանում են № 36 սենյակի մի անկյունում:

Քնեցեք անվախ, հսկա շեկ առյուծներ, Տարասկոնցին իր մավրիտանուհուն է փնտրում: Հանրակառքի դեպքից հետո խեղճ մարդն անընդհատ զգում էր իր վրտքի, վորսորդական խոշոր վրտքի վրա կարմիր մկնիկի վազվառուքը, և ծովից փչող քամին, դիպչելով նրա շրթունքներին, իր հետ բերում էր շարունակ քաղցրավենիների և հասմիկի հեշտալի բուրմունքը:

Այ՛, անպատճառ նա պետք է գտնի իր մավրիտանուհուն: Բայց ինչպե՞ս:

Հարլուր հազար բնակիչ ունեցող մի քաղաքում գտնել մի կնոջ, վորի բուրմունքը, կոշիկները և աչքերի գույնն են միայն քեզ ծանոթ, այդ այնքան էլ դյուրին բան չէ: Սիրուց իենթացած Տարասկոնցին միայն կարող էր նման արկածալի գործի մեջ մտնել:

Ամենից սոսկալին այն էր, վոր մավրիտանուհիները բուրն էլ իրենց սպիտակ քողի տակ ամենևին չեն տարբերվում մեկը մյուսից: Բացի այդ տիկիներն առհասարակ տնից դուրս չեն գալիս և նրանց տեսնելու համար պետք է գնալ քաղաքի վերին մասը, արաբական քաղաքամասը, վորտեղ թուրքերն են ապրում:

Իսկ քաղաքի այդ մասը ով չգիտե, վոր մի կատարյալ ավազականոց է: Ծուռ ու մուռ, նեղլիկ ու մուլթ փողոցներ, վորտեղ տներն այնքան մոտ են իրար, վոր նրանց տանիքներն իրար են կպչում, կազմում են մի խավար տունել:

Տների դռները ցածրիկ, պատուհանները փոքրիկ, մռայլ խանութներ, վորոնց մեջ նստած դաժան «թուրքերը» ծովահենի դեմքով, սպիտակ աչքերով ու փալլուն ատամներով ծխում են յերկար չիբուկներ և իրար մեջ փսփսում... Ո՞վ գիտե, թե ի՞նչ չար բաներ են նյութում...

1) Արևադարձային բույսեր: Ծ. խմբ.

Ճշմարտութեան դեմ մեղանշած կլինեյինք, լեթե ասեյինք, վոր Տարտարենն առանց ներքին հուզմունքի յեր անցնում ալդ սոսկալի փողոցներով: Նա սաստիկ հուզված եր և այդ նեղ տեղերից անցնելիս, վորոնց ամբողջ լայնութունը լցվում եր իր մեծ փորով, նա ամենամեծ զգուշութեամբ դես ու դեն եր նայում, մի մտը միշտ դրած ատրճանակի բլթակի վրա: Ամեն բոպե նա սպասում եր, վոր լեռներից ներքինիների և յենիչերիների մի վոհմակ կթափվի իր վրա: Սակայն մավրիտանուհուն կրկին տեսնելու փափազը նրան հանդգնութուն և հսկայի ուժ եր տալիս:

Ութ որ շարունակ անվեհեր Տարտարենը թափառում եր վերին քաղաքամասում: Յերբեմն նա ժամերով կանգնում եր բաղնիքների առաջ, սպասելով այն ժամին, յերբ մավրիտանուհիները թրթռուն և հոտավետ խումբ-խումբ դուրս են գալիս բաղնիքից: Յերբեմն ել նրան կարելի յեր տեսնել պզտակ մզկիթներ, դռանը՝ փնջալով, քրտնելով իր յերկար ու խոշոր կոշիկները հանելիս, վորպեսզի մտնի սրբավայրը...

Հաճախ լերեկոները, յերբ նա ապարդյուն վորոնումներից հուսահատված, վերագառնում եր հյուրանոց, վորևիցե մավրիտանական տան մոտով անցնելիս Տարտարենի ականջին ելին հասնում միալար յերգերի, կիթառի, թմբուկների և կանացի ծիծաղի ձայներ, վորոնցից նրա սիրտն սկսում եր արոփել...

«Գուցե նա այնտեղ եր» — մտածում եր նա:

Յեվ լեթե փողոցն ամաչի յեր լինում, նա մոտենում եր այդ տանը, բարձրացնում եր դռան ծանր մուրճը և թակում կամաց... Յերգն ու ծիծաղն իսկույն դադարում եյին. դռան հետևից լսվում եյին անորոշ փափսուկներ և շշուկներ, ինչպես քնած հավաքնում:

— Պինդ կենանք, — ասում եր նա ինքն իրեն, — տեսնենք ինչ կգա գլխիս:

Սակայն նրա գլխին յեկածը շատ անգամ լինում եր միայն մի մեծ աման սառը ջուր կամ թե նարնջի կճեպներ... ավելի ծանր դեպք լերբեք չեր պատահում:

Գնեցեք, Ատլաս լեռների առյուծներ, քնեցեք:

## ՉԵՐՆՈՒԳՈՐԻԱՅԻ ԳՐԻԳՈՐԻ ԻՇԽԱՆԸ

Ամբողջ յերկու շաբաթ տարաբախտ Տարտարենը փնտրում եր իր ալիբիցի տիկնոջը, և հավանաբար դեռ ելի չերկար պիտի փնտրեր, լեթե սիրահարների բախտը նրան ոգնութեան


չհասներ՝ հանձին Չերնոգորիայի մի ազնվականի: Ահա ինչպե՞ս պատահեց այդ:

Չմեռվա ամեն շաբաթ յերեկո, Ալժիրի Մեծ թատրոնը տալիս է իր դիմակավոր պարահանդեսը, ճիշտ Փարիզի Ոպերայի նման: Գավառական անհամ և անվերջ մի պարահանդես: Դահլիճում քիչ մարդ է յերևում, Բլուրիելի և Կազինոյի մի քանի թափթփուկներ, բանակիրն հետևող խենթ որիորդներ, թառամած ֆրանտներ, սիրո մեջ անհաջող—դիմակավորված պարոններ և հինգ թե վեց տեղացի վայցարարուհիներ, վորոնք բարձր դասի կանանց հովեր են առնում, բայց ելինչրանց վրայից, չի վերանում սխտորի և շաֆրանի հոտը... Բայց բուն տեսարանն այնտեղ չէ, այլ թատրոնի ֆոյեյում, վորը ժամանակավորապես վերածված է թղթախաղի դահլիճի... տենդոտ և խայտաբղետ մի բազմություն խառնված է կանաչ սեղանների շուրջը: Արձակուրդավոր տյուրկոներ<sup>1)</sup>, վորոնք սեղանի վրայ են դնում իրենց ուճիկից մնացած արծաթե խոշոր դրամները, վերին քաղաքամասի արաբ վաճառականներ, մալթացիներ, կոլոնիստ գլուղացիներ, վորոնք քառասուն մղոն տարածությունն են կտրել իրենց բախտը փորձելու, մի խաղաթղթի վրա դնելով մի գութանի կամ մի գուլյգ յեզների գինը... Դողդողալով, գունատվելով, աստմները սեղմած, խաղամոլին հատուկ ծուռ, անհանդիստ հայացքով նրանք հետևում են խաղին:

Ավելի հեռուն կանգնած են ալժիրական հրեաները, վորոնք խաղում են ընտանիքով: Տղամարդիկ հագել են արևելյան ասրազ, անճոռնի կապույտ գուլպաներով և թավշյա գլակներով: Կանայք—ուռած և փքված, դեղնած լերեսներով, դիք կանգնել են՝ սեղմված իրենց վոսկեզոճ կրծքակալների մեջ... Խմբված սեղանների շուրջը նրանք աղմկում, խորհրդակցում են, հաշվում են մատներով և խաղում են քիչ: Միայն յերբեմն-յերբեմն, յերկար խորհրդակցութունից հետո մի ձեր նահապետ, յերկնավոր հոր յերկար միրուքով, բաժանվում է խմբից և գրնում սեղանի վրա դնելու մի հինգ ֆրանկանոց ամբողջ ընտանիքի կողմից: Այդ ժամանակ է, վոր բոլոր յերբայական աչքերը սկսում են շողալ, ուղղվելով դեպի սեղանը, սև մազնիսի նման աչքերը, վորոնք կարծես մեկ առ մեկ քաշում են կանաչ սփռոցի վրայի վոսկեդրամները մի անտեսանելի թելով...:

1) Տյուրկո—ֆրանսիական գաղութային բանակի զինվոր: Մ ի.





Հետո սկսվում են կռիվները — տուր ու դմփոզ, հայհոյանքներ և գոռում գոչում բոլոր լեզուներով, մեկ ել տեսար դանակ քաշեցին, վոստիկանները յեկան միջամտելու, հաշվեցին, տեսան փողը պակաս եր...

Ահա այս ազմկալի զբոսավայրն եր լեկել մեծ Տարտարենը մոռանալու իր վիշտը և սրտի անդորրութիւնն վայելելու:

Հերոսը միայնակ զբոսնում եր բազմության մեջ, մտածելով իր մավրիտանուհու մասին, յերբ հանկարծ խաղասեղանների մոտ վոսկու զնգոցի միջից լավեցին լերկու բարկացած ձայներ:

— Յես ձեզ ասում եմ, վոր քսան ֆրանկ պակաս ե, պարոն:

— Պարոն...

— Այո, պակաս ե, պարոն...

— Իմացեք, թե ում հետ եք խոսում, պարոն:

— Ինձ համար միևնույն ե, պարոն...

— Յես Գրիգորի իշխանն եմ, պարոն...

Լսելով այդ անունը, Տարտարենը բոլորովին հուզված, ամբոխը ձեղքելով մոտեցավ սեղանին: Նա ուրախ եր և հպարտ, վոր գտավ իր իշխանին, այնքան սիրալիր և քաղաքավարի Չերնոգորիայի իշխանին, վորի հետ նա թեթևակի ծանոթացել եր նավի վրա...

Դժբախտաբար իշխանական այդ բարձր տիտղոսը, վոր այնքան շլացուցիչ եր միամիտ Տարասկոնցու համար, վոչ մի տպավորութիւն չթողեց հեծելազորի սպայի վրա, վորի հետ իշխանը կովի յեր բռնվել:

— Ախ, այդպես, — ասաց սպան հեգնելով, հետո դառնալով դեպի բազմութիւնը, հալտարարեց — Չերնոգորիայի Գրիգորի իշխանը... Ով ե ճանաչում սրան... վոչ վոք...

Տարտարենը վրդովված մի քայլ առաջ գնաց:

— Ներեցեք, պարոն, յես ճանաչում եմ իշխանին, — ասաց նա ամենահաստատ ձայնով:

Հեծելազորի սպան մի պահ ուղիղ նայեց նրա լերեսին, հետո ուսերը թոթվելով ասաց.

— Դե լավ, տարեք, բաժանեցեք ձեր մեջ իմ քսան ֆլորանկը, և թող հարցը փակվի:

Յեով այս ասելով կոնակը դարձրեց ու կորավ բազմության մեջ:

Տաքարուն Տարտարինն ուզում եր վազել նրա լետեից,  
քայց իշխանը թույլ չտվեց, ասելով.

— Թողեք, յես գիտեմ, թե ինչ կանեմ նրան:

Յեկ Տարասկոնցու թևը մտնելով, նրան արագ քաշ ավեց  
դահլիճից:

Յերբ դուրս յեկան հրապարակ, Չերնորոզիայի<sup>1)</sup> իշխանը  
գլխարկը վերցրեց, ձեռքը մեկնեց մեր հերոսին և լավ չհիշելով  
նրա անունը, հուզված ձայնով բացականչեց.

— Պարոն Բարբարեն...

— Տարտարեն, — անհամարձակ կերպով հուշեց հերոսը:

— Տարտարեն, թե Բարբարեն՝ այդ միևնույնն ե: այսու-  
հետև մենք բարեկամ ենք միմեզ մահ:

Յեկ ազնվաշուք իշխանը բուռն յեռանդով սեղմեց նրա  
ձեռքը: Կարող եք լերևակալել Տարասկոնցու հպարտութունը:

— Իշխան, իշխան, — կրկնում եր նա անասելի հրճվան-  
քով:

Քառորդ ժամ անց յերկու բարեկամները նստած ելին  
«Սոսինբրի» ճաշարանում, մի հաճելի գիշերային զվարճատեղի,  
վորը նայում ե ծովի վրա, և այնտեղ, վայելելով համեղ ընթ-  
րիք Կրեստելի ընտիր գինով, նրանք վերանորոգեցին իրենց  
ծանոթութունը:

Չարմանալի դուրեկան մարդ եր Չերնորոզիայի իշխանը:  
Նուրբ, բարեկազմ, 'գանգուր մազերով, սափրված. զարդարված  
տարորինակ շքանշաններով, նա ուներ վառվռուն աչքեր, շոյող  
շարժուձևեր և թեթև իտալական առոգանութուն, վորով նա  
նմանվում եր Մազարինիին<sup>1)</sup>, միայն առանց բեխի: Նա շատ  
հմուտ լինելով լատինական լեզուներին, ամեն առթիվ վը-  
կայութուններ եր բերում Տացիտից, Հորացիոսից<sup>2)</sup> և «Մեկ-  
նութուններից»<sup>3)</sup>:

Պատկանելով ազնվականների հին առնմին, նրա ասելով,  
յեղբայրները տասը տարեկան հասակից հալածել եյին նրան իր  
ազատամիտ գաղափարների համար: Այդ որվանից նա թափա-  
ռում եր յերկրից-լերկիր՝ մասամբ անձնական զվարճութան և

1) Մազարին (1602—61) Ֆրանսիական պետական գործիչ, ծագումով  
իտալացի:

2) Տացիտ, Հորացիոս (55—120), (64—8 ք. ա). հռոմեացի պատմագիր և  
քանաստեղծ:

3) Հուլիոս Կեսարի: Մ. խմբ.

մասամբ ել մտավոր զարգացման համար, վորպես փիլիսոփա իշխան... Բայց զարմանալի զուգադիպություն. իշխանն ամբողջ չիրեք տարի անց եր կացրել Տարասկոնում... Յերբ Տարտարենը հայտնեց իր զարմանքը, վոր յերեք չի հանդիպել նրան վոչ ահումբում, և վոչ ել քաղաքային զոտարանում, իշխանը խուսափողական տոնով պատասխանեց.— «Յես շատ քիչ եյի տնից դուրս գալիս»։ Յեվ Տարասկոնցին քաղաքավարությունից դըրդված այդ մասին հարց ու փորձ չարավ։ Չ՞ վոր բոլոր մեծ մարդկանց կյանքն ունի իր խորհրդավոր կողմերը...

Մի խոսքով սքանչելի մարդ եր այդ Գրիգորի իշխանը։ Գում-կում խմելով գինին, նա մեծ համբերությամբ ականջ եր գնում Տարտարենին, վոր պատմում եր մավրիտանուհու մասին։ Նա մինչև անգամ խոստացավ գտնել նրան, վորովհետև լավ եր ճանաչում այդ կանանց։

Յերկար ժամանակ նրանք նստած կոնծում ելին։ Խմեցին Ալժիրի տիկիների կենացը, ազատ Չերնոգորիայի կենացը և այլն...

Դուրսը—պատշգամբի ներքև մոնչում եր ծովը և ալիքները խավարի մեջ ծեծում եյին ափերը համաչափ աղմուկով, վոր նման եր թրշած մահուդ թափ տալու ժամանակ լավող ձայնին։ Յեղանակը տաք եր՝ յերկինքը լի աստղերով։

Սոխակը չերգում եր սոսիների մեջ...

Հաշիվը վճարեց Տարտարենը։

## ԴՈՒ ԻՆՉ ԱՍԱ ՔՈ ՀՈՐ ԱՆՈՒՆԸ, ՅԵՍ ՔԵՁ ԿԱՍԵՄ ԱՅՍ ԾԱՂԿԻ ԱՆՈՒՆԸ

Մյուս որը առավոտյան իշխան Գրիգորին արդեն Տարտարենի սենյակումն եր։

— Ծհւտ, շուտ արեք, հագնվեցեք... ձեր մավրիտանուհին գտնված ե, նրա անունը Բայիա ե... քսան տարեկան, աննման սիրուն և արդեն այրի...

— Ա՛յրի... Ի՞նչ բախտավորություն, — բացականչեց հերոսը, վորն այնուամենայնիվ, յերկուդ եր կրում Արևելքի խանդոտ ամուսիններից։

— Այո, այրի, միայն թե իր յեղբոր խիստ հսկողության տակ։

— Ա՛հ, գրողը տանի։

— Յեղբայրն ել մի վայրենի մավր ե և շուկայում ծխամորճներ ե ծախում:

Տիրեց լուսթյուն:

— Բայց իհարկե, այդ ձեզ համար վոչինչ, — շարունակեց իշխանը, — դուք այն մարդկանցից չեք, վոր այդպիսի . դատարկ բաներից վախենում են: Բացի այդ, մի քանի ծխամորճ գնելով այդ ավազակից, հույս ունեմ, վոր հնարավոր կլինի լեզու գրանել նրա հետ... Դեհ, շուտ արեք, հագնվեցեք... բախտավոր եք, բախտավոր:

Յերեսի գույնը թռած, հուզված և լի սիրո զգացմունքով, Տարտարենը ցատկեց անկողնից և Ֆլանելի լայն վարտիկը ըշտապ-շտապ կոճկելով, հարցրեց.

— Ուրեմն ի՞նչ պետք ե անել:

— Պարզապես իսկույն մի նամակ գրել տիկնոջը և ժամադրություն խնդրել:

— Ուրեմն նա Ֆրանսերեն ել գլխոք, — հիասթափված հարցրեց Տարտարենցին, վոր միշտ յերազում եր իսկական Արևելքի մասին:

— Մի բառ անգամ չգիտե, — պատասխանեց իշխանն անհողողդ կերպով. — դուք ինձ կթելադրեք և յես կթարգմանեմ արաբերեն:

— Ինչքան բարի յեք, իշխան, ինչքան բարի չեք...

Յեվ Տարտարենցի հերոսը լուռ և մտախոհ սկսեց մեծ-մեծ քայլերով անցուդարձ անել սենյակի մեջ:

Հասկանալի յեր, վոր ալժիրցի մավրիտանուհուն չեր կարելի այնպիսի նամակ գրել, ինչպես գրում են Բոկերի գեղեցկուհիներին: Բարեբախտաբար մեր հերոսը շատ կարգացած մարդ եր և կարող եր Գուստավ Մմարի վեպերի հնդկական պերճախոսությունը բաղադրել Լամարտինի «Արևելյան ճանապարհորդության» վոճի հետ, նա և այդ ամենին խառնելով «Յերգ-յերգոցի» մի քանի հեռավոր վերհիշումներ, նա կարողացավ շարադրել մի նամակ, միանգամայն արևելյան վոճով: Նամակը սկսում եր հետևյալ խոսքերով.

«Ինչպես ջայլամն անապատի ավազների մեջ»... և վերջանում եր այսպես.

«Ի՛նչ ինձ ասա քո հոր անունը, յես քեզ կտեսմ քոյ ծաղիկ անունը»:

Նամակի հետ միասին խանդավառ Տարտարենը ուզում էր ուղարկել նաև մի ծաղկեփունջ, վորպես խորհրդանշան, ինչպես այդ պահանջում է Արևելքի սովորությունը, բայց իշխան Գրիգորին ասաց, վոր ավելի լավ կլինեիր տիկնոջ յեղբոր մոտից գնել մի քանի հատ ծխամորճ, սրանով նախ կարելի յեր մեղմացնել վայրենի յեղբոր սիրտը և լերկրորդ, մեծ հաճույք պատճառել տիկնոջ, վոր շատ է սիրում ծխել:

— Դեհ, շուտ գնանք ծխամորճներ գնելու,—ասաց Տարտարենն անհամբեր:

— Վե՛չ, վե՛չ, թողեք յես մենակ գնամ. յես ավելի եժան կգնեմ...

— Ինչպէս... Դուք ինքնՔրդ եք ուզում գնալ... Ո՛ր, իշխան... իշխան—Յե՛վ Տարտարենը հուզմունքից շփոթված, մեկնեց փողի քսակը հաճոյակատար իշխանին, խնդրելով, վոր վոչինչ չխնայի տիկնոջ սիրտը շահելու համար:

Դժբախտաբար հաջող սկսված գործը սպասածին չափ արագ չեր առաջ գնում: Տիկինը, ինչպես լերևում էր, խիստ զգացված էր Տարտարենի պերճախոս նամակից և արդեն այն աստիճան էր հրապուրված, վոր սիրով կցանկանար ինչքան կարելի յէ շուտով տեսակցել նրա հետ, սակայն կասկածամիտ յեղբոր յերկյուղն առաջվա պես արգելք էր հանդիսանում: Յե՛վ այդ արգելքը վերացնելու համար հարկ յեղալ դյուժիններով, գրոսներով, հակերով ծխամորճներ գնել...

— Այդ սատանա Բայիան ի՞նչ է անում այդքան ծխամորճը,— ինքն իրեն հարց էր տալիս լերբեմն խեղճ Տարտարենը, բայց ելի շարունակում էր վճարել անտրտունջ:

Վերջապես մի քանի բեռ ծխամորճ գնելուց և արեվելյան պերճախոսության մի ամբողջ հեղեղ թափելուց հետո նա ստացավ ցանկացած ժամադրությունը:

Ավելորդ է նկարագրել, թե ինչպիսի հուզմունքով պատրաստվեց Տարտարենը տիկնոջ մոտ գնալու համար, ինչ խնամքով նա կարգի բերեց, գեղեցկացրեց ու անուշահոտեց իր կոշտ բեխերն ու միրուքը: Տնից դուրս գալիս նա չմոռացավ գրպանը դնել մի կաստեռ և յերկու թե յերեք ատրճանակ, վորովհետև զգուշությունն ամեն ժամանակ լավ բան է:

Իշխանը, միշտ հաճոյակատար, հանձն առավ ներկա լինել այդ առաջին ժամադրության վորպես թարգման:

Տիկինն ապրում էր քաղաքի վերին մասում: Նրա դռան

առաջ տասներեք թե տասնչորս տարեկան մավրիտանցի մի տղա պապիրոս եր ծխում: Այդ պատանին նշանավոր Ալին եր, վերոհիշյալ յեղբայրը: Յերբ չերկուայցելուները մոտեցան, Ալին չերկու անգամ դուռը բաղխեց և լուռ ու մունջ հեռացավ:

Դուռը բացվեց և շեմքի վրա յերևաց մի խափշիկ կին, վոր առանց մի բառ արտասանելու, առաջնորդեց հյուրերին ներքին բակի միջով դեպի մի փոքրիկ հովասուն սենյակ, վորտեղ տիկինը հատակին փռված անկողնի վրա թեք ընկած սպասում եր...

Առաջին հայացքից Տարտարենին այնպես թվաց, վոր նա ավելի կարճահասակ և ավելի գեր եր, քան հանրակառքի մավրիտանուհին... Արդյոք նա չթր, թե նա չեր... սակայն այդ կասկածը կայծակի նման մի ակնթարթ միայն փայլեց Տարտարենու գլխում և անհայտացավ:



Ինչքան սիրուն և հրապուրիչ եր տիկինն իր մերկ վոտներով, մատանիներով զարդարված թմբլիկ մատներով, թարմ, վարդազուհն: Արևելյան վոսկեթել բաճկոնակը, ծաղկավոր շրջազգեստը գրկել եյին նրա գիրուկ, կլորիկ, փափրիկ իրանը, նարգիլելի սաթե փողը ծխում եր նրա շրթունքների արանքում և ծածկում նրան կապտավուն ծխի խորհրդավոր քուլաներով:

Մտնելով ներս Տարասկոնցին մի ձեռքը դրեց սրտի վրա և արևելյան ձևով մինչև գետինը կռանալով, խորը գլուխ տվեց, կրքոտ աչքերը վոլորելով... Բալխան մի ըոպե անձալն նալեց նրա յերեսին, հետո նարգիլելի սաթե ծխափողը ձեռքից բաց թողնելով, գլուխը հեռ ձգեց և յերեսը ծածկեց ձեռներով. յերևում եր միայն նրա սպիտակ պարանոցը, վորն անզուսպ ծիծաղից ցնցվում եր, ինչպես մարգարիտով լեցուն մի քսակ:

## ՍԻՒԻ ՏԱՐՏՐԻ, ԲԵՆ ՏԱՐՏՐԻ

Յեթե մի յերեկո մտնելու լինեք Ալթիբի վերին քաղաքամասի սրճարաններից մեկը և ականջ դնեք այնտեղ հավաքված մավրիտացիների խոսակցության, մինչև այսոր ել դեռ կլսեք մի ինչ-վոր Սիդի Տարտրի անուշով հարուստ և առատաձեռն յեվրոպացու մասին, վոր մի քանի տարի առաջ ապրում եր այդ թաղամասում Բալխա կոչված տեղացի մի դեռատի տիկնոջ հետ: Այդ մասին խոսելիս նրանք իրար աչքով են անում և քթի տակ ծիծաղում:

Այդ Սիդի Տարտրին ուրիշ մարդ չեր, յեթե վոչ, ինչպես ընթերցողն արդեն գուշակում ե, մեր Տարտարենը...

Այո, ինչ արած, սրբերի և հերոսների կյանքում իսկ լինում են թուլության, մոլորության և գայթակղության ժամեր: Հռչակավոր Տարասկոնցին ևս բացառություն չեր կարող կազմել և ահա թե ինչու յերկու ամիս շարունակ նա մոռանալով առլուծներին և իր փառքը, հարբեց արևելյան սիրով և անձնատուր յեղավ սպիտակ Ալթիբի հրապույրներին, ինչպես Աննիբալը Կապուալում<sup>1)</sup>:

Տարտարենը քաղաքի արաբական մասում վարձել եր մի շատ սիրուն տնակ տեղական ճաշակով, վոր ուներ ներքին գավիթ, բանանի ծառեր, զով սրահներ և շատրվաններ: Իր մավրիտանուհու հետ միասին առանձնացած ապրում եր նա հեռու աղմուկից, վոտից մինչև գլուխ արաբական զգեստ հագած, առավոտից մինչև յերեկո նարգիլեն փստացնելով և անուշահոտ քաղցրավենիներն անուշ անելով:

Նրա դեմ ու դեմը՝ գահավորակի վրա թեք ընկած, կիթա-

1) Կապուա—փոքրիկ քաղաք Իտալիայում, վորտեղ կարթագենացի զորավար Աննիբալը Հռոմը գրավելու համար Աֆրիկայից Յեվրոպա նանցնելիս իր բանակի հետ անց կացրեց ձմեռը: Մ. խմբ.

ուր ձեռքին Բայիան արարական միաշար յեղանակներ եր յերգում և կամ թե իր տիրոջը զվարճացնելու համար պարում եր վորովայնի պարը, ձեռքին բռնած մի փոքրիկ հայելի, վորի մեջ ցույցնում եր ձերմակ ատամները և դեմքին հրապուրիչ արտահայտություն եր տալիս:

Գանի վոր վոչ տիկինը մի բառ Ֆրանսերեն գիտեր և վոչ ել Տարտարենը մի բառ արաբերեն, ալը պատճառով ել խոսակցությունը բավական դանդաղ եր առաջ գնում. այդ մի պատիժ եր շատախոս Տարտարենի համար, մի ապաշխարություն Բեզլուքեյի դեղատանը կամ զինավաճառ Կոստեկալըի խանութում չափից շատ խոսած լինելու հանցանքի համար:

Բայց այդ պատիժն ել ունեւր իր քաղցրությունը: Տարտարենը մի տեսակ մեղկ անողորրություն եր զգում, լերբ ամբողջ որն անխոս ականջ եր դնում նարգիլեյի գլգլոցին, կիթառի կնտկնտոցին և շատրվանի մեղմ կարկաչյունին մոզայիկներ ձեջ:

Նրա կլանքն ամբողջպես բռնում եյին նարգիլեն, բաղնիքը և սերը: Շատ քիչ ելին տնից դուրս գալիս: Յերբեմն-յերբեմն միայն Սիդի Տարտարին իր տիկնոջը գավակն առած, ջորիով գնում եր նուռ ուտելու մի փոքրիկ այգում, վոր նա գնել եր քաղաքի շրջակայքում: Բայց յերբեք, ո՛ր, լերբեք նա չեր իջնում քաղաքի յեվրոպական մասը, վորը լիքն եր հարբած զուսմաներով<sup>1)</sup>, սպաներով, սալահատակի քարերին դիպչող թրերի անվերջ աղմուկով: Ալժիրի այդ մասը նրան թվում եր անտանելի և տգեղ, ինչպես Արևմուտքի մի պահակատուն:

Մի խոսքով Տարասկոնցին խիստ յերջանիկ եր: Յերջանիկ եր մանավանդ Տարտարեն-Սանչոն, վորը մեծ ախորժակով վայելում եր տաճկական քաղցրավենիները և ավելի քան գոհ եր իր նոր կլանքից: Սակայն Տարտարեն-Կիխոտը մեկ-մեկ խղճի խայթ եր զգում, լերբ մտաբերում եր Տարասկոնը և իր խոստացած առյուծի մորթիները: Բայց այդ յերկար չեր տևում: Բալիայի մի հայացքը կամ մի գդալայն սատանայական բուրումնալի անուշեղեններից բավական ելին Կիրկեյի<sup>2)</sup> խմիչքի նրման մի ակնթարթում ցրելու նրա այդ տխուր մտածմունքները:

1) Զուսմ—արաբական տարազ հագած Ֆրանսիական զինվոր. Մ. խմբ.

2) Կիրկեյ— առասպելական կախարհ կին, վորը հրապուրել եր Վոդեռուսին ե թույլ չեր տալիս նրան գնալ իր հայրենիքը: Այս դեպքը նկարագրել և ձոմերոսը «Վոդեռուսի» մեջ: Մ. խ.

Յերեկոններն իշխան Գրիգորին գալիս եր փոքր ինչ խոսելու աղատ Չերնոգորիայի մասին... Ջարմանալի պատրաստակամութեամբ այդ բարեսիրտ ազնվականը կատարում եր Տարակոնցու տան մեջ թարգմանչի և հարկ յեղած դեպքում մինչև անգամ տնտեսի պաշտոնը. և այդ ամենը ձրի, լոկ նրան հաճույք պատճառելու համար... Բացի իշխանից Տարտարենն ընդունում եր իր մոտ նաև մի քանի «թուրքերի» այցելութիւնը: Այդ բոլոր կատարի ավագակները, վորոնք մի ժամանակ այնքան ան եյին ազդում նրան, նստած իրենց մութ կրակների խորքում, մոտիկ ծանոթութիւնից հետո դուրս յեկան շատ համեստ, անմխաս առևտրականներ, գորգագործներ, համեմի վաճառականներ, ծխամորճ շինողներ— բոլորն ել քաղաքավարի, խոնարհ, գաղտնապահ մարդիկ:

Շարաթը չորս թե հինգ անգամ այդ պարոնները հավաքվում ելին Միդի Տարտրի մոտ, յերեկոն անցկացնելու և թուրք խաղալու, նրա քաղցրավենիներն անուշ ելին անուճ, փողերը տանում և ժամի տասը խփելուն պես կամացուկ վեր եյին կենում ու փառք ասելով մարգարելին, քաշվում իրենց տըները:

Նրանց գնալուց հետո Միդի Տարտրին և իր հավատարիմ ամուսինը բարձրանում եյին իրենց տան կտուրը, վոր շինված եր պատշգամբի ձևով, վորտեղից նրանց աչքերի առաջ տարածվում եր ամբողջ քաղաքը: Չորս կողմը նույնպիսի հազարավոր պատշգամբներ, խաղաղ և լուսավորված լուսնի շողերով, սանդխաձև իջնում եյին մինչև ծովափը: Հովը բերում եր կիթառի մեղմ հնչյուններ...

... Հանկարծ ցոլացող աստղերի փնջի պես, մի քաղցր և վճիտ մեղեդի բարձրանում եր ողի մեջ և հարևան մզկիթի մինարեթից մի վայելչակազմ մուկեզլին, գիշերվա մուգ կապտավուն ֆոնի վրա գծելով իր ճերմակ սուվերը, հնչեցնում եր իր աղոթքը, փառաբանելով ալլահին, հորիզոնը ցնող իր սքանչելի ձայնով:

Բայիան իսկույն կիթառը ձեռքից բաց եր թողնում և աչքերն ուղղած դեպի մուկեզլինը,<sup>1</sup> կարծես խմում եր աղոթքի քաղցրութիւնները: Մինչև յերգի վերջը նա մնում եր այդպես հափշտակված, դողդոջուն, ինչպես արևելյան մի սրբուհի: Տարտարենը հուզված նայում եր նրան և ինքն իրեն<sup>2</sup> մտածում եր, վոր այդ մի շատ գորավոր և ճշմարիտ կրոն պիտի լինի,

վոր կարողանում ե այդպիսի վոգևորութլուն և ջերմեանդու-  
թլուն ներշնչել իր հավատացյալներին...

Տարասկոն, ծածկիւր դեմքդ, քո Տարտարենն արդեն մտա-  
ծում ե հավատուրաց լինել:

## ՏԱՐԱՍԿՈՆԻՑ ՄԵՋ ԳՐՈՒՄ ԵՆ

Մի որ իրիկնադեմին Սիդի Տարտրին ջորու վրա նստած  
մենակ վերադառնում եր իր փոքրիկ այգուց: Յերկինքը կա-  
պույտ եր, փչում եր ծովային տաք հովը:

Վտոքերը լայն բաց արած խուրջիներէ վրա, վորոնք ու-  
ռել եյին ձմերուկներից և նարինջներից, որորվելով խոշոր աս-  
պանդակների զրնգոցի հետ և ամբողջ մարմինը շարժելով անա-  
սունի շարժումների համաձայն, մեր հերոսն առաջ եր գնում  
շրջապատված մի սքանչելի բնությամբ, ձեռները փորի վրա  
դրած, կիսով չափ նիրհելով ողի ջերմութլունից:

Մեկ ել հանկարծ քաղաք մտնելիս մի վորոտալի ձայն նը-  
րան հանեց այդ թմրած դրութլունից

— Վճհ, գրողը տանի, կարծես պարոն Տարտարենը լինի...

Լսելով իր անունը, այն ել իսկական հարավային առո-  
գանութլամբ, Տարտարենը գլուխը բարձրացրեց և իրենից մի  
քանի քայլ հեռավորութլան վրա նկատեց «Ջուալ» շոգենավի  
նավապետ Բարբասուին, վորը սրճարաններից մեկի առաջ նըս-  
տաղ ծխամորճը բերնին արսենթ եր խմում:

— Ա՛ա, բարև, բարև, Բարբասու,— բացականչեց Տար-  
տարենը և ջորին կանգնեցրեց:

Բարբասուն պատասխանելու փոխարեն մեկ ըոպե աչքերը  
չռած նայեց նրա վրա, հետո փութկացրեց և այնպես ստատիկ  
քրքջաց, վոր Սիդի Տարտրին ապուշ կտրած՝ նստած մնաց իր  
ձմերուկների վրա:

— Այդ թնչ փաթթոց ե գլխիդ, իմ խեղճ պարոն Տարտա-  
րեն: Ուրեմն ճշմարթտ ե, վոր ասում են, թե դուք թրքացել  
եք... իսկ թնչ ե անում փոքրիկ Բայիան, ելի յերգում ե «Գե-  
ղեցիկ Մարկո» յերգը...

— «Գեղեցիկ Մարկո»,— կրկնեց Տարտարենը զայրացած,—  
իմացած յեղեք, պարոն կապիտան, վոր այն տիկինը, վորի մա-  
սին ակնարկում եք, մի շատ պատվավոր մավրիտանուհի լե և  
մի հատիկ Ֆրանսերեն բառ անգամ չգիտե...

— Բայիան ֆրանսերեն վոչ մի բառ չգրիտե... Ումն եք  
ասում, բարով յեկաք:— Յեվ նավապետն սկսեց լավելի բարձր  
ծիծաղել:

Հետո նկատելով խեղճ Միգի Տարտրի այլափոխված դեմքը  
վրա բերեց.

— Շատ կարելի յե, վոր իմ աքածն ուրիշ կին ե... թերև  
յես սխալ եմ, միայն այսքանը կասեմ, պարոն Տարտարեն, վոր



լավ կանեք, լեթե շատ ել հավատ չընծայեք ավժիրական մավ-  
րիտանուհիներին և չերնոգորիական իշխաններին...

Տարտարենը կանգնեց ասպանդակների վրա և իր հայտնի  
ծամածուլթյամբ ասաց.

— Կապիտան, իշխանն իմ բարեկամն ե:

— Լնվ, լավ, մի բարկանաք... Մի բաժակ արսենթ չեք  
լամի, Վիչ: Գուցե վորեք բան ունեք հաղորդելու յերկրացիներին:  
Այդ ել վոչ, դե ուրեմն հաջողություն... հա, ինչ եյի ա-

սում, Ֆրանսիական լավ ծխախոտ ունիմ, համեցեք, վերցրեք մի քիչ, խնդրեմ, վերցրեք, ոգտակար կլինի... Ինչպես տեսնում եմ Արևելքի անիծյալ ծխախոտը ձեր գլուխը շատ ե շուտ տվել:

Այս ասելով կապիտանը վերադարձավ իր արսենթին, իսկ Տարտարենը մտածումն քնքերի մեջ ընկած, շարունակեց իր ճանապարհը: Թեև նրա վեհանձն հոգին հրաժարվում եր հավատալ իր լսածներին, այնուամենայնիվ Բարբասուռի ակնարկները վշտացրել էյին նրա սիրտը. հետո այդ կոպիտ մարդու հիշոցները, այդ հարազատ առոգանությունը, այդ ամենը զարթեցնում էլին նրա մեջ խղճի խալթի մի տարտամ զգացում:

Հասնելով տուն նա վոչ վոքի չգտավ: Բայիան գնացել եր բաղնիք... Խափշիկ աղախինը նրա աչքին տգեղ լերևաց, ամբողջ տունը տխուր... Անասելի վատ տրամադրության մեջ նա նստեց շատրվանի մոտ և ծխամորճը լցրեց Բարբասուռի տըված ծխախոտով: Ծխախոտը փաթաթված եր «Սեմաֆոր»-ի մի կտորի մեջ: Բաց անելով լրագիրը՝ նրա աչքին ընկավ իր հայրենի քաղաքի անունը.

### Տարասկոնից մեզ գրում են.

«Ամբողջ քաղաքը մտահույզ դրության մեջ ե: Առյուծասպան Տարտարենը, վոր գնացել ե Աֆրիկա գիշատիչ գազաններ վորսալու, մի քանի ամսից ավելի յե, ինչ վոչ մի լուր չի հաղորդել իր մասին... Ի՞նչ ե պատահել մեր հայրենակից հերոսին... Ով մեզ պես ծանոթ ե նրա կրակոտ, հանդուգն և արկածասեր բնավորության—նա սարսափում ե այդ հարցի առաջ... Արդյո՞ք նա ել ուրիշ շատերի նման թաղվել ե անապատի ավազների տակ, թե՞ հոշոտվել ե Ատլաս լեռների անեղի գազաններից, վորոնց մորթիներով նա խոստացել եր զարդարել մեր քաղաքապետարանը... Ահավո՞ր անհայտություն... Սակայն Բոկերի տոնավաճառը լեկած նեզը վաճառականները պատմում են, վոր անապատի խորքերում հանդիպել են մի ինչ վոր յեվրոպացու, վորի նշանները շատ նման են Տարտարենին և վորն ուղևորվում եր դեպի Տիբբուկտու... Տե՛ր աստված, դու պահապան լինես մեր Տարտարենին»:

Այս տողերը կարդալով Տարասկոնցին կարմրեց, դեղնեց և սարսուաց: Ամողջ Տարասկոնը մի անգամից նրա աչքի առաջ

պատկերացավ— ակումբը, գլխարկի վորսորդները, Կոստեկալդի խանութի կանաչ բազկաթոռը և այդ ամենի վրա թեվատարած արծվի նման՝ քաջասիրտ հրամանատար Բրավիդիայի լերկար, ահագին բեխերը:

Յեվ մինչդեռ ամենքը կարծում էյին, վոր նա կատաղի գազաններ է ջարդում, ինքը վախկոտի պես նստած էր իր խսիրի վրա: Տարասկոնցի Տարտարենն ինքն իրենից ամաչեց և ամոթից լաց լեղավ:

Մեկ ել հանկարծ հերոսը վեր ցատկեց:


— Դեպի առյուծները, դեպի առյուծները— գոռալով վազեց դեպի մառանը, ուր փոշիների տակ հանգստանում էյին ճանապարհորդական ծալովի վրանը, դեղատուները, պաշարեղենը, զենքերի արկղը և բոլորը քաջ տվեց բակի մեջտեղը:

Տարտարեն-Սանչոն այլևս չկար, մնացել էր միայն Տարտարեն-Կիխոտը:

Կայծակի արագությամբ նա աչքի անցկացրեց իր պարագաները, դինվեց, հագավ յերկարաճիտ կոշիկները, մի յերկտող գրեց իշխանին, նրա հոգացողությանը հանձնարարելով Բալիային, ծրարի մեջ դրեց արցունքով թրջած մի քանի թղթադրամ, և քիչ անց անվեհեր Տարասկոնցին դիլիժանսի մեջ նրստած արդեն սլանում էր Բլիդահ տանող ճանապարհով, տանը թողած շշմած նեգրուհուն նարգիլեյի առջև, գլխի փաթեցը, հողաթափերը, մի խոսքով Սիդի Տարտրիի մուսուլմանական ամբողջ զգեստավորումը, վորի գանազան մասերը խղճալիորեն թափթփված էյին դես ու դեն սրահի սպիտակ կամարների տակ:







ՅԵՐԲՈՐԴԻ ԴԻՎԱԳ

ԱՌՅՈՒԾՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ



## ԱՔՍՈՐԱԿԱՆ ԴԻԼԻԺԱՆՍԸ

Այդ մի հինավուրց դիլիժանս եր, ներսից ծածկված կապտագույն հաստ մահուղով, մաշված, գունաթափ, բրդե ահագին կոշտ ծոպերով, վորոնք մի քանի ժամվա ճանապարհից հետո արդեն տրորում են մարդու կռնակը... Տարասկոնցի Տարտարենի աեղը կառքի հետևի բաժանմունքն եր. նա մի կերպ տեղավորվեց և սպասելով այն պահին, յերբ կշնչեր Աֆրիկայի մեծ գազանների ճշկահոտ բուլըը, մեր հերոսն առայժմ գոհացավ դիլիժանսի հնարուլը հոտով, վորը տարորինակ բաղադրություն եր կազմում բազմաթիվ հոտերի՝ մարդու, ձիու, կաշվի, ուտելեղենի և մզված դարմանի:

Կառքի այդ մասում կալին ամեն տեսակ ուղևորներ, մի կրոնավոր, հրեա վաճառականներ, լերկու թեթևաբար կանայք, վորոնք գնում եյին միանալու իրենց զորամասին— հուսարական Յորդ գնդին, մի լուսանկարիչ Ուլեանսվիլից<sup>1)</sup>: Բայց վորքան ել բազմազան ու հաճելի լիներ այդ հասարակությունը, Տարասկոնցին ամենևին արամադիր չեր զրույցի մտնելու լուռ ու մտախոհ նա նստած եր հրացանները ծնկների արանքում սեղմած... Հանկարծական մեկնումը, Բայիայի սև աչքերը, իրեն սպասող վտանգալից վորսորդությունը, այդ ամենը խռովում եր նրա ուղեղը, ել չենք խոսում այն մասին, վոր Աֆրիկայի խորքերում վերագտնված լեվրոպական այս դիլիժանսը տարտամորեն հիշեցնում եր նրան իր մանկության տարիների Տարասկոնը, քաղաքի շրջակայքում կատարված պտույտները, Ռոնայի ափին սարքված փոքրիկ ճաշկերույթները և վերջապես անթիվ այլ հիշողություններ:

1) Յրոնսիական քաղաք Ալժիրում: Ծ. Խ.

Քիչ-քիչ մթնում եր: Կոնդուկտորը վառեց լապտերները... Ժանգոտած դիլիթմանսը վոստոստում եր ճոճոսալով իր հին զրս-պանակների վրա, ձիերը չափ ելին ընկել, զանգուլակները զնգզնգում էյին...

Յերբեմն-յերբեմն կառքի վերևի մասից լսվում եր լերկաթեղենի մի խլացուցիչ աղմուկ... դա ուղղամթերքն եր:

Տարասկոնցի Տարտարենը կես քուն, կես արթուն մի պահ նայեց ուղևորներին, վորոնք ծիծաղաշարժ կերպով ցնցվում էյին կառքի յերերումներից և իր աչքի առաջ պարում զվարճալի սովերների պես, հետո նրա աչքերը շողվեցին, մտքերը խառնվեցին և նա այլևս վոչինչ չեր լսում, բացի սոնիների առորոշ աղմուկից և դիլիթմանսի վողբազին ճոցից...

Հանկարծ մի ձայն, պառավի ճաքած, կոտրած, խուպոտած մի ձայն կանչեց Տարասկոնցուն, տալով նրա անունը.

«Պարոն Տարտարեն, պարոն Տարտարեն»:

— Ո՞վ ե ինձ կանչում:

«Յես եմ, պարոն Տարտարեն, միթե՞ չեք հիշում ինձ... Յես հինավուրց դիլիթմանս եմ, վոր սրանից քսան տարի առաջ յերթեկեղում եր Տարասկոնի և Նիմի միջև... Քանի, քանի անգամ յես փոխադրել եմ ձեզ և ձեր բարեկամներին, լերբ գնում ելիք զխարկ վորսալու Ժոնկերի և Բելլեզարդի կողմերը: Յես նախ ձեզ չճանաչեցի ձեր տաճկական գրակի պատճառով, մեկ ել ձեր գեր մարմնի, բայց հենց վոր սկսեցիք խոժիպացնել՝ գրողը տանի, իսկուլն ճանաչեցի»:

— Դե լավ, դե լավ,—ասաց Տարասկոնցին մի փոքր սըրտնեղած:

Հետո մեղմանալով հարցրեց.

— Ա՛յ պառավ, ի՞նչ ես շինում դու այս կողմերում:

«Ա՛խ, իմ բարի պարոն Տարտարեն, հոժար կամքով չեմ լեկել այստեղ, հավատացեք... Յերբ Բոկերի լերկաթողին ավարտվեց, այլևս ինձ պետքական չհամարեցին և ուղարկեցին Աֆրիկա... Մենակ յես չեմ, Փրանսիայի գրեթե բոլոր դիլիթմանսներն ինձ նման աքսորվեցին: Մեզ համարում էյին շատ հետադիմական, և ահա այժմ տառապում ենք այստեղ վորպես տաժանակիր... Ահա սա յե, վոր Փրանսիայում դուք անվանում եք ալժիրական յերկաթողիներ»:

Այստեղ պառավը մի խոր հառաչ արձակեց, հետո շարունակեց.

«Ա՛խ, պարոն Տարտարեն, վորքան եմ կարոտել իմ սի-

րուն Տարասկոնին: Այդ ժամանակը կլանքիս լավագույն որերն  
եյին, ջահելութունը: Պետք եր տեսնել ինձ առավոտները  
ճանապարհ ընկնելիս, մաքուր լվացած, պլվլան, նոր լաքված  
անիվներով, յերկու արևի նամանոյ լապտերներով և միշտ յուղով  
փայլեցրած հովանիով: Ի՞նչ գեղեցիկ տեսարան, յերբ կառա-  
պանը իր մտակը օրսկացնելով յերգում եր. «լա, լա, լա, Տարաս-  
կոն, Տարասկոն», իսկ կոնդուկտորը, շեփորն ուսից կախած,  
նախշուն գլուխը ծուռ դրած, իր միշտ գազազած շնիկը նետում  
եր կառքի կտուրը և ինքն ել բարձրանալով այնտեղ գոռում.  
«Քշիր. քշիր»: Այն ժամանակ իմ չորս ձիաներն առաջ ելին  
խաղում զանգակների, հաջոցների, շեփորների աղմուկի մեջ:  
Պատուհանները բացվում էյին, և ամբողջ Տարասկոնը հպար-  
տությամբ դիտում եր թագավորական պողոտայով առաջ սլացող  
դիլիժանսը: Ինչքան գեղեցիկ եր այդ պողոտան, պարոն Տար-  
տարեն, լալն, լավ խնամված, իր կիլոմետրաչափ սյուններով,  
իրարից կանոնավոր հեռավորության վրա կիտված խճաքա-  
րերով, իսկ աջ ու ձախը ձիթենիներով ու վարդատունկե-  
րով լի սիրուն դաշտերով... Հետո պանդոկներն ամեն մի  
տասը քալքի վրա, կայարանները հինգ ըոպեն մի անգամ...  
իսկ) ուղևորները, ինչ լավ մարդիկ էյին, քաղաքապետներ և  
յերեցներ, վորոնք գնում էյին Նիմ Եռանգապետի կամ յեպիս-  
կոպոսին տեսնելու, պարկեշտ առևտրականներ, վորոնք վերա-  
դառնում էյին Մազեյից, արձակուրդավոր դպրոցականներ,  
նախշուն բլուզ հագած և հենց նեւյն առավոտը սափրված գլու-  
ղացիներ, և վերջապես այնտեղ—վերը, իմպերիալի<sup>1)</sup> վրա դուք  
բոլորդ, գլխարկ վորսացող պարոններդ, վոր միշտ ալնքան  
զվարթ էյիք, այնքան լավ յերգում էյիք ամեն մեկն իր «սե-  
փականը», յերբ վերադառնում էյինք յերեկոները, աստղերի  
լույսի տակ...

Հիմա փոխվել ե ամեն ինչ... տերը միայն գիտե, թե ինչ  
մարդիկ եմ փոխադրում. աշխարհի չորս կողմերից յեկած ան-  
հավատներ, նեգրեր, բեզվիհներ, հին զինվորներ, բոլոր յերկըր-  
ների բախտախնդիրներ, քրջոտ գաղթականներ, վորոնք ինձ  
թունավորում են իրենց չիբուխներով, և այդ բոլորը խոտում  
են մի ալնպիսի լեզվով, վոր ինքը սատանան ել չի հասկանա...  
Նայեցեք, տեսեք իմ վիճակը, վնչ մաքրող կա, վնչ լվացող,

1) Իմպերիալը դիլիժանսի վերևի մասն է, կտուրի վրա: Ծ. խ.

սունիներին քսելու ճարպն ել են խնայում... առաջվա իմ հանգիստ, խոշոր ձիերի փոխարեն ինձ լծել են արաբական փոքրիկ ձիեր, վորոնք կատաղածի պես կռվտում են, կծում իրար, վազելիս պարում ալծերի պես և քացի տալով շարդ ու փշուր են անում իմ սամիները... Ա՛յ..., ա՛յ... , տեսե՛ք, ելի սկսվեց... Ինչ ճանապարհներ են հա, այստեղ դեռ վոչինչ. վողորմությունն է, վորովհեռև կենտրոնի մոտ ենք, իսկ այնտեղ, ել մի հարցնի, վոչ ճանապարհ կա, վոչ բան: Գնա, ինչպես կարող ես, սար ու ձորի, դաշտերի միջով, գաճաճ արմավենիների, մաստաքի ծառերի միջով... վոչ մի հաստատուն կայան: Կոնդուկտորի քմահաճույքից է կախված այս կամ այն ազարակում իջևանելը:

Յերբեմն այդ լիբբը ստիպում է ինձ յերկու մղոն պտուկս գործել, ծովելով ուղիղ ճանապարհից, վորպեսզի գնա իր ծանոթներից մեկի մոտ աբսենթ կամ գինի խմելու... իսկ հետո, քշիւր կառապան, զոռ սոււր մտրակին, վորպեսզի կորած ժամանակը հետ բերես: Արևը խորովում է, փոշին կուրացնում: Հոգ չե: Գշիր: Դեմ ես առնում, շուռ գալիս, վոչինչ, քշիւր ա՛վելի թափով: Լող տալով անցնում են գետը, հարբուխ ստանում, թրջվում, խեղդվում... Գշիր, քշիր, քշիր... Հետո լերեկոյան բուրովին թաց, հենց այդ է պակաս իմ տարիքիս, իմ հողացավիս համար, քեզ հրամայում են պառկել բացոթյա, քարվանսարայի բակում, վորտեղ չորս կողմից ազատ հովերն են փչում: Գիշերը չախկալներն ու բորենիները գալիս են հոտոտելու իմ կողերը, իսկ շրջմոխիկները ցրտից պատսպարվում են իմ ներսում:

Ահա իմ վարած կյանքը, սիրելի պարոն Տարտարեն, և յես կվարեմ այն մինչև այն ուրը, լերը արևից ալրված, խոնավությունից փտած կընկնեմ, ուրիշ ճար չունենալով—վորևե խորդուրդ ճանապարհի մի անկյունը, վորտեղ արաբներն իրենց «կուսկուսը» կեփեն իմ պառավ կմախքի բեկորներով...»


— Բլիդահ, Բլիդահ—գոռաց կոնդուկտորը բանալով կառքի դռնակը:

## ԱՆՑՎՈՐ ՓՈՔՐԻԿ ՊԱՐՈՆԸ

Գորըշուց պղտորված ապակիների միջից Տարասկոնցի Տարտարենը տարտամ կերպով նշմարեց գավառական մի փոքրիկ սիրուն քաղաքի հրապարակը, շրջապատված կամարներով և զարդարված նարնջի ծառերով: Հրապարակի մեջտեղը կարծես արճճից շինված փոքրիկ գինվորներ զինավարժությունն ելին

անում առավտայան պայծառ վարդազուլն մշուշի մեջ: Սրճա-  
րանները բաց ելին անում իրենց փեղկերը: Մի անկյունում  
կանաչեղենի շուկան եր... ամեն ինչ սքանչելի յեր, բայց ա-  
ռյուծի նշանները դեռ չկալին:

— Դեպի հարավ, ավելի հարավ,— շնջաց ազնիվ Տարտա-  
րենը, նորից թաղվելով իր անկյունում: Այդ ըոպելին կառքի  
դուռը բացվեց ու թարմ ու զով ողբ մտավ ներս, իր թևերի  
վրա, նարինջների անուշ բուրմունքի հետ միասին, ներս բե-  
րելով մի փոքրիկ պարոն, սև ուղինգոտը հագին, ծեր, չոր-չոր,



խորշումած, չափած- ձևած շարժումներով, ոճիքը բարձր, մե-  
տաքսե սև փողկապով, կաշվե պորտֆելը կռնատակին, հովա-  
նոցով— մի կատարյալ գավառական նոտար:

Տեսնելով Տարասկոնցու սպառազինուլթյունը, փոքրիկ ծե-  
րունին, վոր նրա դեմ ու դեմն եր նստած, սաստիկ զարմա-  
ցավ և սկսեց անթարթ նայել նրան:

Ձիերն արձակեցին, նոր ձիեր լծեցին, դիլիժանսը ճանա-  
պարհ ընկավ... Մերունին աչքը չեր հեռացնում Տարտարենից:

Վերջապես Տարասկոնցին չհամբերեց և ինքն ել ուղիղ նախելով փոքրիկ ծերունու յերեսին, հարցրեց.

— Հը, զարմանում եք:

— Վե՛չ, չեմ զարմանում, այլ նեղվում եմ, — պատասխանեց ծերունին շատ հանգիստ յեղանակով:

Բանն այն՞ է, վոր իր ծալովի վրանով ատրճանակով, պատլանների մեջ դրած լերկու հրացաններով, վորսի դանակով, ել չենք խոսում նրա ահագին մարմնի մասին, նա մի քանի մարդու տեղ եր բռնել...

Ծերունու պատասխանը նրան բարկացրեց:

— Ի՞նչ է, յերևի դուք կարծում եք, վոր յես ձեր հովանոցով պիտի դուրս գայի առյուծներ վորսալու, — ասաց մեծ մարդը հպարտությամբ:

Փոքրիկ պարոնն աչքը ձգեց իր հովանոցին, մեղմ ժպտաց ու հետո նույն սառնասրտությամբ հարցրեց.

— Ուրեմն, պարոն, դուք...

— Այո, յես Տարասկոնցի Տարտարենն եմ, առյուծներ սպանողը...

Այդ խոսքերն արտասանելով անվեհեր Տարասկոնցին առյուծի բաշի նման թափ տվեց իր Ֆեսի փունջը:

Ջարմանքի և ապշության մի շարժում անցավ ամբողջ կառքով:

Կրոնավորը յերեսը խաչակնքեց, կոկոտ կանայք ճչացին, իսկ լուսանկարիչը մոտեցավ առյուծասպան հերոսին, արդեն յերագելով նրա լուսանկարը հանելու բարձր պատվի մասին:

Միայն փոքրիկ ծերունին եր, վոր մնաց բոլորովին անխռով:

— Շատ առյուծ եք սպանել արդեն, պարոն Տարտարեն, — հարցրեց նա շատ հանգիստ կերպով:

Տարասկոնցին խոսքի տակ չմնաց.

— Դուք հարցնում եք, թե արդյոք շատ առյուծ եմ ըսպանել: Յես միայն կցանկանայի, վոր դուք ձեր գլխի վրա այնքան մազ ունենալիք:

Ամբողջ դիլիժանսը թնդաց ծիծաղից: Ամենքը հայացքն ուղղեցին ծերուկի լերկ գանգին, վորտեղ ցցվում էին յերեք գեղնավուն մազեր:

Լուսանկարիչը մեջ մտավ և դիմելով Տարտարենին ասաց.

— Շատ յերկկուղալի արհեստ եք ընտրել, պարոն Տարտարեն... Պատահում են չափազանց ծանր ըրպեներ... Այսպես որինակ խեղճ պ. Բոմբոնելը...

— Ա՛, դուք հովազների վորսորդ Բոմբոնելի մասին եք ասում,—ընդհատեց Տարտարենն արհամարհական կերպով:

— Ուրեմն դուք նրան ճանաչում եք,—հարցրեց փոքրիկ ծերունին:

— Պահ, այդ ի՞նչ խոսք ե... քսան անգամից ավելի միասին վորսորդություն ենք արել:

Փոքրիկ ծերունին ժպտաց:

— Ուրեմն դուք հովազներ ել եք վորսում, պարոն Տարտարեն:

— Այո, յերբեմն... ժամանցի համար, — պատասխանեց դազազած Տարասկոնցին: Հետո մի հերոսական շարժումով գլուխը վեր բարձրացնելով ավելացրեց.

— Բայց այդ իհարկե այն չե, ինչ վոր առյուծը:

— Ի՞նչ խոսք,—կրկին մեջ մտավ լուսանկարիչը,—իսկապես ասած հովազը միևնույնն ե, թե ինչ վոր մի մեծ կատու:

— Այո, այո, շատ ճշմարիտ եք ասում, — նկատեց Տարտարենն ուրախանալով, վոր կարող ե նսեմացնել Բոմբոնելի փառքը մանավանդ տիկիներին առաջ:

Այստեղ դիլիժանսը կանգ առավ, կոնդուկտորը կառքի գուռը բանալով, պատկառանքով դիմեց փոքրիկ ծերունուն:

— Պարոն, դուք արդեն հասաք:

Փոքրիկ պարոնը վեր կացավ, կառքից իջավ և նախքան գուռը փակելը՝ ասաց.

— Պարոն Տարտարեն, թույլ կամք ինձ մի խորհուրդ տալ ձեզ:

— Ի՞նչ խորհուրդ, պարոն:

— Հավատացեք ինձ, պարոն, տեսնում եմ, վոր լավ մարդ եք և խոսում եմ անկեղծ կերպով: Շուտ վերադարձեք Տարասկոն, պարոն Տարտարեն, գուռ ժամանակ մի կորցնեք: Այս կողմերում այժմ հազիվ մի քանի հատ հովազ մնացած լինի: Ձեզ համար դա շատ չնչին վորս ե... Իսկ ինչ վերաբերում ե առյուծներին, Ալփիբում այլևս առյուծ չկա... պրծավ... իմ բարեկամ Շասենն սպանեց վերջին առյուծին:

Այս ասելով ծերունին գլուխ տվեց, գուռը փակեց և հովանոցը ձեռին ու պորտաֆելը կոնատակին, ծիծաղելով հեռացավ:

— Կոնդուկտոր,—հարցրեց Տարտարենը, դեմքին տալով իր հայտնի ծամածուլությունը,—մի եր այդ մարդուկը:

— Ինչպե՞ս, միթե՞ չեք ճանաչում, դա հենց ինքը պարոն Բոմբոնելն եր:

## ԱՌՅՈՒԾՆԵՐԻ ՎԱՆՔԸ

Միլիանահում Տարտարենն իջավ, իսկ դիլիժանսը շարունակեց իր ճանապարհը դեպի հարավ:

Յերկու որ շարունակ կառքը ջարդել եր նրա վոսկորները: Յերկու դիշեր անդադար նա աչքերը բաց դիտել եր շրջակայքը, տեսնելու համար, թե արդյոք չի լերևում առյուծի վիթխարի սովերը. այժմ արժեք, վոր նա փոքր ինչ հանդիստ տար իր հոգնած մարմինն: Բացի այդ, չպիտի թազցնել, վոր Բոմբոնելի հետ ունեցած չարաբաստիկ դիպվածից հետո ուղղամիտ Տարասկոնցին, չնայած իր զենքերին, իր ահուելի կերպարանքին և կարմիր գլխարկին, այնքան ել լավ չեր զգում իրեն որլիանսավիցի լուսանկարչի և հուսարական 3-րդ գնդի որիորդների առաջ:

Նա անցավ քաղաքի լայն փողոցներով, վորոնք զարդարված եյին գեղեցիկ ծառերով ու շատրվաններով: Յեւ մինչդեռ նա մի հարմար հյուրանոց եր՝ փնտրում, խեղճ մարդը չեր կարողանում մոռանալ Բոմբոնելի խոսքերը... Յեթե իրոք ճշմարիտ եր այդ... Յեթե իրոք վոչ մի առյուծ չի մնացել Ալժիրում... Ինչձև համար են ուրեմն այս բոլոր արշավանքները, այդ բոլոր նեղությունները...

Մեկ ել հանկարծ, յերբ նա թեքվում եր մի այլ փողոց, մեր հերոսի դեմ առ դեմ դուրս լեկավ... Ի՞նչ եք կարծում, Տիվ... մի փառահեղ առյուծ, վորը սպասում եր մի սրճարանի դռան առաջ արքայորեն բազմած և շեկ բաշն արևին տված:

— Ո՞վ եր ասում, թե ալլևս առյուծ չի մնացել,— բացականչեց Տարտարենը մի քայլ հետ ցատկելով... Այդ բացականչության վրա առյուծը գլուխն իջեցրեց և իր յերախով գետնից վեր բարձրացնելով իր առաջ մայթի վրա դրված փայտե սնակը, խոնարհաբար մեկնեց այն դեպի Տարտարենը, վորն ապշությունից մնացել եր քարացած:

Մի արար, վոր այդ ըոպեյին անցնում եր, մի սև փող ձգեց այդ պնակի մեջ. առյուծը պոչը շարժեց: Այն ժամանակ Տարտարենն ամեն ինչ հասկացավ: Նա տեսավ այն, ինչ սկզբում հուզմունքը թուլլ չեր տվել նրա տեսնելու: Նա տեսավ մի խումբ մարդիկ, հավաքված կույր և ընտելացած գազանի շուրջը և յերկու ահագին նեղրեր, վորոնք մի-մի մահակ ձեռներին

ման ելին ածուժ առյուծին քաղաքի փողոցներով, ինչպես վոր ման են ածուժ արջերին ու կապիկներին:

Տարասկոնցու արյունը խփեց գլխին:

— Թշվառականներ, — վորոտաց նա ահուելի ձայնով, — ինչպես եք համարձակվում դուք այդպես անարգել ազնիվ անասուններին:

Յե՛վ նետվելով դեպի առյուծը, նա դուրս կորզեց ստոր պնակը նրա արքայական ժանիքներից: Յերկու նեգրերը, կարծելով, վոր նա ուզում ե խլել հավաքած փողը, մահակներով ընկան Տարասկոնցու վրա և սկսվեց սարսափելի մի իրարանցում... Նեգրերը խփում ելին, կանայք ճչում, մանուկները ծիծաղում, մի ծերունի հրեա կոշկակար իր խանութի ներսից գոռում եր. «Գա՛ջ տվե՛ք դատարան, քա՛ջ տվե՛ք դատարան»: Նույնիսկ առյուծն իր կույր տեղով փորձեց մի մոնչյուն արձակել և դժբախտ Տարտարենը որհասական պայքարից հետո թավալվեց գետնի վրա պղնձադրամների և փոշու մեջ:

Այդ ըոպելին՝ մի մարդ ձեղքեց բազմությունը, մի կողմ քշեց նեգրերին, կանանց և մանուկներին, բռնեց, վեր բարձրացրեց Տարտարենին, թափ տվեց, մաքրեց նրա շորերը և նստացրեց, վոր շունչ քաշի:

— Ինչպես, իշխան, այդ դժուք եք, — բացականչեց Տարտարենը, շփելով իր շարդված կողերը:

— Այո, իմ քաջ բարեկամ, յես եմ... ձեր նամակն ստանալուն պես Բայիային հանձնեցի իր լեղձորը, մի կառք վարձեցի և հիսուն մղոն սրարշավ կտրելով ահա հասա ճիշտ այն ըոպելին, լերբ հարկավոր եր ազատել ձեզ այս բիրտ մարդկանց կատաղությունից... Ասացե՛ք, ի սեր աստծո, այդ ինչ եք արել, վոր պատճառ ե լեղել այս անախորժ դեպքին:

— Ա՛խ, իշխան... միթե կարելի լեր անտարբեր աչքով նայել այդ թշվառ առյուծին՝ փախտ պնակը բերանում բռնած, նվաստացած, պարտված, այդ մոլուտլման ամբոխի ծաղր ու ծանակի առարկա դարձած...

— Բայց դուք սխալվում եք, ազնիվ բարեկամ. այդ առյուծն ընդհակառակը, նրանց համար հարգանքի և պաշտամունքի առարկա լե: Նա համարվում ե սուրբ անասուն և պատկանում ե առյուծների այն մեծ վանքին, վոր յերեք տարի առաջ հիմնել ե Մահոմեդ - Բեն - Աուդան: Այդ մի մեծ մենաստան ե լի գիշատիչ գազանների բուրմունքով և մոնչյունով, վորտեղ տարի-

ներով վանականները կրթում և ընտելացնում են հարյուրավոր առյուծների, և հետո իրենց հավաքարար միաբանների հետ ուղարկում են նրանց Հյուսիսային Աֆրիկա ժողովարարություն անելու: Վանականների հավաքած նվերներով պահպանվում են թե՛ վանքը և թե՛ նրա մզկիթը: Յեվ յեթե նեգրերն անողոք վարվեցին ձեզ հետ, պատճառն այն է, վոր ըստ նրանց համոզմունքի, լեթե իրենց անհոգութունից մի սև փող անգամ կորչի կամ գողացվի հավաքված փողից, առյուծն իսկույն պատառ-պատառ կանի նրանց:

Լսելով այդ անհավատալի, սակայն ճշմարիտ պատմությունը, Տարտարենը հանգիստ շունչ քաշեց:

— Այս բոլորի մեջ ինձ համար կարևոր է այն, ականջը խոսի պ. Բոմբոնելին, վոր Ալժիրում դեռևս առյուծներ կան, — ասաց նա վորպես յեզրակացություն:

— Իհարկե կան, թվ է ասում չկան, — հաստատեց իշխանը վողևորությամբ. — հենց վաղը մենք կարշավենք դեպի Շելիֆի տափաստանը և այնտեղ կտեսնեք...

— Ի՞նչ եք ասում, իշխան, միթե դուք ել եք մտադիր վորսի գնալու:

— Գրողը տանի, միթե՞ կարող եմ թողնել ձեզ մենակ Աֆրիկայի անապատներում, այդ վալրենի ցեղերի մեջ, վորոնց վնչ լեզվին եք ծանոթ, վնչ ել սովորություններին... Վնչ, վոչ հոչակավոր Տարտարեն, լես այլևս ձեզնից չեմ հեռանա... Յես ուզում եմ լինել այնտեղ, ուր կլինեք դուք...

— Ո՛հ, իշխան, իշխան...

Յեվ Տարտարենը պայծառացած դեմքով, կրծքին սեղմեց քաջ Գրիգորիին, հպարտությամբ մտածելով այն մասին, վոր ժյուլ Ժերարի, Բոմբոնելի և բոլոր մյուս նշանավոր առյուծասպանների նման ինքն ել իր հետ կունենա ոտարկերկրյա մի իշխան, իր վորսորդություններին ընկերակցելու համար:

## ՔԱՐՍՎԱՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մյուս որը առավոտյան, անվեհեր Տարտարենը և վոչ պահաս անվեհեր իշխան Գրիգորին վեց նեզր բեռնակիրների ուղեկցությամբ ճանապարհ ընկան Շելիֆի տափաստանը: Զառիթափ ճանապարհը յերկու կողմից զարդարված էր հասմիկի թփերով ու վայրի ձիթենիներով, հազարավոր վճիտ աղբյուր-

ներ ուրախ գլորվում էին ժայռից ժայռ և լերգում... Սքանչելի տեսարան:

Իշխան Գրիգորին մեծ Տարտարենի նման նույնպես սպառազինվել եր վտարից մինչև գլուխ: Բացի այդ, նա գլխին դրել եր զինվորական մի շքեղ և տարրինակ գդակ, վոսկեկար ժապավեններով, արծաթե թելերով հլուսված կաղնու տերևների զարդանկարներով: Այդ գդակով նորին իշխանական բարձրութունը նմանում եր մեքսիկական գեներալի, կամ թե Դանուբյան յերկրներից մեկի կայարանապետի:

Այս տարրինակ գդակը շարժեց Տարասկոնցու հետաքրքրութունն ու զարմանքը, ուստի նա անհամարձակ կերպով մի քանի բացատրութուններ խնդրեց:

— Այս գդակն անհրաժեշտ ե Աֆրիկայում ճանապարհորդելու համար, — պատասխանեց իշխանը լրջութամբ և թևով փայլեցնելով գդակի պահպանակը, նա իր միամիտ ընկերակցին ծանոթացրեց այն կարևոր դերին, վոր խաղում ե գլխարկն արաքների հետ մեր ունեցած հարաբերութունների մեջ, թե ինչպիսի սարսափ եր ներշնչում նրանց այդ ուղմական նշանը. Այդ ե պատճառը, վոր կառավարութունն իր բոլոր պաշտոնյաներին՝ սկսած ճանապարհի պահպանից մինչև հարկահավաքը, ամենքին ել զարդարել ե զինվորական գլխարկով: Մի խոսքով Ալթիրը կառավարելու համար, — շարունակեց իշխանը, — հարկավոր ե վոչ թե խելոք գլուխ և կամ առհասարակ վորևե գլուխ, այլ բավական ե միայն ժապավեններով զարդարված մի փայլուն գլխարկ, ինչպես Գեսլերի<sup>1)</sup> գդակը:

Այդպես խոսելով և փրիսոփայելով, քարավանը կամաց կամաց առաջ եր գնում: Բորիկ բեռնակիրները թռչկոտում ելին ժայռից-ժայռ և կապիկների նման կռնչում: Ձեռքերի արկղը զնգզնգում եր, հրացաններն արևի տակ շողշողում էին: Բնիկ անցորդները մինչև գետին էլին խոնարհվում մոզական գլխարկի առաջ... Այնտեղ վերևում Միլիանահի պատնեշների վրա զինվորական քաղաքապետը, վոր այդ բոլորին դուրս եր յեկել իր տիկնոջ հետ փոքր ինչ գով ող ծծելու, լսելով այդ արտասովոր աղմուկը և ծառերի արանքից տեսնելով հրազենների փայլը, կարծեց թե դա մի հարձակում ե ավազակների

1) Շվեյցարիայի փոխարքան, վոր հրամայել եր ժողովրդին գլուխ առ իր գլխարկին: Վերելվ Տեղը հրաժարվեց կատարելու այդ ստորացնող հրամանը: Մ. ք.

կողմից: Անմիջապես նա կարգադրեց տագնապի թմբուկը խը-  
փել, վերցնել մուտքի շարժական կամուրջը և ամբողջ քաղաքը  
հայտարարել պաշարողական դրության մեջ:

Այդ իհարկե լավ նշան եր քարավանի համար: Դժբախտա-  
բար լերեկոյան դեմ գործերը փչացան: Բեռնակիր նեզրերից  
մեկը դեղարանի սպեղանիներից մեկն ուտելով, սոսկալի ծա-  
կոցներ եր ստացել, մի ուրիշն ել կամֆարայի ողին խմելով,  
հարբել, ընկել եր ճանապարհի յեզրին: Յերրորդը, վոր տանում  
եր ճանապարհորդական ալքումը, հրապուրված գրքի կազմով և  
վոսկեզոծ ճարմանդներով ու համոզված, վոր Մեկկայի գանձ ե  
հափշտակում, առել—փախել եր դեպի Զակկար: Պետք եր այդ  
բոլորի առաջն առնել... Քարավանը կանգ առավ և մի հինավուրց  
թղենու շվաքի տակ նստեց խորհրդի:

— Յես կարծում եմ,—ասաց իշխանը փորձելով, բայց ան-  
հաջող, կերակուր լեփելու համար լուծել չորացրած մսի տաը-  
լետը կատարելագործված մի կաթսայի մեջ, վոր ունի յերեք  
հատակը,—յես կարծում եմ, վոր հենց այս որվանից մենք պետք  
ե հրաժարվենք նեզր բեռնակիրներին... Այստեղից վոչ հեռու կա  
արաբական մի շուկա: Ավելի լավ ե գնանք այնտեղ և մի քանի  
հատ ավանակ գնենք...

— Վճիչ, վոչ, ավանակ հարկավոր չե,— արագ ընդհատեց  
մեծ Տարտարենը, վորը հիշելով Սևուկի մասին, մինչև ականջ-  
ները կարմրեց... Հետո ավելացրեց.— Միթե այդ փոքրիկ անա-  
սունները կարող են այսքան մեծ ծանրությունները փոխադրել:  
Իշխանը ժպտաց:

— Հենց այդ ե, վոր ձեզ խաբում ե, իմ նշանավոր բարե-  
կամ, չնայած իր փոքրությանը և վտիտ կերպարանքին, ալ-  
ժիրական ավանակն ամուր մեջք ունի: Այլապես նա չեր կարող  
դիմանալ այդ վիճակին: Հարցրեք արարներին: Ահա թե ինչ-  
պես են բացատրում նրանք մեր գաղութային սիստեմը... Վերե-  
վում, ասում են նրանք, նստած ե մուսի<sup>1)</sup> նահանգապետը և  
ձեռքի մեծ մահակով թակում ե սպային, սպան ել վրեժի համար  
թակում ե զինվորին, զինվորը թակում ե արաբին, արաբը՝ նեզ-  
րին, նեզը՝ հրեային, հրեան ել ավանակին: Վորովհետև ավա-  
նակը վոչ վոքի չի կարող թակել, ուստի մեջքը կռացնում ե ու  
բեռը վերցնում: Այնպես վոր վստահ լեղեք, վոր ձեր արկղներն  
ել կվերցնի:

1) Աղավաղված «սյոռ», ֆրանսերեն պարոն: Մ. Թ.





— Այդ ճիշտ է, միայն թե իմ կարծիքով մեր քարավանի տեսքի համար պահանակները նպաստավոր չեն,— ասաց Տարտարենը:— Յես կցանկանալի, վոր մեր քարավանն ինչքան կարելի յե ավելի արևելյան կերպարանք ունենա... Ա՛յ, լեթե կարողանայինք մի ուղտ ճարել:

— Վորքան կուզեք,— ասաց նորին բարձրությունը և նըրանք քայլեցին դեպի արաբական շուկան: Շուկան գտնվում էր մի քանի կիլոմետր հեռավորության վրա Շելիֆ գետի յեզերքում: Հինգ թե վեց հազար պատառոտած շորերով արաբներ արևի տակ վխտալով առևտուր ելին անում, շրջապատված սև ճիթապողի կարասներով, մեղրով լի ամաններով և ծխախոտի ու համեմների պարկերով: Ահագին խարույկների վրա ամբողջ վոշխարներ եյին խորովում. բացոթյա սպանդանոցներում բոլորովին մերկ, վտոներն արլան մեջ թաթախված փոքրիկ դանակներով կտրտում ելին ցցից կախ արած ուլերը:

Մի անկյունում հազար ու մի գունչի կարկատանով նաշխված վրանի տակ ծալապատիկ նստած է մավրիտանցի գրագիրը ակնոցներն աչքին ու մի ահագին գիրք առջևը դրած: Մի ուրիշ տեղ ժողովուրդը խռնվել է, աղմուկ ու գոռուս-գոչում. այնտեղ խաղում են ուռլետ, վորը դրված է ցորենի չափի վրա: Ավելի հեռվից լսվում են ծիծաղի և հրհոսցի ձայներ— մի հրեա վաճառական իր ջորու հետ միասին ընկել է գետը և խեղդվում է: Չորս կողմը վխտում են կարիճներ, շներ, ագռափներ և ճանճ... ճանճ...

Հակառակի պես վոչ մի տեղ ուղտ չեր յերևում: Վերջապես մի հատ գտնվեց, վորից ուզում եյին ազատվել նրա տերերը: Այդ մի կատարլալ անապատի ուղտ էր, կլասիկ ուղտ, մազերը թափթփված, դեմքը մեկամաղձոտ, բեղվիների լերկար գլխով և քաղցածությունից հալ ու մաշ յեղած և թուլացած սապատով, վորը տխուր կերպով կախ էր ընկել:

Սակայն Տարտարենին այդ ուղտն այնքան դուր յեկավ, վոր նա հրամայեց ամբողջ քարավանը բեռնել նրա վրա: Ո՛վ արևելյան խենթություն: Ուղտը չոքեց և սնդուկները բարձեցին: Իշխանը նստեց ուղտի վզին, իսկ Տարտարենը վեհության համար բարձրացավ սապատի գլուխը և բազմեց յերկու արկղի արանքում: Անտեղից նա հպարտ և ազնվաշուք շարժումով վողջունեց ամբողջ շուկային, վոր ամեն կողմից վազել էր, և

մեկնելու նշան տվեց: Սատանան տանի, յեթե տարասկոնցի-  
ներն այդ բոլորին կարողանային նրան տեսնել...

Ուղարկ վերկացավ չոքած տեղից և մեկնելով իր յերկար,  
կողտերով ծածկված վոտները, սլացավ առաջ...

Ո՛վ սարսափ: Հագիվ փոքր ինչ առաջ եյին գնացել, մեկ  
եւ հանկարծ Տարտարենի լերեսի գույնը թուով և հերոսական  
Ֆեսը սկսեց ճիշտ նույն վիճակին յենթարկվել, ինչ «Ձուավ»  
նույի վրա: Այդ անխժած ուղտն այնպես եր ճոճում, ինչպես  
խակական առաջաստանով:

— Իշխան, իշխան,— ձայն տվեց Տարտարենը գույնն ավե-  
լի թոցնելով և ուղտի սապատն ամուր գրկելով... Իշխան, ի  
սեր աստծո, իջնենք... Յես զգում եմ... յես զգում եմ... վոր  
Ֆրանսիան պիտի խայտառակեմ:

Բայց բանը բանից անց եր. ուղտը մեկ անգամ, վոր ըս-  
կսել եր վազել, այլևս անհնար եր նրան կանգնեցնել: Չորս հա-  
զարի չափ արարներ վոտաբորիկ վազում եյին նրանց հետևից,  
խելազարների նման հռհռալով և վեց հարյուր հազար ատամներ  
արևի տակ փայլեցնելով:

Տարասկոնցի մեծ մարդը ստիպված եր համակերպել ճա-  
կատագրի հետ: Նա տխուր կերպով ընկավ ուղտի սապատին:  
Ֆեսն ստացավ բոլոր դիրքերը... և Ֆրանսիան խայտառակվեց:

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԱՐԱՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԴԱՓՆԵՎԱՐԴԻ ԱՆՏԱՌՈՒՄ

Վորքան եւ նկարչագեղ լիներ իրենց նոր հեծանելիքը,  
այնուամենայնիվ մեր քաջերը ստիպված եյին հրաժարվել նը-  
րանից, նկատի ունենալով Ֆեսի վիճակը: Նրանք դարձյալ վոտ-  
քով շարունակեցին ճանապարհը, և քարավանը հանդարտ կեր-  
պով քայլերն ուղղեց դեպի հարավ կարճատև դադարներով: Տա-  
րասկոնցին գնում եր առջևից, չերնոգորիացին յետևից, իսկ  
նրանց մեջտեղ ուղտը՝ գենքի արկղները կռնակին:

Արշավանքը տևեց մոտ մի ամիս: Մի ամիս շարունակ ա-  
հեղ Տարտարենն անտեսանելի առյուծների յետևից ընկած դուա-  
բից—դուար<sup>1)</sup> թափառում եր Շելիֆի անծայրածիր տափաստա-  
նում, Ֆրանսիական ահարկու և զվարճալի Ալժիրի միջով,  
վորտեղ Հին Արևելքի բուրմուռները խառնվում ե Ֆրանսիական

1) Արաբական վրանների խումբ, բնակատեղի: Մ. Թ.

արսենթի և զորանոցի թունդ հոտի հետ, Աբրահամը Ձուղուլի հետ, կազմելով ինչ վոր դյուլթական և միաժամանակ զավեշտական բան... Տեսարանն արդարև հետաքրքրական է այն աչքերի համար, վորոնք ընդունակ են տեսնելու... մի վայրենի և փչացած ժողովուրդ, վորին մենք քաղաքակրթում ենք, տալով նրան մեր մոլորութիւնները... Դաժան և անսանձ իշխանավորներ, վորոնք ծանրութեամբ սրբում են իրենց քիթը Պատվի Լեզեոնի լայն ժապավենով, և մի այո-ի կամ մի վոչ-ի համար մարդկանց ֆալախկալի յեն քաշում: Անխիղճ դատավորներ, խոշոր ակնոցներով զադիները— դուրանի և որենքի այդ տարտյուֆները<sup>1)</sup>, վորոնք արմավենիների տակ նստած յերազում են ոգոստոսի 15-ը և պաշտոնի բարձրացում և իրենց դատավճիռները ծախում են, ինչպես Յեսավը իր անդրանկությունը միաման վոսպնաթանով կամ քաղցր կուսկուսով... Անառակ և հարբեցող կալիդներ մի վորևե գեներալ Յուսուֆի նախկին սպասավորներ և ախոսպաններ, վորոնք մահոնացի լվացարարուհիների հետ շամպայն են խմում և լափում են գառան խորոված, մինչդեռ նրանց վրանների առաջ ամբողջ ցեղը քաղցից սովամահ է լինում և շների բերնից խլում է իշխանավորի սեղանից շաբտված վոսկորները...

Իսկ շուրջը—ամենուրեք խոպան դաշտեր, արևակեզ ու չորացած արոտատեղիներ, ծածկված մերկ թփերով և կակտուսի մացառներով: Յեով այս է, վոր Տրանսխայի շտեմարան է կոչվում: Ետեմարան, ավաղ, դատարկ ցորենից և հարուստ միայն շնագայլերով և փայտոջիւններով: Գլուղերը լքված, բնակիչները գլուխները կորցրած փախչում են սովից, իրենք էլ չգիտեն թե ուր և ճանապարհները լցնում մեռածների դիակներով: Մեկ-մեկ յերևում են ֆրանսիական գյուղեր կիսաքանդ խրրճիթներով, անմշակ դաշտերով, շրջապատված մորեխների անհամար բազմութեամբ, վորոնք ամեն ինչ վոչնչացնելուց հետո այժմ պատուհանների վարագույրներն են կրծոտում, իսկ բնակիչները սրճարանում նստած արսենթ են խմում և տաք-տաք վիճում բարենորոգությունների և սահմանադրութեան ծրագիրների մասին:

Ահա թե ինչեր պիտի տեսներ Տարտարենը, լեթե նրա ուշադրութիւնն ուրիշ բանի վրա չլիներ. բայց Տարասկոնի

1) Տարայուֆ — Մուրիբի կոմեդիաներից մեկի հերոսը. կեղծ բարեպաշտ, սուս ճգնավոր, խորդախ մարդ: Մ. Խ.

զավակն ամբողջապես առլուծալին կրքով հափշտակված ուղիղ առաջ եր գնում առանց աջ ու ձախ նայելու, աչքերը համառորեն սևեռած դեպի այն յերևակայական հրեշները, վորոնց հետքն անգամ չեր լերևում:

Քանի վոր ծալովի վրանը համառորեն չեր ուզում բացվել, իսկ չորացրած սուպի տարլետը չեր հալչում, քարավանն ստիպված եր ամեն որ իջևանել տեղական ցեղերից մեկի մոտ: Ամեն տեղ, շնորհիվ իշխանի փայլուն գլխարկի, մեր վորսորդները հանդիպում եյին գրկաբաց ընդունելութչան: Նրանք իջևանում ելին աղաների տներում—արտառոց պալատներ, սպիտակացրած խոշոր ագարակներ առանց լուսամուտների, վորոնց մեջ խառնիխուռն կարելի լեր գտնել նարգիլներ և յեվրոպական թանկագին պահարաններ, Ջմլուռնիայի գորգեր և նորագույն սիստեմի լամպեր, տաճկական վոսկիներով լի սնդուկներ և լուխֆիլիպպի վոճով պատի ժամացույցներ: Ամեն տեղ Տարտարենի պատվին սարքում եյին շքեղ հանդեսներ, խնճուղքներ և ձիարշափներ... Նրա պատվին ձիավորները հրացան եյին արձակում, արևի տակ շողշողացնելով իրենց բուրնուղները: Յեվ յերբ ալդամենը վերջանում եր, հյուրասեր աղան մոտենում և ներկայացնում եր հաշիվը... Ահա այս ե կոչվում արաբական հյուրասիրություն:

Յեվ սակայն առլուծները չկալին, բայց և այնպես Տարասկոնցին չեր հուսահատվում: Անվեհեր քաջությամբ միշտ առաջանալով դեպի հարավ, ամբողջ որբերը խուզարկում եր մացառուտները և հրացանի ծայրով խփում եր մեկ այս ծառին, մեկ այն թփին և «փիշտ-փիշտ» եր անում... Իսկ ամեն յերեկո պառկելուց առաջ մի լերկու ժամ դարան եր մտնում և սպասում... Բայց ապարդյուն աշխատանք.— առլուծ չկար ու չկար:

Սակայն մի յերեկո, ժամը վեցի մոտերը, յերբ քարավանն անցնում եր մի ցանցառ պուրակով, ուր արևի շերմությունից թուլացած լորամարգիները թռչկոտում ելին խոտերի մեջ, մեկ ել հանկարծ Տարտարենի ականջին դիպավ— թեև շատ հեռվից, թեև անորոշ, թեև քամուց կցկտուր— մի հրաշալի մռնչյուն, վոր նա շատ անգամ լսել եր Տարասկոնում Միտենի գազանանոցից:

Տարտարենը սկզբում այնպես կարճեց, թե այդ իրեն թըվում ե միայն... Բայց մի պահ հետո մռնչյունը նորից լսվեց, թեև դարձյալ հեռվից, բայց ավելի վորոշ կերպով և այս անգամ

ամեն կողմից վրանաբնակ արաբների շներն՝ սկսեցին վռնալ, հիւսիս ուղտի սապատը դողդողաց, գնդնգացնելով վրայի կոնսերվները և զենքի արկղերը:

Այլևս տարակուսս չկար. դա առյուծի մոնչյունն էր. շուտ, շուտ, պետք է խոկույն դարան մտնել. մի րոպեն անգամ թանգ ե: Մի քանի քայլ հեռու կար մի մարաբու, մահմեդական սրբի գերեզման՝ սպիտակ գմբեթով և դռան վրա մի փոքրիկ խոռոչով, վորտեղ դրված էյին հանգուցյալի դեղին հողաթափները: Պատերի վրա ճեղքերի մեջ խրված էյին շորի կտորներ, վոսկեզոծ թելեր, շեկ մագեր, վորպես ուխտի արտառոց նշաններ:

Տարտարենն իր իշխանին և իր ուղտին տեղավորեց այն տեղ ու սկսեց դարան մտնելու համար տեղ վորոնել: Իշխան Գրիգորին ուզում էր հետևել նրան, բայց Տարասկոնցին մերժեց, ցանկանալով մենակ ճակատ-ճակատի դուրս գալ առյուծի հետ: Համենայն դեպս նա պատվիրեց նորին բարձրութեան չըհեռանալ իր տեղից և զգուշութեան համար պահ տվեց նրան իր պորտֆելը, մի հաստ պորտֆել, վոր լիքն էր արժեթղթերով և բանկալին տոմսերով: Նա վախենում էր, վոր այդ բոլորը կպատառոտվեն առյուծի ճիրաններում: Այդ անելուց հետո մեր հերոսը գործի անցավ:


Գերեզմանից հարլուր քայլ հեռու գրեթե ցամաքած մի գետակի ափին վերջալույսի նուրբ շղարշի ներքո սոսափում էր դափնեվարդի մի փոքրիկ անտառ: Այնտեղ ահա Տարտարենը դարան մտավ, մի ծունկը չոքած ըստ կանոնի, հրացանը ձեռքին բռնած և վորսորդական մեծ դանակն առջև հպարտորեն ավազի մեջ խրած:

Գիշերը վրա հասավ: Վերջալույսի վարդագույն շողը փոխվեց մանիշակագույնի, հետո ել մութ կապույտի: Ներքևում, գետակի խճաքարերի մեջ փոքրիկ հայելու նման փալլում էր վճիտ ջրի մի շերտ, դա գազանների ջուր խմելու տեղն էր: Գետակի մյուս ափում նկատվում էր մի սպիտակ շավիղ, վոր բաց էյին արել գազաններն իրենց խոշոր թաթերով: Այդ խորհրդավոր կածանը մարդու վրա սարսուռ էր ազդում: Ավելացրեք դրան աֆրիկյան գիշերների անորոշ շուկները, ճյուղերի սոսափյունը, շնագայլերի վռնոցը, վորս փնտրող գազանների անաղմուկ քայլերը, և այնտեղ վերևում, յերկու-յերեք հարյուր մետր բարձրութամբ թռչող կոտակների սրտածմլիկ կռիւնչը, վորը մորթոտվող մանուկների ձայնին է նման, և այն

ժամանակ կհասկանաք, թե հիմնավոր պատճառներ կային հուզվելու...

Յե՛վ Տարտարենը հուզված էր: Նա նույնիսկ ավելի քան հուզված էր. խեղճի ատամներն իրար եյին խփվում, հրացանը ձեռքում դողդողում էր և նրա փողը դիպչում ավազի մեջ խըրված դանակին և զնգում: Հապա թնչ եք կարծում: Լինում են որեր, յերբ մարդ տրամադիր չի լինում, և հետո, թնչ արժե քաջությունը, յեթե հերոսները յերբեք վախ չզգային...

Այո, Տարտարենը վախեցավ, խիստ վախեցավ: Բայց և այնպես նա դիմացավ մեկ ժամ, յերկու ժամ, բայց հերոսությունն էլ իր սահմաններն ունի: Մեկ էլ հանկարծ գետակի ցամաքած հունից վոտնաձայններ լսվեցին... Այս անգամ մեր հերոսը յերկուդից զլուխը բոլորովին կորցրեց... Նա մթության



մեջ յերկու անգամ իրար յետևից առանց նշան բռնելու կրակեց և յերեսը շուռ տալով, գլխապատառ սկսեց փախչել դեպի մարաբուն: Մնաց միայն դանակը ավազի մեջ խրված, իբրև հուշարձան ամենամեծ խուճապի, վորին յերբևիցե յենթարկվել է վիշապներին նվաճող մարդը:

— Հասեք, իշխան... առց՛ւժ...

Ձայն չկար:

— Իշխան, իշխան, ուր եք...

Իշխան չկար: Մարաբուլի սպիտակ պատի վրա լուսնի շողերի տակ յերևում էր միայն ուղտի սապատի անճոռնի ըստվերը... Իշխան Գրիգորին ծլկվել էր, տանելով իր հետ բանկային տոմսերով լի պաշուսակը: Արդեն մեկ ամիս էր, ինչ նորին մեծութունը սպասում էր այդ հարմար առիթին...

Այդ արկածալի և վողբերգական գիշերվա հաջորդ որը, լերբ մեր հերոսը վաղ լուսադեմին աչքերը բաց արեց և համոզվեց, վոր իշխանը և վողբերն անհայտացել են և այն ել անվերադարձ կերպով, լերբ նա տեսավ իրեն մեն-մենակ այդ փոքրիկ սպիտակ դամբարանում, խաբված, կողոպտված, լքված վայրի անապատում իր թշվառ ուղտի հետ միասին, մի քանի մանր փող գրպանում, այն ժամանակ Տարասկոնցին առաջին անգամ լինելով կասկածեց... Չերնոգորիա, բարեկամություն, փառք և նուկնիսկ առյուծներն այժմ արդեն կասկածելի էյին թվում նըրան... և մեծ մարդն սկսեց դառնապին արտասովել ինչպես Քրիստոսը Դեթսեմանի պարտեղում:

Յեկ մինչդեռ նա այդպես գլուխը լերկու ափի մեջ առած մտախոհ նստել եր մարաբույի դռանը, հրացանը ծնկների մեջ, ուղտը կողքին, մեկ ել հանկարծ դիմացի թուփը շարժվեց և ապշած Տարտարենն իրենից տասը քայլ հեռու տեսավ մի ահագին առյուծ, վորն առաջանում եր գլուխը բարձր բռնած, արձակելով ահարկու մոնչյուններ, վորոնցից դողացին մարաբույի պատերը, մինչև իսկ սրբի հողաթափերը պատի խոռոչում: Միայն Տարասկոնցին չդողաց:


— Ահա վերջապես,— գոռաց նա տեղից ցատկելով և նշան բռնելով... բոմբ... բոմբ, վորոտաց հրացանը և լերկու պայթյունից առույծի գլխին դիպավ գնդակը... Գազանի ուղեղը ցրիվ յեկավ պայթող հրթիռի պես խառն արյունի շերտերով և շեկ մազի ծվեններով, հետո տեսարանը պարզվեց և Տարտարենը տեսավ յերկու կատաղի նեգրերի, վորոնք մահակները ճոճելով վազում էլին իր վրա: Դրանք Միլիհանի նեգրերն էյին, իսկ առյուծը, մի սարսափ, Մոհհամեդի վանքի ընտելացրած կույր առյուծն եր, վորին գետին էյին տապալել տարասկոնյան գնդակները: Այս անգամ ել Մոհհամեդը վկա, Տարտարենը լավ ազատվեց: Նեգրերն անպատճառ նրան պատառ-պատառ կանեյին, յեթե քրիստոնյաների աստվածն ոգնության չհասներ նրան, ուղարկելով ինչպես ազատարար հրեշտակ Որլեանսովիլի համայնքի դաշտապահ վոստիկանին, վոր գալիս եր մի նեղ կածանով, թուրը կռնատակին:

Վոստիկանական գլխարկի տեսքը մի անգամից հանդարտեցրեց նեգրերի ցասումը: Խաղաղ և վեհ կերպով իշխանության

ներկայացուցիչը իսկույն արձանագրություն կազմեց, առյուծի աճյունները բարձել տվեց ուղտի վրա, և հայցվորներին, ինչպես և պատասխանատույին, հրամայելով հետևել իրեն, քայլերն ուղղեց դեպի Որլեանավիլ, վորտեղ գործը հանձնվեց դատարանին:

**Յերկար և տաժանելի դատավարութիւն:**

Թափառաշրջիկ ցեղերի Ալժիրից հետո, Տարտարենը տեսավ մի ուրիշ Ալժիր, վոչ պակաս ահալոր և անհեթեթ, աչն և քաղաքային, դատաստանական և փաստաբանական Ալժիրը: Նա տեսավ դատական այն խարդախությունները, վորոնք նյութավում են սրճարանների մութ անկյուններում, որենքի մարդկանց խուժանը, արսենթ բուրոդ «գործերը», շամպայնով արա-



տավորված սպիտակ փողկապները, նա ճանաչեց դատական կատարածուններին, միջնորդներին, գործակալներին, դրոշմաթղթի այդ մորեխներին, քաղցած և անկուշտ, վտիտ և ամենակուլ, վորոնք լափում և պլոկում են գյուղացիների ունեցած — չունեցածը, թողնում են նրանց բոլորովին տկուր, ինչպես յեզիպտացորենի մերկ ցողուն...

Ամենից առաջ հարկ յեղավ վորոշել, թե առյուծը վորտեղ և սպանված — քաղաքացիական թե զինվորական տերիտորիայի

վրա: Առաջին դեպքում գործը վերաբերում էր քաղաքացիական դատարանին, իսկ յերկրորդ դեպքում—Տարտարենը լենթակա չիր ռազմական դատարանին: Ռազմական դատարանի անունը տալիս խեղճ Տարասկոնցու մարմինը դող էր ընկնում. նա տեսնում էր իրեն կամ գնդակահարված և կամ գետնափոր զընդանում կուչ լեկած...

Սարսափելին այն էր, վոր այդ յերկու իշխանութլուններէ սահմանները շատ խառն էին Ալժիրում: Վերջապես մի ամբողջ ամիս գնալ-գալուց, սբան ու նրա դիմելուց, ժամերով գինվորական իշխանութլունների առաջ արևի տակ սպասելուց հետո, վորոշվեց, վոր թեև մի կողմից առյուծն սպանված է գինվորական իշխանութլան հողամասում, մյուս կողմից Տարտարենը կրակելու ժամանակ գտնվել է քաղաքացիական հողամասի վրա: Այսպիսով գործը հանձնվեց քաղաքացիական դատարանին և մեր հերոսն ոճիքն ազատեց լերկու հազար Ֆրանկի տույժով, առանց հաշվելու դատական ծախքերը:

Ինչպէս պետք է վճարել այժմ այդ գումարը: Իշխանի թալանից ազատված մի քանի ղուրուշը վաղուց ծախսել էր խնդրագրերի և դատաստանական արեսներէ վրա:

Առյուծների դժբախտ վորսորդը ստիպված էր ունեցած—չունեցածը՝ գեների արկղը մաս-մաս վաճառել: Նա ծախեց դաշույնները, մալխան դանակները, կաստետը... Մի մանրավաճառ գնեց կոնսերվի պաշարեղենը, մի դեղավաճառ ել՝ դեղարանը, բարձրավիզ կոշիկները և ճանապարհորդական կատարելագործված վրանը գնվեցին մի հնավաճառի կողմից, վոր այդ իրերը ցուցադրեց վորպես հազվագլուտ նորութլուններ... Բոլոր պարտքերը վճարելուց հետո Տարտարենին մնաց միայն առյուծի մորթին և ուղտը: Մորթին նա մեծ հողատարութլամբ ծրարեց և ուղարկեց Տարասկոն քաջասիրտ հրամանատար Բրավիդայի անունով (շուտով կտեսնենք, թե ինչ պատահեց այդ առասպելական ավարի հետ): Իսկ ուղտը նա ուզում էր ոգտագործել Ալժիր վերադառնալու համար, միայն վոչ թե հեծնելու նպատակով, այլ ծախելու և այդ փողով դիլիթանսի վարձը վճարելու համար: Դժբախտաբար ուղտը գնող չկար, իսկ Տարտարենն ուզում էր վորքան կարելի լի շուտով հասնել Ալժիր: Նա կարոտել էր Բայիայի կապույտ բաճկոնակին, իր գեղեցիկ տնակին, իր շատրվաններին: Նա ուզում էր հանգստանալ իր գովաշունչ գավթում և սպասել մինչև Ֆրանսիայից փող ստա-

նալը: Այսպիսով մեր հերոսը վորոշեց գործը չհետաձել: Խոցված սրտով, բայց անվհաս նա վճռեց վտոքով ճանապարհ ընկնել, անփող, որական կտրելով կարճ տարածութուն:

Այդ դժբախտության մեջ ուղտը նրան չլքեց: Այդ տարորինակ կենդանին մի անբացատրելի քնքուշութեամբ եր համակվել դեպի իր տերը: Յերբ Տարտարենը դուրս յեկավ Որլեանսվիլից, ուղտը հավատարմութեամբ գնաց նրա յետևից, հարմարեցնելով իր քայլերը նրա քալերին և մի քալ չհեռացավ նրանից:

Սկզբում այդ բանը շատ դուր յեկավ Տարտարենին. այդ աստիճանի հավատարմութունն ու անձնագոհութունը նրա սրտոջն եյին, մանավանդ վոր կենդանին նեղութուն չեր տալիս և համարյա վոչնչով բավականանում եր: Սակայն մի քանի որից հետո Տարասկոնցին սկսեց արդեն ձանձարնալ այդ մեյլամադձոտ կենդանու ընկերակցութունից, վոր հիշեցնում եր նրան իր բոլոր ձախորդութունները, հետո այդ սրտնեղությանը խառնվեց զայրութիւն և նա սկսեց ատել ուղտի տխուր կերպարանքը, նրա սապատը, բադի քայլվածքը: Մի խոսքով, նա այլևս տանել չեր կարող նրան և մտածում եր մի կերպ ազատվել նրանից: Բայց ուղտը հաստատ եր իր հավատարմության մեջ: Տարտարենը փորձեց նրան կորցնել, բայց ուղտը նրան գտավ: Նա փորձեց վազելով փախչել, ուղտն ել ավելի արագ վազեց: Նա քարով խփում եր ուղտին և գոռում — «կորբիր», ուղտը մի բոպե կանգնում, տխուր աչքերով նայում եր նրան և հետո դարձյալ շարունակում եր իր ճանապարհը և հասնում նրա յետևից: Տարտարենը ստիպված լեղավ համակերպվել:

Սակայն ութ որվա լերկար ճանապարհից հետո, լերբ Տարասկոնցին փոշոտ, ուժասպառ, հեռվից տեսավ Ալժիրի սպիտակ տնակները ծառերի և կանաչների մեջ թաղված, լերբ մոտեցավ քաղաքի դռներին, մտավ Մուստաֆայի աղմկալի պողոտան, վորտեղ նրան շրջապատեցին զուռաքաները, բիստրացի գորգագործները, լվացարարուհիները, դիտելով նրա քայլվածքը սառլատավորի հետ միասին, — նա այլևս չկարողացավ համբերել: «Վոչ, վոչ, — ասաց նա, — անկարելի լե, յես չեմ կարող մի այսպիսի կենդանու հետ Ալժիր մտնել»: Ոգտվելով չկառքերի կուտակումից, նա շեղեց ճանապարհը դեպի դաշտը և իրեն գցեց մի փոսի մեջ...

Մի քանի բոպե հետո նա տեսավ, վոր ուղտը վիզը յեր-

կարած, մտատանջ արշավում եր խճուղու՛ վրա, անցնելով  
փոսի կողքով:

Այն ժամանակ կարծես մի ահագին բեռից թեթևացած  
մեր հերոսը դուրս յեկավ իր թագստոցից և քաղաք մտավ  
դարստուղի մի կածանով, վորն անցնում եր իր փոքրիկ կալ-  
վածքի ցանկապատի լերկայնքով:

## ԱՂԵՏ ԱՂԵՏԻ ՅԵՏԵՎԻԾ

Հասնելով իր մավրիտանական տան առաջ, Տարտարենը  
զարմացած կանգ առավ: Արևը մայր եր մտնում: Փողոցն ամայի  
եր: Կամարակապ ցածլիկ դռնից, վոր նեգրուհին մոռացել եր  
փակել, լսվում եյին ծիծաղի ձայներ, բաժակների և շամպա-  
նիայի բացվող շշերի խցանների յռինդ, և այս դուրեկան աղմու-  
կի վրա իշխելով կանացի մի վճիտ ձայն, վորը զվարթ լերգում  
եր Ֆրանսիական մի յերգ:

Սիրում ես, սիրուն Մարկո,

Պարել ծաղկագարդ սալոններում:

— Տեր աստված,— գոչեց Տարասկոնցին գուլնը թռած և  
խոյացավ դեպի ներս:

Դժբանխտ Տարտարեն, ինչ տեսարան բացվեց նրա աչքին:  
Փոքրիկ գավթի կամարների տակ շշերի, քաղցրավենիների,  
ցիրուցան բաղձոցների, ծխամորճների, թմբուկների ու կի-  
թառների մեջ Բայիան վոտքի վրա կանգնած, առանց կապույտ  
բաճկոնակի, արծաթագույն շղարշե մի նուրբ շապիկով և վար-  
դագուլն լայն վարտիկով, ծովային սպայի գլխարկը ականջի վրա  
թեք դրած յերգում եր. «Սիրուն Մարկո» յերգը... նրա վոտների  
առաջ խսիրի վրա, սիրուց և անուշեղեններից հղփացած Բարբա-  
սուն, անամոթ կապիտան Բարբասուն անզուսպ հրհռում եր,  
ականջ դնելով յերգչուհուն:

Արևահար, փոշոտ, նիհարած, տենդից վառվող աչքերով,  
Ֆեսը գլխին ցցած Տարտարենի յերևալը հանկարծակի ընդհա-  
տեց թուրքո-մարսելիական այդ զվարթ խնճույքը: Բալխան վա-  
խեցած շնիկի պես ծվծվաց և ներս փախավ: Բարբասուն ամե-  
նեվին չչփոթվեց և սրտանց ծիծաղելով ասաց.

— Հը, ինչ կասեք հիմա, պարոն Տարտարեն, յես չեյի  
ասում, վոր աղջիկը Ֆրանսերեն գիտե:

Տարասկոնցի Տարտարենը բորբոքված մի քայլ առաջ լեկավ:

— Կապիտանն:

— Ասա իրեն, թող գնա, բարեկամ, — կանչեց վերեւից մավրիտանուհին չարաճճի և անպատկառ տոնով: Խեղճ մարդը թուլացած ընկավ մի թմբուկի վրա: Նա չէր սպասում, վոր արարուհին խոսում և նույնիսկ Մարսելլի բարբառով:

— Յես չէյի ասում, վոր աչնքան ել չպետք է հավատալ այդ ալժիրուհիներին, — խրատական շեշտով ասաց Բարբասուն, — ճիշտ այնպես, ինչպես ձեր Չերնոգորիայի իշխանը...

Տարտարենը գլուխը բարձրացրեց.

— Դուք զիտեք, թե ուր է իշխանը:

— Ո՛ր, աչնքան ել հեռու չէ: Նա ալժմ հինգ տարով բնակվում է Մուստաֆայի գեղեցիկ բանտում: Խեղճին բռնել են տեղն ու տեղը, գործի վրա... ասենք վոր սա առաջին անգամը չէ, վոր նրան ծակն են կոխում: Նորին բարձրութունն արդեն մի անգամ յերեք տարով նստել է ինչ վոր քաղաքում... յեթե չեմ սխալվում, կարծեմ հենց Տարասկոնում:

— Տարասկոնում, — բացականչեց Տարտարենն իսկույն գլխի ընկնելով, — ուրեմն դրա համար եր ասում, վոր քաղաքի միայն մի մասն է ճանաչում...

— Դե իհարկե, Տարասկոնի այն մասը, վոր յերևում է բանտի լուսամուտից... Եհ, իմ խեղճ, պարոն Տարտարեն, պետք է աչքաբաց լինել այս անիծյալ յերկրում, յեթե վոչ շատ անախորժ բաներ կարող են պատահել... Այ, որինակ ձեր և մուեղզինի պատմութունը:

— Ի՞նչ մուեղզին, ի՞նչ պատմութուն:

— Վահ, չգիտեյի՞ք, ձեր դիմացի մուեղզինը, մոլլան, վոր սիրաբանութուն եր անում Բայիայի հետ... Անցյալ որ «Ախպար» թերթը մանրամասն նկարագրել էր ամեն ինչ, վողջ Ալժիրը մինչև որս ել ծիծաղում է... Շատ զվարճալի մուեղզին է յեղել, վոր իր մինարեթի բարձունքից, աղոթքներ չերգելով հանդերձ ձեր քթի տակ սեր է բացատրվելիս չեղել սիրունիկի հետ և ժամադրութունն նշանակել ալահի անունը կանչելով...

— Ուրեմն այս յերկրում բոլորն ել սրիկամներ են, — վողբաձայն գոչեց տարաբախտ Տարասկոնցին:


Բարբասուն փիլիսոփայորեն ձեռը թափ տվեց:

— Սիրելիս, ի՞նչ արած, այսպես է նոր յերկրներում... Սակայն յեղածը յեղած է — յեթե ինձ լսեք, լավ կանեք՝ իսկույն վերադառնաք Տարասկոն:

— Վերադառնալ, հեշտ ե ասել, հապա դրամ՞ը... ուրեմն՝  
դուք չգիտե՞ք, վոր անապատում ինձ պրկեցին:

— Վնաս չունի,— ասաց կապիտանը,— «Զուավը» վաղը  
ճանապարհ ե ընկնում, յեվ լեթե ուզում եք, յես ձեզ կհասց-  
նեմ հայրենիք... համաձայն եք, բարեկամ, դեհ ուրեմն լավ,  
վորոշված ե: Այժմ մնում ե անել միայն մի բան. դեռևս մի-  
քանի շիշ շամպայն և կարկանդակի կեսը մնացել ե... Նստեցեք  
աչստեղ և անհիշաչար լինենք...

Կարճ տատանումից հետո, վոր նրան թելադրում եր իր  
արժանապատվությունը, Տարասկոնցին քաջաբար վճիռ կայա-  
ցրեց և նստեց: Բաժակներն իրար զարկեցին: Բայիան, վորը  
բաժակների չսկոցը լսելով, վար եր իջել, ավարտեց կիսատ թո-  
ղած յերզը և խնճուկքը շարունակվեց մինչև ուշ գիշեր:



Առավոտյան ժամը յերեքի մոտերքը, յերբ ազնիվ Տար-  
տարենը գլուխը թեթև, իսկ վոտքը ծանր վերադառնում եր իր  
բարեկամ կապիտանին ուղեկցելուց, մզկիթի մոտով անցնելիս  
հիշեց մուեզզիին, նրա սարքած խաղը և քթի տակ ծիծաղեց:  
Նրա մտքով անցավ վրեժխնդրության մի սքանչելի ծրագիր:  
Մզկիթի դուռը բաց եր: Ներս մտավ, անցավ խսիրով ծածկ-  
ված յերկար միջանցքներով, բարձրացավ, ելի բարձրացավ և  
վերջապես հասավ մահմեդական մի փոքրիկ աղոթարան, վոր-

տեղ առաստաղից կախված յերկաթյա մի լապտեր ճոճվելով, տարրորինակ ստվերներ եր հյուսուսւմ սպիտակ պատերի վրա:

Մուեզիինն աչնտեղ եր, նստած թախտի վրա, ահագին փաթաթոցը գլխին, սպիտակ արայով, չիբուխը բերնին: Նրա առաջ դրված եր մի մեծ բաժակ արսենթ, վոր նա բարեպաշտ կերպով ըմպում եր, սպասելով հավատացյալներին աղոթքի հրավիրելու ժամին... Տեսնելով Տարտարենին, նա վախից չիբուխը վայր գցեց:

— Վոչ մի բառ, տեր հայր,— ասաց Տարասկոնցին,— շուտ, տուր ինձ քո փաթթոցը և արան...

Թուրք քահանան դողդողալով հանեց և տվեց փաթաթոցը, արան, բոլորը, ինչ վոր ուզեց: Տարտարենը զգեստավորվեց և ծանր քալելով անցավ մինարեթի պատշգամբը:

Հեռվում փայլում եր ծովը: Ճերմակ տանիքները պսպղում էին լուսնի շողերի տակ: Մովային մեղմ հովը բերում եր ուշացած կիթառների հնչյուններ... Տարասկոնցի մուեզիինը մի պահ լուռ մտամտոփովեց, հետո բազուկները վեր տարածելով, սկսեց սաղմոսերգել սուր, ճղճղան ձայնով:

— Լն ալլահ, իլ ալլահ... Մահոմեդը ծեր խեղկատակ է, Արևելքը, Աուրանը, Բաշաղաները, աուլուծնիրը, մավրիտանուհիները, բոլորը, բոլորը սուտ են... Ել չկան «թուրքեր»... կան միայն գողեր և խաբեբաներ... Կեցցե Տարասկոնը:


Յեվ մինչդեռ հռչակավոր Տարտարենը արաբերենի և պրովանսական բարբառի մի արտառոց խառնուրդով նետում եր տարասկոնյան իր զվարթ անեծքն հորիզոնի չորս ծայրերին, մյուս մուեզիինների զիլ և կոկորդային ձայները պատասխանում էին նրան, անցնելով մինարեթից-մինարեթ, և վերին քաղաքամասի հավատացյալները ջերմեռանդությամբ ծեծում էին իրենց կուրծքը:

## ՏԱՐԱՍԿՈՆ, ՏԱՐԱՍԿՈՆ

Կեսոր է: «Զուավը» շոգիով լցված պատրաստվում է ճանապարհ ընկնել: Վերևում՝ «Վալենտին» կաֆեյի պատշգամբից պ. պ. սպաները դիտակն աչքերին՝ գնդապետի գլխավորությամբ, աստիճանի կարգով գալիս են դիտելու լերջանիկ նավը, վորը մեկնում է Ֆրանսիա: Դա սպայակուլտի գլխավոր զվարճությունն է: Ներքևում ծովախորշը պապղում է: Նավամատույ-

ցի լերկայնքին հողի մեջ թաղված թուրքական հին թնդանոթների փողերը փայլատակում են արևի տակ: Բիսկրիացի և մահոնացի բեռնակիրները բազաժները դարսում են նավակների մեջ:

Տարասկոնցի Տարտարենն է միայն, վոր բազաժ չունի: Ահա նա իջնում է Ծովային փողոցից, բանաններով և ձմերուկ-



ներով լի փոքրիկ շուկայով, իր խարեկամ Բարբասուլի ուղեկցութեամբ: Անբախտ Տարասկոնցին մավրիտանական ափի վրայ թողել իր զենքերի արկղը և իր պատրանքները, և այժմ նա պատրաստվում է նավարկել դեպի Տարասկոն, ձեռքերը դատարկ գրպանում դրած... Հազիվ եր նա ցատկել կապիտանի մակույկը, յերբ մի կենդանի հեվիհե վազելով, հասավ նրա հետևից: Այդ կենդանին ուղտն էր, հավատարիմ ուղտը, վորն ամբողջ քսանչորս ժամ փնտրում եր իր տիրոջը:

Տարտարենը նրան տեսնելով, գուլնը փոխեց. նա այնպես ձեվացրեց, վոր չի ճանաչում նրան: Մակալն ուղտը ձեռք չեր քաշում: Նա վազվզում եր դես ու դեն ծովափի յերկայնքին, կանչում եր բարեկամին, նայում եր նրան քնքջությամբ. «Ինձ ել տար» — կարծես ասում եր նրա տխուր հայացքը: Տար ինձ հեռու, շատ հեռու այս կարտոնն Աբարբիալից, այս ծիծաղելի Արեվելիքից, վորը լիքն է լուծոմոտիվներով և դիլիժանաներով, վոր-

տեղ յես, վորպես սնանկացած միասապատ, ալլև անելիք չու-  
նեմ: Դու վերջին «թուրքն» ես, յես ել վերջին ուղտը... Այլևս  
չբաժանվենք իրարից, ով իմ Տարտարեն»...

— Միթե այս ուղտը ձերն է, — հարցրեց կապիտանը:

— Ամենևին, — պատասխանեց Տարտարենը, վորին սար-  
սափեցնում եր այդպիսի ծիծաղաշարժ մեկի ընկերակցությամբ  
Տարասկոն մտնելու միաքը, և անամոթաբար ուրանալով իր  
դժբախտության որերի ընկերոջը, նա վտաքով հրեց ալժիրա-  
կան ափը և մակույկը թափ ստանալով սուրաց դեպի նավը...  
Ուղտը հոտոտեց ջուրը, վիզը յերկարացրեց և մեկ ել հանկարծ  
նետվեց ծովը մակույկի լետեկից լողալով դեպի «Ձուավը», կուզը  
ջրից դուրս ցցած և յերկար պարանոցը բարձր պահած ինչպես  
հնադարյան նավի ցուռ:

Մակույկը և ուղտը հասան և շարվեցին շոգենավի կող-  
քին:

— Ինչևե մեղքս գալիս ե այս ուղտը, — ասաց կապիտան-  
Բարրասուն զգացված, — յես ուզում եմ նրան նավ վերցնել և  
Մարսել հասնելուն պես նվիրել կենդանաբանական ալգուն:  
Ճախարակների և թոկերի ոգնությամբ նավի վրա բարձացրին  
ուղտին, վոր ծանրացել եր ծովի ջրից, և «Ձուավը» ճանապարհ  
ընկավ:

Յերկու որ տեվող ճանապարհորդության ընթացքում Տար-  
տարենը փակված ֆնաց իր խցիկում, վոչ թե այն պատճառով,  
վոր ծոֆն ալեկոծ եր, կամ թե գլխի ֆեսը հանգիստ չուներ,  
այլ անիծյալ ուղտը, հենց վոր նրա տերը յերևում եր տախ-  
տակամածի վրա, իսկույն մոտենում և պտտվում եր նրա շուրջը  
ցույց տալով մտերմության և հնազանդության ծիծաղելի նշան-  
ներ... Յերբեք վոչ մի ուղտ այնպես չի խայտառակել մարդու:

Ժամ առ ժամ իր խցիկի լուսամուտներից Տարտարենը  
տեսնում եր, թե ինչպես դժգունում եր ալժիրական յերկնքի  
լազուրը, հետո, վերջապես, մի առավոտ արծաթագույն մշուշի  
միջից նա յերանությամբ լսեց Մարսելի բոլոր զանգերի դո-  
ղանջը. հասել էին... «Ձուավը» խարխալը ձգեց:

Մեր հերոսը, վոր բազաժ չուներ, անխոս ցած իջավ և ա-  
րագ քայլերով անցավ Մարսելի միջով, վախենալով, վոր ուղտը  
կարող ե հետևել իրեն, և հանգիստ շունչ քաշեց միայն այն ժա-  
մանակ, յերբ տեղավորվեց Տարասկոն մեկնող գնացքի յերրորդ  
կարգի վագոններից մեկում... Խաբուսիկ ապահովություն:

Հաղիվ Մարսեյից յերկու մղոն հեռացել ելին, և հաս բուրի գլուխները դուրս լեկան լուսամուտից: Ճիչ, զարմանքի բացականչութուններ. Տարտարենը գլուխը հանեց պատուհանից և լինչ տեսնի... ուղտը, պարոն, անխուսափելի ուղտը, վորը կրնկակոխ արշավում եր յերկաթգծերի վրայով գնացքի յետևից և մրցում նրա հետ: Տարտարենը զարհուրած սմբեց իր անկյունում և աչքերը փակեց:

Իր չարաբաստիկ արշավանքից հետո նա մտադրվել եր տուն վերադառնալ ծածուկ, բայց այս հնազին չորքոտանու ներկայութունն անկարելի յեր դարձնում այդ: Ի՛նչ վերադարձ եր այդ, աստված իմ, առանց գրոշի, առանց առյուծների, վոչինչ... միայն և միայն մի ուղտ...

— Տարասկոն: Տարասկոն...

Պետք եր իջնել...

Ո՛վ զարմանք, հաղիվ մեր հերոսի ֆեսի ծայրը յերևացել եր վազոնի դռնից, յերբ լսվեց մի բարձր աղաղակ. «Կեցցե Տարտարենը», վորից դղրդացին կայարանի ապակեպատ կամարները, «կեցցե Տարտարենը, կեցցե առյուծների քաջ վորսորդը»: Յեվ իսկույն վորոտաձայն հնչեցին ֆանֆարները և խմբերգները: Տարտարենի աչքերը մթնեցին: Նա կարծում եր, վոր դա խաբկանք ե: Բայց վոչ, վողջ Տարասկոնն այնտեղ եր և ցնծությամբ վողջուհում եր նրան գլխարկները վեր-վեր նետելով: Ահա քաջ հրամանատար Բրավիրան, գինավաճառ Կոստեկալդը, նախագահը, դեղավաճառը և գլխարկի վորսորդների ամբողջ կազմը, վորը շտապում եր շրջապատել իր պետի շուրջը, և հաղթականորեն տանում նրան սանդուխքներից ցած...

Միրաժի զարմանալի հետևանքները: Այս բոլորի պատճառն եր կույր առյուծի կաշին, վորն ուղարկված ե լեղել Բրավիրային: Ակումբում ցուցադրված այդ համեստ մորթին բորբոքել եր տարասկոնցիների, իսկ նրանց հետ միասին և բոլոր հարավցիների գլուխները: «Սեմաֆոր» թերթը խոսել եր այդ մասին, նույնիսկ մի ամբողջ դրամա ելին հորինել: Մենակ մի առյուծ չեր վոր սպանել եր Տարտարենը, տասը առյուծ, քսան առյուծ, առյուծների մի բանակ: Այնպես վոր, յերբ Տարտարենը ժամանեց Մարսեյ, այնտեղ արդեն նրա անունը հռչակված եր առանց իր գիտության, և մի հեռագիր յերկու ժամ առաջ հաղորդել եր նրա գալուստը հայրենի քաղաքին:

Բայց ժողովրդի ցնծությունն իր գաղաթնակետին հասավ  
այն ժամանակ, լերը հեքյաթային մի կենդանի, փոշու և քըր-  
տինքի մեջ կորած, հայտնվեց հերոսի հետևից և ծումովելով իջավ  
կայարանի սանդուխքներից: Տարասկոնը մի պահ կարծեց, թե  
իր առասպելական Տարասկն է, վոր վերադառնում է:


Տարտարենը հանգստացրեց իր հայրենակիցներին, ասելով:  
— Սա իմ ուղտն է:


Յեվ արդեն տարասկոնյան արևի, մարդկանց անմեղ սուտ  
ասելու վարժեցնող այդ գեղեցիկ արևի ազդեցության տակ, նա  
ավելացրեց, շոյելով ուղտի սալատը:

— Ազնիվ կենդանի յե... սրա աչքի առաջ եր, վոր յե  
ապանել եմ իմ բոլոր առյուծներին:

Այդ ասելով նա լերջանկությունից յերեսը կարմրած հը-  
րամանատարի թեվը մտավ, և ուղտը յետևից, շրջապատված  
գլխարկի վորսորդներով, ժողովրդի կեցցենների մեջ— հանդարտ  
քայլերն ուղղեց դեպի Բաորաբի տնակը, և հենց ճանապարհին  
սկսեց իր նշանավոր վորսորդությունների պատմությունը:

— Յերևակայեցեք,— ասում էր նա,— մի յերեկո Սահա-  
րայի խորքերում...





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին դրվագ — Տարասկոնում

|   |    |
|---|----|
| Բողբաբի պարտեզը . . . . .   | 7  |
| Ընդհանուր ակնարկ յերջանիկ Տարասկոն քաղաքի վրա. դլխարկի վորսորդները . . . . .  | 9  |
| Վնչ, վնչ, վնչ: Յերջանիկ Տարասկոն քաղաքի վրա նետված ակնարկի շարունակութիւնը . . . . .                                  | 12 |
| Նրանք . . . . .   | 17 |
| Յերբ Տարտարենն ուղևորվում էր դէպի ակումբ . . . . .  | 21 |
| Յերկու Տարտարենները . . . . .   | 23 |
| Յեվրոպացիները Շանհայում: — Բարձր վաճառականութիւն: — Քաթարներ: — Միթէ Տարասկոնցի Տարտարենը խաբբա յե: — Միրաժ . . . . . | 26 |
| Միտենի գազանանոցը: — Ալաւայան լեռների աշուժը Տարասկոնում: — Անուլի և հանդիսաժոր տեսակցութիւն . . . . .                | 28 |
| Ուղևորութիւնից առաջ . . . . .   | 36 |
| Մով կովեցեք, պարոններ, սրով... և վոչ դնգասեղով . . . . .  | 37 |
| Այն մասին, թե ինչ խոսվեց բողբաբի տնակում . . . . .  | 40 |
| Ուղևորութիւն . . . . .  | 42 |
| Մարտիլի նավահանգիստը: — Նալ, դէպի նալ . . . . .   | 47 |

Յեկոտոգ դրվագ — Թուրքերի ափստում

|  |    |
|--|----|
| Մովի վրա: — Ֆեսի հինգ դիրքերը: — Յերբոբ սրվա յերեկոյան: — Ողնեցեք . . . . .                    | 53 |
| Ի դէն, դէն . . . . .   | 55 |
| Դիմում Սերվանտեսին: — Ժամանում: — Ո՞ւր են «թուրքեր», «թուրքեր» չկան: — Հիասթափութիւն . . . . . | 58 |
| Առաջին դարանակալութիւն . . . . .   | 60 |
| Բո՞ւմ-բո՞ւմ . . . . .  | 63 |

|  |    |
|--|----|
| Յգ առյուծի յերկալը: — Սարափեղի ճակատամարտ: — Ճագարների ժա-<br>մազբազայրը . . . . . | 66 |
| Հանրակազմի, մազբխտանուհու և հասմիկի փնջի պատմութիւնը . . . . .                     | 69 |
| Ատլաս լեռների առյուծներ, քնեցեք . . . . .  | 72 |
| Զերնոզորիայի Գրիգորի իշխանը . . . . .  | 73 |
| Դու ինձ սաս ջո հոր անունը, յես քեզ կասեմ այս ծաղկի անունը . . . . .                | 79 |
| Սիդի Տարտրի, բեն Տարտրի . . . . .  | 83 |

Յերոզդ դրվագ

|   |     |
|---|-----|
| Աքսորական դիլիժանսը . . . . .                             | 93  |
| Անցդոր փոքրիկ պարոնը . . . . .                            | 96  |
| Առյուծների վանքը . . . . .                                | 100 |
| Քարավանը ճանապարհին . . . . .                             | 102 |
| Գրիգորային դարանակալութիւնն դափնեկարդի անտառում . . . . . | 108 |
| Վերջապես . . . . .  | 113 |
| Աղեւ աղեւի յետեից . . . . .                               | 117 |
| Տարասկո՞ն. Տարասկո՞ն . . . . .                            | 120 |



1903.

219



545

50

K

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0006257

पान

A २५३४